



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84

3-89

ԷՐԿՄԱՆ ՀԱՏՐԻԱՆ

ԱՆՏԱՌԱՊԵՏ ՖՐԵԴԵՐԻԿ

Թարգմանեց

ԴԻԻՑ Ա. ԳԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

(Արտատպած Վալմար-ից)

ԹԻՖԼԻՍ

Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի

1903

84
5-89

447

84
5-89

20 APR 2006
19 NOV 2010

ԷՐԿՄԱՆ ՀԱՏՐԻԱՆ

ԱՆՏԱՌԱՊԵՏ ՖՐԵԴԵՐԻԿ

Թարգմանեց

ԳԻՒՏ Ա. ԴԱԶ. ԱՂԱՆԵԱՆՑ

(Արտատպած Հոմար-ից)

615

ԹԻՖԼԻՍ

Տպարան Տ. Մ. Ռոմինեանցի

1903

16.04.2013
MAY 16 1902

5994

իւր բազմախում

եւ շնորհալի ըժշկապետ

Գ. ՅԱԿՈՎԲ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Ա Դ Ա Մ Ե Ա Ն Ց Ի Ն

Доволено цензурою, Тифлисъ, 30-го Мая 1902 г.

Երախտագէտ սրտով




690
39

Լ խորին յարգանքով



ԽԱՉԱՏՐԵԱՆ



ԱՆՏԱՌԱՊԵՏ ՓՐԵԴԵՐԻԿ

(ԵՐԿՄԱՆ ՇԱՏՐՈՒՆԻ)

Ա.



Նստառապետի սպառնալիքն էր վարում Շտէյն-
րախում, — սկսեց ծերունի Ֆրեդէրիկը, —
իմ հսկողութեան էր չանձնուած ամբողջ
Սալերնեան շրջանի անստառների ամե-
նալաւ մասը: Ես մի լաւ տնակ ունէի,
պարտիզով պատած, ուր խնձորենիները,
տանձենիներն ու սալորիները աչնանն
աչնքան պտուղ էին տալիս, որ քիչ էր
մնում ծառերը ծանրութիւնից փշրտուէին. բացի այդ ես չորս
ղեսեատին էլ արօտատեղ ունէի ճիշտ գետի ափին: Անհա-
տառը, չնայելով իւր ութսունամեայ հասակին, դեռ էլի մա-
նում էր վառարանի վօտ նստած. և անգամ ել բեմն էլ օգ-
նում էր կնոջս ու աղջկանցս տնտեսական գործերում: Այնս
էլ նալում էր մեր գետնի մշակութեան և հսկում էր չանասուն-
ների վերայ: Տարիները, ամիսներն ու շաբաթներն անցնում
էին մեզ համար հանդարտ ու խաղաղ: Եթէ այն ժամանակ
գտնուէր մէկը, որ ինձ առէր, թէ. «Անստառապետ Ֆրեդէրիկ,
տեսնո՞ւմ է՞ք դուք Էլզասի այս ընդարձակ հովիտը մինչև հոյն
խիկ Ռէյնի եզերքը, այս հարիւրաւոր գիւղերը, չորոնք չըջա-
պատուած են վարսակի, կորեկի, կանեփի, վուշի, գալլուկի,
գարու, ծխախոտի ճոխ դաշտերով, որոնք ալեկոծւում են
հողմից ինչպէս ծով. տեսնո՞ւմ է՞ք գործարանների այդ բարձր
ծխող խողովակները, այդ ջրաղացներն ու սղոցարան-
ները, այգիներով ծածկուած բլուրները, հաճարի ու

եղևնու խիտ անտառները, որ նաւաշինութեան ամենալաւ նիւթն են տալիս ամբողջ Ֆրանսիայում, լեռների գագաթներին բարձրացող հին հին պալատները, այդ՝ դարերի շնորհիւ կիտաւեր ամրոցները—Բրէյլախ, Շլէտշտադ, Ֆալցբուրգ և այլն... Նայեցէք, Ֆրեդէրիկ, ալդպէս հեռու, ինչքան որ մարդկային աչքը կարող է կտրել, նայեցէք այդ բոլոր տաքածութեան վերայ Վէյսէնբուրգից մինչև Բէլֆոր—և իմացէք, որ այս բոլորը մի քանի տարուց չետոյ պրուսացիներին պիտի պատկանի. նոքա պիտի լինին այս ամենի տէրերը. այստեղ ամենուրեք հորիզոնը նոցանը կլինի. նոքա հարկերը կաւեցնեն, կուղարկեն իրանց հարկահանները, վերադննդները, անտառապետները և գիւղական վարժապետներն ամեն գիւղեր: Եւ այստեղի բնակիչները նոցա պիտի հպատակուին. նոքա ստիպուած պիտի լինին քալել գերմանական զօրքերում Վիլհէլմ կայսեր ենթասպաների հրամանատարութեան ներքոյ:

Այս ասողին ես խեղացնոր կհամարէի և զայրութից ընդունակ կլինէի մինչև անգամ ապտակ տալ նորան:

Բայց այսպիսի մի գուշակութիւն ճշմարիտ պիտի համարուէր, և մինչև անգամ շատ թուլ արտայայտուած ճշմարտութիւն, որովհետեւ մենք անհամեմատ աւելին տեսանք ու կրեցինք: Ինձ համար ամենից սարսափելին էր լեռները թողնել և իմ տարիքում տեղսփոխուել մի չարդազ, որտեղից միայն տանիքների կղմիւտներն ու ծխնելոյղներն էի տեսնում: Գլխիցս ցերեկ այդ սոսկալի աղէտի մասին մտածելով՝ ես ինձ զգացի լքուած երկնքից ու երկրից:

Աղուէսներն ու գալլերը, երբ նոցա թաթը վիրաւորում էք, վէրքը լիզում են և առողջացնում. նապաստակները, հէնց որ նոցա վիրաւորում են, խակոյն սատկում են, կամ թաղում թփերում և առողջանում. շներից որ լակտանքը խլեն, խեղճ անասունները մի քանի օր նիհարում են, ապա մոռանում են իրանց ցաւը—և ամեն ինչ կարգի է ընկնում: Բայց մենք ալդպէս հեշտ չենք կարող մոռանալ մեզ հանդիպած դժբաղդութիւնը. և որքան շատ ժամանակ է անցնում, այնքան աւելի ենք զգում:

Ինձ հարցնում ես, թէ ինչպէս ընկալ ես այս որջը՝ Վիլհելմ, և ինչպէս եմ ապրել մինչև այսօր. չեմ հրաժարուում պատասխանելուց: Վիլհելմում և Լաշապելում բոլոր հիւղելը

էի էին զաղթեցրած բանուորներով ու գիւղացիներով: Ես լքեցի, որ հարեւիք զաղթողների թիւը հասնում էր մինչև քառասուն հարիւր հազարի: Սա կարելի բան է: Երբ ես հարեւիքիցս դուրս ելայ, ամբողջ ճանապարհը զաղթականներով էի էր: Բայց այս ամենը քեզ այնպէս լաւ լատնի է, ինչպէս ինձ. ես կխօսեմ լոկ իմ մասին, և հէնց սկզբից կսկսեմ: Այսպէս առաւել պարզ կլինի:

Երբ պապը, զատարանի նախկին նախագահը, 1865 թուին բարձր պաշտօն ստացաւ և Բրէտայն գնաց, ես շատ ուրախ էի, որովհետեւ նա միանգամայն արժանի էր, նորա տեղը Սալերնան չէր, նա չափազանց լաւ և հմուտ մարդ էր. միւս կողմից նորա հեռանալն ինձ վշտացրեց:

Հայրս, որ առաջ անտառապետ էր Դոլէնհայմում, պ. նախագահի մասին ինձ հետ խօսելիս՝ միշտ առանձին խորհանքով էր խօսում, անդադար կրկնելով, որ նա մեր բարերարն է եղել և միշտ սիրել է մեր ընտանիքը. ինքս Շտէյնբախում նորա շնորհիւ եմ պաշտօն գտել. նորա խորհրդովն իսկ ծերունի անտառապետ Բրուատը իւր միակ դուստրը՝ Կատերին Բրուատին ինձ կնութեան տուաւ:

Երբ հաշուէտութեան համար Սալերն եմ գնացել, ամեն անգամ սիրով եմ նայել այն տան վերայ, ուր քսան տարի չարունակ ես սիրալիր ընդունելութիւն եմ վախելած. ալդ արժանաւոր մարդու բացակայութեան կսկիծը ծանրանում էր իմ սրտի վերայ:

Ես ու ընտանիքս սաստիկ վշտացած էինք նաեւ այն բանի համար, որ դու արձակուրդին ալ եւ չէիր գալու մեր անտառային տնակը: Մենք այնպէս սովոր էինք քեզ սպասել, որ վաղօրօք ասում էինք.

—Ահա սեպտեմբերն էլ մերձենում է, փոքրիկ Ժօրժը շուտով կգալ:

Կիսովերը անկողին էր պատրաստում. փռում էր ձիւնի պէս սպիտակ սաւան, լուանում էր չառակն ու լուսամուտները:

Ես թակարդներ էի պատրաստում մշահաւների և զանազան տեսակ կեր կարմրախաւերի համար. ուղղում էի մեր հիւղը թուխկատարներ որսալու, փորձում էի սուլիչները և նորերն էի չինում արծծից և ոսկորից: Կարգի էի դնում կարթերն ու պարանները մեր արկղներում, նախօրօք զուարճա-

նալով, որ այդ ամենը լաւ դրաղմունք պիտի լինին քեզ համար:

— Լսեցէք, Ֆրեդէրիկ հայրիկ, վաղն անշուշտ երկու ժամին դարձեցէք ինձ. դեռ չլուսացած պիտի գնանք:

Ես գիտէի, որ դու արջնամկան պէս կը քնես, մինչև որ չարթնացնեմ և ծոյլ չանուանեմ՝ չես վերկենալ, բայց երեկոյեան քնելիս դու դարձեալ պատրաստութիւն կը տեսնէիր երկուսին վերկենալ, անգամ մէջ գիշերին. — այս ամենը զուարճացնում էր ինձ:

Երեակալում էի, թէ ինչպէս դու, շունչդ պահած, նըստելու ես հիւղում, երբ կաղն-ագռաւներն ու մշահաւերը կ'մօտենան, տերեւների տակից դուրս նայելով, և ես որպէս թէ լըսում էի արդէն քո շշուէջը:

— Ահա, ահա եկան...

Եւ դու չէիր կարողանում քեզ պահել մինչև արշալուսին կ'թռչէին թուրկատարները:

Այո, Ժօրժ, այս ամենն ուրախացնում էր ինձ, և ես արձակուրդներին գուցէ նոյն անհամբերութեամբ էի սպասում, ինչպէս և դու:

Մեր փոքրիկ Վարդ-Մարին էլ ուրախանում էր քո դալու վերայ. նա շտապով նորանոր ցանցեր էր հիւսում և անցած տարիների կախումած կոճկատեղերը վեր քաշում. բայց հէնց որ պապդ գնաց՝ վերջացաւ, և մենք գիտէինք, որ չես գալ մեզ մօտ:

Երկու թէ երեք անգամ մեր լիմար Վալասը, որ կովեր էր արածացնում արօտում, ոտաւոր տեսնելով դէպի Դօզէն-հայմ իջնելիս, վաղեց մեզ մօտ, բերանը մինչև ականջները բացած և բոլոր ուժով աղաղակ բարձած:

— Նա է, նա, նա է որ կալ... անմիջապէս ճանաչեցի նորան... պալուսակն ուսին է ձգել...

Ռաբոն էլ հաջելով հետեւում էր այս ապուշին... Աս պատրաստ էի երկուսին ջարդել, որովհետեւ գիտէինք, որ դու Ռէնն ես գնացել: Պ. Նախագահը մեզ գրում էր, որ դու ամեն օր լիջում ես Շտէյնբախը. ես առանց աչի էլ վատ էի տրամադրուած, և Վալասի այս հնարած բանն էլ տեսնելով ինքս ինձ կորցրի:

Կինս ու Վարդ-Մարին, պտուղները պահարանի դարագներում դարսելով՝ ասում էին:

— Ի՞նչ հիւթալի տանձեր են... Ի՞նչ հրաշալի արքայախնձորներ... Երանի թէ Ժօրժը չեա դառնար, — ամբողջ օրը ալտեղ կ'ազդկէր...

Նոքա ժպտում էին արտասուալից աչքերով: Քանի՞ քանի անգամ ևս ինքս, որսից չեա դառնալով, ասել եմ:

— Ահա... տասը. տասնըհինգ տասնեակներ կան ալտեղ... Ի՞նչ գլխներն ենք տալիս սոցա: Երեխայ՝ չկան... գոնէ կատուններին տանք. Ես ուտողը չեմ:

Հաւատա՛, Ժօրժ, ես սիրում էի որսի գնալ քեզ համար, ինքս երբէք չէի ակորովում ոչ թուրկատարներից և ոչ իսկ մշահաւերից: Ես միշտ գերադասել եմ մի լաւ կտոր միս և երբեմն միայն կերակրի տեսակը փոխելու համար՝ որսի միս եմ կերել:

Բ.

Չմեռուալ մէջերքում, երբ լեռների բոլոր ճանապարհներն ու շաւիղները ձիւնով էին ծածկուած, երբ գիշերները ամեն կողմից լսում էր եղեամով ծածկուած եղէնիների ճաթթիւնը, մի անգամ կինս, որ ճմեռուալ հէնց սկզբից գունատ և լուռ էր, երեկոյեան վեց ժամի մօտերքը վառարանի կրակը վառելիս ասաց ինձ:

— Ֆրեդէրիկ, ես պարկում եմ, վատ եմ զգում ինձ... չգողացնում եմ:

Այդպիսի բան նա երբէք չէր ասել ինձ: Այդ կնոջից ես ոչ մի գանգաւ չէի լսած. երիտասարդութեան օրերում նա տնտեսութիւն էր անում և երկուքից աղատուելու մինչև վերջին օրն էլ աշխատում էր:

Եւ, առանց որեւէ բան կասկածելու, պատասխանեցի:

— Շատ մի շարժարուիր, Կատէրին... Չափազանց շատ ես աշխատում, հանդիստ առ մի փոքր. ընթրիքը Վարդ-Մարին կը պատրաստէ:

Եւ մտածեցի. քսան տարին մի անգամ — մեծ բան չէ. թող մի փոքր հանգստանալ:

Վարդ-Մարին ամանով ջուր տաքացրեց, որ նորա ոտները մէջը դարսէ, և մենք հանգիստ ընթրեցինք, սովորականի պէս, գետնախնձորով և լոռով: Ոչ մի արտակարգ միտք անցաւ մեր գլխով. իննը ժամին մօտ, ծխամորչս քաշելով,

գնացի քնելու, երբ մահճակալիս մօտեցայ՝ կնոջս բամբակե պէս սպիտակ տեսայ, լայն բացած աչքերով: Ես ձայն տուի նորան.

— Կատէրին:

Նա չշարժուեց: Ես կրկնեցի.

— Կատէրին. — և ձեռքը շարժեցի: Զեռքը բոլորովին սառն էր:

Քաջարի կինս վերջին անգամ էր քնել. նա երկար էր տանջուել, առանց որևէ գանգատ արտասանելու:

Ես սթափուեցի: Խեղճ Վարդ-Մարին զրկուել էր մօրից: Սիրտս պալթում էր այդ մտածումից. ինձ թուում էր, թէ այս հարուածից երբէք չէի ուշքի գալու:

Պառաւ տատը նիրհում էր բազկաթռուի մէջ. այժմ նա էլ աչքը բաց արեց: Վարդ-Մարին բարձր ձայնով հեկեկում էր և հառաչում, և Կալասն անգամ, այն խեղճ ապուշը, մրթմրթում էր.

Ա՛խ, երանի՛ թէ ես մեռնէի դորա փոխարէն...

Մենք հեռու անտառումն ենք ապրում, և ստիպուած եղանք խեղճ կնոջս խորը ձեան վերայով տանել թաղել Դօզէնհայմում: Դագաղը դրինք սալի վերայ, մենք էլ ետևից. Վարդ-Մարին այնպէս էր լաց լինում, որ ես ամեն քայլում ստիպուած էի սիրտ տալ նորան: Բարեբաղտաբար տատը մեզ հետ չեկաւ, ալլ նստած աղօթում էր հանգուցեալի համար:

Ուշ գիշերով լետ դարձանք: Կատերինը մնաց աչնտեղ ձիւնի տակ իւր հարազատների, մօտ, որոնք հանդստանում էին Դօզէնհայմի գերեզմանատանը եկեղեցու ետև. նա այնտեղ մնաց. իսկ ես մտածում էի.

«Ի՞նչ պէտք է լինի մեր տան զրութիւնը: Դու հօ էլ պաակուողը չես, Ֆրեդերիկ: Դու մի լաւ կին ունէիր. ով կերաշխաւորէ, որ երկրորդը ամենավատ և չափ կինը չէ լինելու ամբողջ թաղի մէջ...: Երբէք չես կարող մի ալլ արժանաւոր կին գտնել քեզ համար: Պէտք է մենակ ապրես»: Բայց քնչ պէտք է անել... Ով պէտք է հոգալ ամենքի մասին: Տատը շատ պա՛աւ. է, իսկ Վարդ-Մարին տակաւին երեխայ հօ:

Ես լուսահատուած էի, մեր բոլոր բարիքները պիտի ունշանային, և մեր այսքան տարուայ խնայողութեամբ աշխատածը օրէցօր պիտի անհետանար:

Բայց իմ փոքրիկ Վարդ-Մարին դառաւ ինձ համար կա-

տարեալ մի դանձ, մի մանուկ կատարեալ ալրականութեամբ և առողջ մտքով չէնց որ մօրը թաղեցինք, նա սկսաւ նորա պարտաւորութիւնները կատարել, հսկելով դաշտի աշխատանքին, անասունին և տնտեսութեանը և պատուէրներ տալով Կալասին: Խեղճ փոքրիկը ականջ էր դնում նորան. իւր պարզութեան մէջ հասկանում էր, որ նա է այժմ իւր տիրուհին:

Ահա այս է աշխարհիս կեանքը:

Սէս տեսաի վիշտ կրելով, մտածումես, թէ առաւել վատ բան քեզ պատահել չէ կարող, բայց դա միայն սկիզբն էր, և երբ ես այդ լիշտ եմ, ինձ թուում է, թէ մեզ համար ամենամեծ բաղտաւորութիւնն այն կլինէր, որ այն ժամանակ մենք ի միասին մեռնէինք:

Գ.

Ուրախութիւններս մէկը միւսի ետևից անհետացան:

Այն հին տունը, որի արևի տակ փալլող մանր լուսամուտներն ու եղենիների մէջ ծխող ծխնելոզները լոկ հեռուից տեսնելը չրճուանք էր պատճառում ինձ, այժմ մօալլ ու ա մալի էր թւում. Զմեռը մի տխուր երկար էր թւում: Վառարանում պալծառ վառուող կրակը սառնամանիքի ժամանակ երբեմն ճաշակով գեղանկարում էր մեր լուսամուտները և երբ հոլտում խաղաղութիւն էր տիրում, այդ կրակը, որի մօտ նստած ծխամորչս բերանին, մտածում էի զանազան բաների մասին, այժմ միայն մտքեր էր ներշնչում ինձ: Խանձափալտերը տխուր ճալթիւններ էին արձակում. Ռագօն կարծէր անկիւններում ում-որ որոնում էր: Կալասը լուռ ու մունջ կողովներ էր հիւսում, ոստերի կոյտը առաջին. Աննա տատը տէր-ողորմեան էր համրում. Վարդ-Մարին, գունատ, սեազգետ, տուն ու դուրս էր անում, ամեն բանի նայում և անշշուկ ամեն ինչ կատարում, այնպէս՝ ինչպէս իւր հանգուցեալ մայրը:

Ես սովորաբար նստած էի գլխակոր և նոյնպէս լուռ. երբ մահը վրայ է հասնում մէկին, էլ ոչ մի տրտունջ օգուտ չունի:

Այն, այդ ձմեռը շատ երկար էր թւում մեզ:

Մակայն ինչպէս միշտ՝ այս անգամ էլ զարուհը եկաւ: Հաճարի ծառերը պտուկները վեր թողին. լուսամուտները բաց-

ուեցան և մեր տան առաջի տանձենին սպիտակ ծաղիկներով ծածկուեց. թռչուններն սկսան երգել, միմեանց հետապնդել, սկսեցին բայներ շինել, կարծէք թէ մի առանձին բան չէր պատահել:

Ես սկսալ նախկին աշխատանքս, ուղեկցելով գլխաւոր վերահսկող պ. Ռամօին իւր շրջագայութիւններին, անտառին նայելով և հետեւելով փայտ կտրելուն: Մենք առաւօտը վաղ դուրս էինք գնում և շատ ուշ տուն դառնում:

Վիշաք ամենուրեք հետեւում էր ինձ, բայց ես էլ միութարութիւն էի գտնում Վարդ-Մարիով, որ զարմանալի կերպով աճում էր ու լաւանում:

Մի կարծիր, Ժորժ, թէ ես որպէս հայր գովում եմ նորան: Ի դուր կորոնէիք Սալերնից մինչև Լիւտցէլտէն բոլոր հովիտներում ու անտառներում նորանից բարեկազմ ու գեղեցիկ օրիորդ, ախպիսի գեղեցիկ կապուտ աչեր և լուսաթաթախ հրաշալի գլուխ: Եւ ինչպէս լաւ գիտէր նա տանու և ալլ ամեն աշխատանքները... Այո, կարող եմ ասել, որ մի հրաշալի արարած էր, քնքուշ և պարթև:

Երբ ես ուշ գիշերով տուն էի դառնում, նա ընդ առաջում էր ինձ և դէմ էր անում իւր վարդ կարմիր թշերը, և ես շատ անգամ մտածում էի.

«Վարդ-Մարին աւելի գեղեցիկ է քան իւր մայրն այդ հասակում, և նոյնչափ խոհեմ, ինչքան նա. մի տրտնջաւ, Զրեղէրիկ, դժբաղտութիւնիցդ. շատերը կնախանձէին, որ այս զիւրի դուստր ունիս, որ քիչ ալսչափ միութարութիւն և ուրախութիւն է պատճառում:

Երբ լիշում էի կնոջս՝ արտասուք էի թափում աչերից և սոււմ էի.

Եթէ Կատարինը կարողանար Վարդ-Մարին տեսնել, ինչքան երջանիկ կլինէի:

Այդ ժամանակները ես մտաբերեցի, որ պաշտօնս թողնելու ժամանակը սօսեցում է, իսկ երբ Վարդ-Մարին տառնեալութիւն տարին մտաւ, ես արդէն սկսեցի մտածել, որ լաւ կը լինէր նորա համար մի բարի ու ազնիւ ամուսին գտնել, անտառալին մասում ծառայող մի երիտասարդ, որի տանը ես խաղաղութեամբ կնքէի իմ մահկանացուն, որդոցս ու թոռներին մէջ, և որը իմ տեղս բռնելով աչնպէս չարգէր ինձ, ինչպէս որ ես չարգում էի կնոջս հօրը՝ ծերունի Բրուատին, քսան

տարի առաջ նորան փոխարինելով ալստեղ:

Ես աչքիս առաջ ունէի Թէլսբէրգից մի բարձրահասակ և գեղեցիկ տղամարդ որ չորս թէ հինգ տարի առաջ թողել էր հրաձիգ գունդը և անտառապահ էր նշանակուել մեղանից ոչ հեռու, Տօմենթալում:

Նորա անունն էր Ժան Մէրլէն. նա ծանօթացել էր արդէն Լեռնալին գործին Էլզասի Էգիսլայմում պարտպելիս: Այս երիտասարդը ինձ դիւր էր գալիս իւր լաւ բնաւորութեամբ և դարձեալ նորանով, որ Վարդ-Մարին բաւական բարեհաճ էր դէպի նա: Ես նկատում էի, որ սա թեթեւ կերպով կարմրում էր ամեն անգամ, երբ նա գալիս էր հաշիւ տալու իսկ նա գալիս էր միշտ տնք հայնուած, խնամքով սանրուած, և իւր որսորդական եղջիւրով գլխալիւր զարգարած գիւր ոստիկով. նորա հաստ ձայնը քնքշանում էր, երբ արտասանում էր այս խօսքերը.

Բարեւ, օրիորդ Վարդ-Մարի. ինչպէս էք: Ինչ գեղեցիկ եղանակ է... Ինչ պարզ օր. և ալլիս: Նա կարծես չուզուած էր. Վարդ-Մարին ամօթխածութեամբ էր պատասխանում նորա ողջունին: Բոլորովին պարզ էր, որ նորա սիրում էին և սիրահարուած էին մէկ մէկու վերայ—մի շատ բնական բան նոցա տարիքում:

Ես այս բանի մէջ ոչինչ վատ բան չէի տեսնում. ընդհակառակն, ես մտածում էի.

«Երբ նա գալ ամուսնութեան առաջարկութիւն անելու, ես միանգամից ոչ հա կասեմ և ոչ էլ չէ. պէտք չէ ցոյց տալ, որ կարծես թէ վրայ ես պրծնում մարդկանց. բայց չեմ ոչ, — ցոյց տալով որ զգացուած ես նորա խնդրից, — համաձայնութիւնս կտամ, որովհետեւ ջանքերն չուսահատութեան չը պէտք է հասցնել:

Ժան Մէրլէնի հայրը լիսնապետ էր հետեակ գնդերից մէկում, իսկ նորա հօրեղբայր Գանիէլ Մէրլէնը դպրոցական վարժապետ էր: Թէպէտ և նորա մայրը իւր ամուսնու հետ կենում էր մի փոքրիկ տանը անտառում, բայց նա Թէլսբէրգում իւր լեփակաւ տունը ունէր պարտիզով և հինգ վեց դեսեալին լաւ գետնով. դորանից լաւ ընկեր ամեն կողմից ես չէի կարող ցանկալ դատերս համար:

Ամեն ինչ ցանկացածիս պէս եղաւ: Գրեթէ ամեն երեկոյ արեամտի հետ շրջագայութիւնս աւարտելով, երբ խաղա-

դուրսին է տիրում անտառի ստուերներում,—խաղաղութիւն, որ հազիւ խանգարում է փոքրիկ գետակի խոխովում,—ես տուն էի դառնում և այդ սիրելի անկիւնում մտածելով որդւոցս կեանքի, թողնուկներս, այդ մանրիկ արարածների լոյս աշխարհ գալու մասին, որոնց կտանէինք կնքելու 'Ծօղէնհամի' հին եկեղեցին,—ես ակամայ ասում էի ինքս ինձ.

«Այն, այս ցնորքները կիրականանան... երբ դու ծերանաս, Թրեգէրիկ, բոլորովին կզառամես, երբ մէջքդ կկռանայ տարիքիդ ծանրութեան ներքոյ, ինչպէս Աննա տատի մէջքն է, գլուխդ կսպիտակի, և կուղեորուիս նախահայրերիդ մօտ, բաւական ապրած և երիտասարդ զոյգին օրհնելով, քո մահից լեռն էրկար, շատ երկար ժամանակ Ժան Մէրլէնն ու Վարդ-Մարին կմտաբերեն քեզ»:

Մօտենալով այն շաւղին, որ անցնում էր Ժանի անտառի տան վերելից, ցած նայեցի տանիքին, ցանկապատած պարտիզին և բակին, ուր Ժանի մայրը գիշերները հաւատուն էր ածում իւր հաւերն ու բաղերը, վասն զի մեզ մօտ անտառում աղուէսներն անպակաս են: Նայեցի վերելից և զխարկս հանելով՝ ձայն տուի.

—Բարի երեկոյ, Մարգրեդէլ:

Նա գլուխը վեր բարձրացրեց և ուրախ աղաղակեց.

—Բարեւ, անտառապետ: Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը:

—Շնորհակալ եմ, Մարգրեդէլ. փառք Աստուծոյ, շատ լաւ է գնում գործերս:

Նա մացառների միջից ցած գնացի նորա մօտ և մենք սեղմեցինք միմեանց ձեռները:

Մի պատուական կլինէր, միշտ բարի և ուրախ: Առանց բացուելու՝ երկուսս էլ լաւ գիտէինք թէ ամեն մէկս ինչ էր մտածում: Մենք զոհ էինք եղանակի լաւութեան կամ վատութեան մասին խօսելով, իսկ մնացածն արդէն ինքն ըստ ինքեան հասկացում էր:

Մի քիչ խօսեցինք ու գնացի: Մարգրեդէլը ետելցոյց ձայն տուեց իւր փոքր ինչ ջախջախուած ձայնով, վասն զի արդէն վաթսուց տարուան մօտ էր.

—Բարի ճանապարհ, անտառապետ: Չմոռանաք ողջունել ինչ օրիորդ Վարդ-Մարին և տատին:

—Ապահով եղէք, չեմ մոռանալ:

Պատահում էր, որ շրջագալութիւնս հինգ ժամից առաջ

էի աւարտում և հանդիպում էի Ժան Մէրլէնին, որ քարշ էր գալիս մեր տան մօտ: Վարդ-Մարին, բանջար ժողովելով պարտիզում, ուրախ խօսակցում էր նորա հետ ցանկապատից:

Նորոգութեան իմ մէջ լիչողութիւններ հին հին դարերից, երբ ես հաճոյախօսում էի Վատէրինին. զի միջից անշշուռն անցնելով, ծածուկ մօտենում էի ջահիլներին և քսան քալաւջափ հեռուից գոչում.

—Ուրեմն, Ժան Մէրլէն, ձեր ծառայական պարտաւորութիւններն էք կատարում: Դուք հաճոյախօսութիւններ էք անում դեռատի օրիորդների հետ:

Նա դարձնում էր դէպ ինձ իւր վիրաւորուած գէմքը և պատասխանում.

—Ներեցէք, պ. անտառապետ, ես եկալ պաշտօնիս վերաբերեալ գործով և մինչ դուք այստեղ չէիք՝ օրիորդ Վարդ-Մարին հետ էի խօսում:

—Լաւ, լաւ... տեսնում ենք: Նա այնքան էլ չեմ հաւատում աղուէսներին:

Եւ սկսում էինք կատակել և ուրախանալ:

Տեսնում ես, Ժորժ, կարծես թէ բաղադր վերադառնում էր դէպի մեզ:

Նա Ժան Մէրլէնին նույնքան էի հաւատ ընծայում, ինչքան և Վարդ-Մարին և ինձ: Կեղծ մարդիկ չկան մեր հայրենիքում, դժբա ուրիշ երկրներից են գալիս մեզ մօտ:

Դ

Գործերն այդ վիճակում մնացին ամբողջ 1868 թուի ընթացքում. Ժան Մէրլէնը շարունակ առիթ էր որոնում մեղ մօտ լինելու ծառայութեան գործով կամ դիմում էր մեղ ընտանեկան գործերի մասին խորհուրդներ հարցնելու: Նա մի բանից էր վախենում, որ ես չմերժեմ Վարդ-Մարին տալ նորան: Երբեմն, ինձ հետ շրջագալելով, նա գլուխը կախ էր գցում և խորը մտածմունքի մէջ ընկնում, երբեմն սկսում էր խօսել և լանկարծ լռում:

Իմ կողմից ես ցանկանում էի, որ նա աւելի համարձակ լինէր, բայց ինքս չէի կարողանում խօսք բաց անել, որովհետեւ իբրեւ իշխանաւորի՝ անվախ էր ինձ. և սպասում էի որ նա պաշտօնապէս առաջարկէ, ենթադրելով, որ նա գործին

վախճան կտալ կամ գրաւոր դիմումով և կամ իւր ազգականներին մէկին կուգարիկէ ինձ հետ խօսելու. նա կարող էր ուղարկել օրինակ իւր հօրեղբայր Գանիէլ Մէրլէնին, Ֆէլքէրգի գպրոցական վարժապետին, որ ամենից լարգուած մարդ էր և կարող էր իւր վերալ առնել մի աղպլտի փափուկ չանձնարարութիւն:

Ինձ վերաբերեալ մտքեր էլ էին անցնում գլխովս: Ինչպէս, աշխարհիս երեսին ամեն բանից աւելի դատերս երջանկութիւնն էի ցանկանում, բայց պէտք էր այնպէս սարքել, որ ամենքի համար լաւ լինէր: Մինչև պաշտօնիս լրանալը երկու տարի էլ էր մնացել. եթէ մինչև այդ ժամանակ փեսաս չնշանակուէր իմ տղը, ես ստիպուած կլինէի այս հին տանից հեռանալ, որի հետ այդքան թանկագին և տխուր լիջատակներ էին կապուած, վերաբերութեամբ ծեր Բրուտտի, խեղճ կնոջ, Աննա տատի, — միով բանիւ, ամբողջ անցկացրած կեանքիս լիջատակներ. դժուար էր այս ամենը թողնել մի անշարտ կեանքի համար ուրիշ երկրում, բոլորովին օտար մարդկանց մէջ:

Այս մտածմունքը լուսահատութիւն էր բերում ինձ վերայ. ես գիտէի, որ Վարդ-Մարին և Ժան Մէրլէնը միշտ կլարգեն ինձ ինչպէս իրանց հօր. Բայց սովորութիւնը երկրորդ բնութիւն է. ծեր աղուէսներն ու նապաստակներն անգամ, վերադարձելով իրանց բների ու որջերի մօտերքում, միշտ վերադառնում են այնտեղ, նորա պահանջ են դրում մահից առաջ տեսնել այն թուփն ու խոտը, ուր իրանց ջահիլութիւնն է անցել, ուր նորա զգացել են սէր, հոգս ու վիշտ, որով համակուած է աշխարհիս բոլոր արարածների երեք չորրորդ մասի գոլութիւնը, տխուր լիջողութիւնները նոյնքան է մարդ գնահատում, ինչպէս և անցած բաղտաւորութիւնը: Այդ միջոցին ես աւելի մեծ դժբաղտութիւն չէի կարող ինձ երեւակայել, քան եթէ մեր լեռները թողնել և տեղափոխուել հեռու այն ամենից, որի հետ ես այնքան կապուած էի:

Պ. Նախագահի մեկնելուց լետոյ ես չգիտէի, թէ ումից կարող էի բարի խորհուրդ հարցնել — ինչպէս չարմարեցնէի Վարդ-Մարիի պատկը մինչև պաշտօնիցս դուրս գալը. այս բանը շարունակ վրդովում էր ինձ, բայց պատահաբար հանգամանքները խիստ բարեկամող ընթացք ստացան:

Ե.

Պէտք է քեզ ասեմ, — շարունակեց Ֆրեդէրիկն իւր զրոյցը Ժորժին, — որ 1867, 1868 և 1869 թուերի ընթացքում մեզնից զանազան ուղղութեամբ գետիններ կտրտեցին և ճանապարհներ բացին երկաթուղուն փայտեղէն հասցնելու համար. Այս մեծ աշխատանքները կառավարում էր Լիւտցելշտէյնի անտառային տեսուչ պ. Լարօշը: Դա մի 55 տարեկան մարդ էր, տակաւին միանգամայն առողջ ու թարմ, շատ լուրջ և իր գործին նուիրուած. որս և ձկնորսութիւն նորան զիւր չէին գալիս. նորա հետ լաւ լարաբերութիւն ունենալու համար կարիք չկար ճարտար հրաձիգ կամ լաւ ձկնորս լինելու, այլ պէտք էր միայն ճշտիւ կատարել պաշտօնի պարտաւորութիւնները:

Շատ անգամ նա անձամբ էր զեկավարում աշխատողներին, ցոյց տալով թէ ուր պէտք էր ծառեր կտրտել կամ հող ածել. Նորա բոլոր տնօրինութիւնները պարզ էին և որոշ, և գործը առաջ էր գնում փառաւոր կերպով:

Նա ինքը իւր արժանիքը գիտէր և գիտէր ստորագրեալին փափալել, երբ գոհ էր մնում նոցանից: Դէպ ինձ նա միշտ ուշադիր էր և սովորաբար իմ զեկուցումը լսելով իւր առանձնարանում Լիւտցելշտէյնի մէջ, միշտ ասում էր.

— Շատ լաւ է... շատ լաւ է, անտառապետ. — և սղմում էր իմ ձեռքը:

1869 թուի դարձան հրաման եկաւ այն ճանապարհը քարելու, որ Պըտի-Պիերից իջնում էր մինչև Գրաուֆտալ հովիտը, և շարունակել որ միանալ Սալերնից Վէտտինգ նոր ճանապարհի հետ: Այս ճանապարհի մի ձիւղը անցնում էր սըղոցարանի մօտից, իմ անտառի տնից ոչ հեռու, այնպէս որ ես գրեթէ ամեն օր կարող էի անձամբ հսկել աշխատութիւններին: Աշխատանքի առաջին մասը գրեթէ աւարտուեց, և մեզ մնում էր միայն մի քանի ժալուր քանդել, որոնք դուրս էին ցցուած հովտի մէջ, ճանապարհի հարթելու համար:

Մի անգամ, ըստ սովորականին Լիւտցելշտէյնի գաղով զեկուցման համար, ես առանձին սիրով ընդունուեցաւ պ. տեսչից: Առաւօտուայ տասը ժամի մօտ էր, — նորա նախաձաշի ժամանակը, և նա տուն դարձաւ հէնց որ ես նորա տան դրան դանգը քաշեցի:

—Ա՛խ, դուք էք, Ֆրեդէրիկ հալրիկ, — ասաց նա ուրախացած, դուք բանալով: — Փառաւոր առաւօտ է: Գործերն ինչ զիճակի են:

— Ձեր բոլոր պատուէրները ճշտիւ կատարուած են, տետուէ, և ամեն ինչ ցանկացածից լաւ է ընթանում:

— Լաւ, լաւ, ասաց նա: — Նստեցէք խնդրեմ, խօսելու բան ունիմ: Ինձ հետ կճաշէք: Կինս իւր ազգականների մօտ է Շամպայնում, ընկերացէք ինձ:

Յաճախ, երբ պատահել էմ նորա մօտ նախաճաշի ժամանակ, ինձ մի բաժակ գինի է առաջարկել, բայց երբէք մտքով չի անցկացրել իր հետ սեղան նստեցնել ինձ:

— Այստեղ նստեցէք, ասաց նա: — Է՛լ, Վիրթինի, ամաններ բերէք անտառապետի համար: Նախաճաշն էլ բերէք:]

Մտածիր թէ ինչպէս զարմացել էի ես և դո՛հ այս պատուից: Չգիտէի թէ ինչպէս շնորհակալ լինիմ. բայց նա, կարծես, չնկատեց յուզմունքս: Նա տանու բաձկոնը հագաւ և սեղան նստելով՝ հարցրեց ինձ.

— Լաւ ավորժակ ունիք, Ֆրեդէրիկ:

— Այո՛, պ. տետուէ, այդ կողմից դանդաղ չաւնիմ:

— Շատ գեղեցիկ ուրեմն, աւելի լաւ: Այս բիւֆէտէքսից փորձեցէք: Վիրթինին լաւ խոհարարուհի է, — ձեր կարծիքը ասէք նորա հմուտութեան մասին: Ձեր կենաց:

— Եւ ձեր, պ. տետուէ:

Կարծես երազումն էի և հարցնում էի ինքս ինձ.

«Այդ դեռ ես, Ֆրեդէրիկ, այս գեղեցիկ սենեակում նախաճաշում, քո իշխանաւորի հետ սեղանակից, և այսպիսի պատուական գինի խմում:

Ինձ համար շատ էլ դիւրին չէր:

Պ. Լարօշն, ընդհակառակն, աւելի էր բացւում, այնպէս որ երկու երեք բաժակ գինուց լիտոյ ինձ արդէն շատ բնական թուաց, որ իւր կնոջ բացակայութեամբ նա շատ դո՛հ էր խօսելու ինձ հետ կարգերի, Գրառաքտալի նոր ճանապարհի և այլ նիւթերի մասին, և ես սկսեցի պատասխանել առանց քաշուելու:

Ենք շարունակեցինք նախաճաշը, խօսակցելով, և երբ Վիրթինին մօտ բերեց բիսկվիտն ու պանիրը, տետուէ թեքուելով աթոռի մէջքին և ուրախութեամբ նայելով ինձ՝ ասաց.

— Սակայն մեր տարիքում դուրեկան բան է այն դրուժիւնը, որի մէջ որ ես ու դու եմք... Հա՛, հա՛, հա՛: Կարծեմ ձեր բոլոր ատամները դեռ առողջ են, Ֆրեդէրիկ:

— Այո՛, դեռ բաւական ամուր են, պ. տետուէ:

— Քանի տարեկան էք, — հարցրեց նա:

— Շուտով լիսունը կլրանամ, պ. տետուէ:

— Իսկ ես լիսունեմ ինչ եմ: Համարեմ թէ երկուսն էլ մէկ է. մեր պաշտօնաթողը շատ էլ հեռու չէ:

Նա շարունակ ծիծաղում էր: Բայց պաշտօն թողնելու մասին մտածմունքը իմ բոլոր աշխույժս խլեց:

Պանիր հրամցնելով ինձ՝ պ. Լարօշը հարցրեց.

— Ի՞նչ էք մտադիր անել երկու տարուց լիտ: Ինձ կինս իւր հայրենիքն է տանում, Շամպայն: Դա շատ էլ իմ սրտովը չէ, որովհետեւ ես դաշտ տեղ չեմ սիրում. բայց գիտէք ինչ որ կինն է ուզում, Աստուած էլ այն է ուզում: Սա մի առած է, բայց առածները դուրի չեն մի մի առողջ մտքից:

— Ճշմարիտ է, պ. տետուէ, — պատասխանեցի ես, — բայց դա շատ վաղ առած է. իսկ ես չեմ կարող լեռները թողնել. չափազանց սովորել եմ ես նոցա, և եթէ ստիպուիմ այստեղից դռնալ, տասն և հինգ օր էլ չեմ դիմանալ:

— Ի՞նչ կարող եմք անել, — նկատեց նա. — մենք, ծերերս պէտք է տեղի տանք երիտասարդներին:

Ձնայելով որ լաւ խմել էի, բայց չափազանց սրտնեղած էի.

— Ես որ ձեր տեղը լինիմ, Ֆրեդէրիկ, — ասաց տետուէ, — գիտէք ինչ կանեմ: Որովհետեւ չափազանց սիրում էք լեռները և ձեզ համար միտք չունի անտառում չապրելը, — մի այնպիսի փեսայ կգտնէի, որ լեռնային բաժնում ծառայէր, մի խելացի ջահիլ որ ձեր տեղը բռնէր և որի մօտ ապրէիք մինչև ձեր կեանքի վերջը, կանաչ մեխակների ու մայրիկների բուրմունքի մէջ:

— Ա՛խ, ես էլ հէնց այդ մասին եմ մտածում, պ. տետուէ, բայց...

— Ել ինչ «բայց»... Լաւ աղջիկ ունիք, ինքներդ աղնիւ մարդ էք, — էլ ինչ դժուարութիւն կալ: Յոյս ունիմ, որ ընտրելի պակասութիւն էլ չլինի. անտառային պահապաններից գեղեցիկ կէտնը, Գօնատիկն ու թէ ուրիշները բաղտաւոր կհամարեն իրանց, որ ձեզ փեսայ լինելու արժանի լինին: Իսկ քաջարի

Ժան Մէրլէնը... ահա մի օրինակելի անտառային պահապան-
չիտակ, գործունեալ, խելացի. խսկ և իսկ լարմար փենացու-
Ամենից առաջ նա պիտի բարձր պաշտօն ստանայ և իմ կար-
ծիքով, նա ամեն լատկութիւնները ունի ձեր պաշտօնին հաս-
նելու:

Ես մինչև ականջներս կարմրեցի և չկարողանալով ինձ
զնայել՝ պատասխան տուի.

— Բոլորովին ճշմարիտ էք ասում. Ժան Մէրլէնի մասին
ոչ ոք վատ չի կարող ասել. դժուար կ'պատահի աղապիսի գե-
ղեղիկ և աղնիւ երկտասարդ. բայց ինքս կարող չեմ իմ դու-
տրն առաջարկել նորան, ով հաճելի է ինձ. Մէրլէնը երբեք
ինձ հետ չէ խօսել Վարդ-Մարիի հետ ամուսնանալու մասին,
ոչ նորա մայր Մարգրէդէլը, ոչ էլ հօրեղբայր Դանիէլը, ոչ
ոք նոցանից: Դուք շատ լաւ հասկանում էք, պ. տեսուչ, որ ես
չեմ կարող առաջին քայլն անել այս խնդրում, — այդ արդէն
չափազանց վստահութիւն կ'լինէր: Ամեն բան ահապէս պիտի
կատարուի ինչպէս հարկն է. առաջարկութիւնը պէտք է լինի
պաշտօնագէտ փեսայի կողմից:

Նա ուղեղաւ պատասխան տալ ինձ, բայց Վիրժինին
սուրճ բերեց, և նա վառարանից մի տուփ վերցնելով և ինձ
տալով՝ ասաց.

— Ծխեցէք խնդրեմ, Ֆրեդէրիկ:

Ես տեսալ, որ նա մի բանից շատ գոհ էր. և ճէնց որ
սպասուհին դուրս գնաց, ցնծագին ազադակեց.

— Ուրեմն, Ֆրեդէրիկ, ձեզ պէտք է լստնեմ, որ Ժան Մէր-
լէնն ու Վարդ-Մարին միմեանց սիրում են: Մնում է, որ հօր-
եղբայր Դանիէլը հագնի իւր տօն օրուալ հանգերն ու մա-
շիկներն ու գալ ձեզ հետ խօսակցելու այդ մասին:

Նա բարձր ձայն ծիծաղեց և տեսնելով, որ ես շատ զար-
մացած եմ, շարունակեց.

— Ես ձեզ երկու խօսքով կ'պատմեմ ամբողջ գործը. վեր-
ջին անգամ, երբ ես տեսալ Ժան Մէրլէնին, նա ահապէս ալ-
խուր էր, որ ես հարցրի, թէ հիւանդ հօ չէ: Խեղճ տղան ար-
տասուալից աչքով պատմեց իւր վիշտը: Դուք ահապիսի մի
խիստ և պատկառելի տեսք ունիք, որ նոցա տանից
ոչ ոք չէ համարձակում ձեզ մօտենալ. և այդ բարի մարդիկ
ինձ զիմեցին, ենթադրելով, թէ ես կարող եմ ազդել ձեզ վե-
րալ: Չէք թող տալ ինձ ես համագգեստ հագնել, Ֆրեդէրիկ:

Նա ահապէս ուրախ էր, որ ես չհանելով բոլոր լուզմուն-
քիս, պատասխանեցի.

— Օհ, չէ, պ. տեսուչ, աղապէս էլ լաւ է:

— Համաձայն էք:

— Ինչպէս թէ համաձայն: Իմ ցանկութիւնս հէնց այդ
էր... Այն .. այն... համաձայն եմ և չնորհակալ եմ ձեզնից:
Կարող էք հաւատացած լինել, պ. Լարօշ, որ աչսօր դուք
Ֆրեդէրիկին ամենաերջանիկ մարդը դարձրիք աշխարհում:

Ես աթուղի վերկացալ և աչն է ուղում էի պարկս ու-
սիցս կախել, երբ ներս մտաւ վերահսկող պ. Ռամօն պաշտօ-
նական դործով:

— Վնում էք, Ֆրեդէրիկ, — ասաց պ. տեսուչը. — չէք կա-
մենում ձեր գաւաթ սուրճը դատարկել:

— Այն, պ. Լարօշ, — պատասխանեցի, — ես շատ բաղտա-
ւոր կ'լինէի, որ նստէի... բայց երեխալքս սպասում են...
պէտք է լաւ նորութիւնը նոցա հաղորդել:

— Վնացէք ուրեմն, — ասաց նա, տեղից վերկենալով և
ճանապարհ՝ իջնելով մինչև դուռը: — Ճշմարիտ էք ասում, պէտք
չէ ջահիլների բաղտաւորութիւնն ուշացնել:

Նա ձեռքը մեկնեց ինձ, և ես ողջունելով պ. Ռամօնի
դուրս գնացի:

690
39

2.

Ուրախութիւնից խելքը գլխիս չէր: Այն ժամանակ մի-
այն ուշքի եկալ, երբ հասալ ձախ կողմը հովիտն իջնող ճա-
նապարհին: Գուցէ ես աւելի էի խմել, — պէտք է խօստովա-
նուիմ, Ժօրժ, որ աչն պատուական գինուց ես մի փոքր ար-
բեցի. բայց ոտներս հպատակում էին ինձ, և ես քալում էի
քսան տարեկանի պէս, ծիծաղաղէմ և ինքս ինձ ասելով.

«Այժմ, Ֆրեդէրիկ, ամեն բան եղաւ ինչպէս պէտք էր,
ոչ ոք ոչ մի բանում չի նախատի քեզ. ինքը՝ պ. տեսուչն
արեց առաջարկութիւնը, իսկ այս հազար անգամ լաւ է, քան
եթէ այդ անէր հօրեղբայր Դանիէլը... Ի՞նչ լաւ եկաւ բանը...
Ինչպէս բաղտաւոր կ'լինինք անտառի տնակում... Ինչքան
երջանիկ կ'լինին նոքա, երբ իմանան, որ ամեն ինչ սարքուել
է և մնում է միայն «Նշանաւ» երգելը: Եհ, դու էլ, Ֆրեդէրիկ,
կարող ես քեզ համար էլ ուրախ լինել... այս երկիրը դու

չես թողնի մինչև կեանքիդ վերջը. աչքիդ առաջ միշտ անտառ կլինի, և մինչև ութուուն տարեկան հասակդ ծառի խէ-
ժի հոտ կչնչես: Այս էր քո բոլոր ուզածը, չխօսելով ասպագա-
միւս ուրախութիւնների մասին,—որդուոց, թոռների, և ալին:

Ֆլօմիւլի ճանապարհն իջնելիս՝ ուղեցաւ պարել:

Մօտ վեց ժամն էր, և երեկոյեան թարմութիւնը զգալ
էր տալիս գիշերուաւ մերձենալը. դորտերն սկսել էին իրանց
երաժշտութիւնը եղեգնուտի և լճի բարձր խոտերի մէջ. հի-
նաւուրց մալրիները կապտաւուն էին տալիս երկնքի մուր-
տաբաժութեան տակ. ժամանակ առ ժամանակ կանգնում էի
ես և, հաչելով նոցա, մտածում:

«Գուք—գեղեցիկ ծառեր, տակաւին կեանքով լի էք.
դեռ երկար կանգուն կմնաք ալստեղ: Արեւ կջերմացնէ ձեր
մշտադալար գագաթները, քանի որ չեն որոշել ձեզ փախաւորի
Պացնի համար: Ապա թէ վերջ կունենաք, բայց մատաղա-
տունկ մալրիները կաճեն, կզարգանան ձեր ստուերի տակ և
ձեր տեղը կբռնեն. տեղը երբէք պարապ չի մնար:

Այսպէս մտածելով, շարունակեցի հանապարհու:

«Այն, Ֆրեդէրիկ,—ասացի ինքս ինձ,—ահա քո վիճակը...
դու սիրում էիր քո աներ Բրուստին. պահպանում էիր նո-
րան, երբ նա ուժ չունէր աշխատելու, որովհետեւ իւր դուստրն
ու պաշտօնը հաւատաց քեզ, և որովհետեւ նա պատկառելի,
ամենքից լարգուած մի մարդ էր, և հալոնիքի բարի ծա-
ռաւ... Այժմ հերթը քոնն է, որ երիտասարդներից սիրուես
ու պահպանուես. դու պիտի ապրես նոցա մէջ, հինաւուրց
մալրիի պէս, ալեղարդ մամուռով պատած: Խեղճ ծեր մալրի-
ներ, նոքա դեռ պիտի ապրեն. եթէ նոքա ալդպէս ուղղաձիգ
չաճէին, վաղուց կկտրտէին, և ցախի ու ածուխի կծառալից-
նէին»:

Ես փառք տուի Նախախնամութեան, որ աղնիւ մարդ-
կանց չէ կորցնում, և այս մտքերի մէջ եօթը ժամին մօտ
հաբաւ սղոցարանին: Կամրջի մօտից տեսաւ իմ տնակս ան-
տառում: Ռազօն հաչում էր. Կալասը տաւարն էր տուն ա-
նում, հարաւ տալով և մտրակը շարժելով. բաղերի հօտը գե-
տափին, աւաղի վերալ, քթներով ուղղում էին իրանց փե-
տուրները վզների մօտ, թևերի և ազիի տակ, որ հանգստա-
նալու նշան էր. քոնի մի հաւեր տակաւին կշկշում էին բա-

Պում, և նոցանից երկու երեքը—պառաւներն ու կիսով չափ
փետրաթափները—նիրհում էին ցանկապատի տակ:

Տեսնելով Ռազօն, որ վաղում էր դէպի ինձ, ինքս ինձ
ասացի.

«Ահա իմ տանս եմ: Այժմ պէտք է խօսել... Ժան Մէր-
լէնն անշուշտ ալստեղ կլինի... պէտք է բացուել»...

Ե.

Երբ ներս մտաւ, Վարդ-Մարին ձեռները կշտած խմոր
էր պատրաստում բոքոնների համար: Նա հեռուից տեսել էր
ինձ և առանց վեր հաչելու՝ շարունակում իւր գործը:

—Շատ եռանդով ես աշխատում, Վարդ-Մարի, ասացի
ես նորան:

—Ա՛յն, դեռ ես, հալրիկ. բոքոններ եմ պատրաստում:

—Այն,—պատասխանեցի, պարկս պատից կախելով.—ես
եմ: Ուղղակի տեսչի մօտից եմ դալիս... Ոչ ոք չէ եղել:

—Ժան, Մէրլէնը դեկուցանելու եկաւ, բայց գնաց...

—Ա՛յն, գնաց... բայց լաւ, լաւ... կարծեմ շատ հեռու
գնացած չի լինի. նորա հետ շատ լուրջ խօսելիք ունիմ:

Ես ման էի դալիս սենեկի մի ծալրից միւսը, նախելով
բոքոններին, ձուաներով լի կողովին. և ալիւրէ պարկին, իսկ
Վարդ-Մարին եռանդով շարունակում էր իւր պարապմունքը,
առանց չրթունքը բանալու:

Վերջապէս ես կանգ առաւ և ասացի.

—Վարդ-Մարի, աշխատելը լաւ բան է, բայց ալժամ մի
ուրիշ բանի մասին պէտք է խօսենք ես ու դու: Պ. տեսուչն
ինձ հաղորդեց, որ դու սիրում ես Ժան Մէրլէնին, ուղիղ է:

Այս խօսքերն ասացի թէ չէ՝ նա զրդնակը վեր գցեց
ձեռքից ու տակն ու վրաւ եղաւ:

—Ես այս նորա համար չեմ ասում,—շարունակեցի ես,
—որ քեզ լանդիմանութիւն տուած լինիմ: Ժան Մէրլէնը մի
փառաւոր երիտասարդ է և լաւ անտառապահ, ես նորա դէմ
ոչինչ չունիմ... Ես էլ մի անգամ սիրում էի մօրդ, և Բրուստ
հալրիկը, որ իմ իշխանաւորն էր, ալդ բանի համար ինձ ոչ
դուրս ալեց և ոչ էլ հալոյեց: Դա մի բնական բան է—երի-
տասարդ հառակում ամուսնութեան մասին կմտածեն: Բայց
երբ ուղում են մի աղնիւ օրիորդի հետ պսակուել, պէտք է

նորա հօր կամքը հարցնեն: Այտք է ամեն բան իր կարգով լինի:

Օրիորդը չափազանց լուզուած էր, բայց, վերջին խօսքերս լսելով, շտապով թռցրեց չափուկի ծաղկամանը և դրեց շուսամտի վերաւ: Ես շատ դարձաւայ, որովհետեւ իմ կին Կատէրինն էլ միննոյն նշանով չալանեց ինձ, որ կարող եմ գնալ և առաջարկութիւն անել նորա հօրը: Ժան Մէրլէնն խսկոյն դուրս թաւ ծառերի միջից և վազեց մեր տուն, ճիշտ այնպէս, ինչպէս քսան տարի առաջ ես արի:

Այս ամենը տեսնելով ես ճիշտ այնպէս վարուեցի, ինչպէս ծերունի Բրուատը: Կանգնեցի մեր դրան չէմքում, աղջկայս թողի իմ ետեւ, և երբ Մէրլէնը հեռու մտնեցաւ մեզ, ուղղուեցի և դարձաւ նորան:

— Մէրլէն, ճիշտ էր պ. տեսչի ինձ պատմածը, որ դուք սիրում էք աղջկայս. և ցանկանում էք առաջարկութիւն անել:

— Այո, պ. անտառապետ, — պատասխանեց նա, ձեռքը սրտին դրած, — ես սիրում եմ նորան կեանքիցս աւելի:

Նա ցանկանում էր վարդ-Մարիին հետ խօսել, բայց ես աղաղակեցի.

— Սպասեցէք... մի րոպէ ես... Գուք սիրում էք վարդ-Մարիին, նա նոյնպէս խոստովանել է ինձ, որ սիրում է ձեզ... շատ լաւ է... փոխադարձ սէրը խիստ հաճելի բան է... Բայց պէտք է ուրիշների, ծերերի մասին էլ մտածել: Երբ ես պսակուեցի Կատէրին Բրուատի հետ, խոստացաւ պահել աներոջս ու սկեսրաւորին մինչև նոցա մահը, և խօսքս պահեցի: Ինչպէս կարող էր անել մի ազնիւ մարդ. ես նոցա սիրում էի, չարդում և խնամում. նոքա առաջին տեղն ունէին սեղանի վերայ, խմում էին առաջին թաժակ գինին, քնում էին տանու ամենալաւ անկողնում: Աննա տատը դեռ մինչև օրս կենդանի է և կարող է վկայել ասածին ստուգութեան: Սա իմ ուղիքի պարտքս էր. եթէ այդպէս չանէի, անպիտան մարդ կը լինէի: Նոքա զանգատուելու տեղիք չունէին ինձ վերայ. ծերունի Բրուատը մեռնելիս օրհնեց ինձ և ասաց. «Ճրեղէրիկ, դու միշտ բարի զաւակ եղաի մեզ համար»: Կարծում եմ որ արժանի եմ, որ դուք ես ճիշտ այդպէս վարուէք ինձ հետ, որովհետեւ արդարութիւնն այդ է պահանջում: Այժմ, երբ իմ խօսքերը լսեցիք, խոստանում էք, Մէրլէն, ինձ համար այն լինել, ինչ որ ես Բրուատ հայրիկի համար էի:

— Ա՛յ, պ. անտառապետ, — պատասխանեց նա, — ինձ Երջանիկ կը համարեմ ձեզ պէս հայր ունենալով: — Այո, այո, կատարանում եմ որ մի բարի զաւակ կ'լինիմ ձեզ համար: Խոստանում եմ սիրել և չարդել ձեզ մինչև ձեր կեանքի վերջը:

Ես զգացուեցաւ ու ասացի.

— Ուրեմն ես տալիս եմ ձեզ վարդ-Մարիս, կարող էք համբուրուել:

Նոքա համբուրուեցան: վարդ-Մարին արտասուքով լըցուեց: Ես բերի Աննա տատին, որ թեխ վերաւ չենուած և կաւ և օրհնելով՝ ասաց.

— Այժմ կարող եմ հանգիստ մեռնել. ես տեսաւ թոռանս բաղտաւորուած և մի ազնիւ մարդուց սիրուած:

Եւ ամբողջ երեկոյ նա շարունակ աղօթում էր Աստծուն իւր թոռների բաղտաւորութեան համար:

Մէրլէնն ու վարդ-Մարին ցնծութեամբ խօսում էին իրար հետ և հրճում միմեանցով: Ես անցուղարձ էի անում մեծ սենեկում և ասում.

— Այժմ դուք հարսնացու և փեսացու էք: Ժանը կարող է ուղիւ ժամանակ գալ այստեղ առանց քաշուելու, տանը լինիմ ես թէ ոչ: Պ. տեսուչն ինձ ասաց, որ նա առաջինը պիտի բարձր պաշտօն ստանալ և իմ դուրս գալուց լետոյ՝ նա պէտք է թռնէ իմ տեղը. այդ էլ շատ հեռու չէ. հարսանիքն այն ժամանակ կ'անենք:

Այս հաճելի լուրերը կրկնապատկեցին նոցա երջանկութիւնը:

Գիշերը եկաւ: Ժան Մէրլէնը, չուզելով մօրն անհանգիստ անել, և մի անգամ ես մնաւ բարեւ ասելով՝ համբուրեց նշանածին:

Նորան ճանապարհ դրինք մինչև բարձր տանձենին: Սքանչելի եղանակ էր, ամբողջ երկինքը աստղներով էր լցուած: Ոչ մի կենդանի ձայն, ոչ մի տերեւի շշուկ չէր լսում, — ամեն ինչ քնած էր հովտում:

Երբ Մէրլէնը, հրամեշտ տալով, սղմում էր ձեռքս՝ նորան ասացի.

— Խնդրեցէք ձեր մօրը, Մարգրէդէլին, որ վաղը առաւօտ դալ մեզ մօտ. վարդ-Մարին համեղ ճաշ կ'պատրաստէ — միասին նշանդէքի տօն կ'կատարենք: Գա կեանքի ամենա-

մի՞նչ տօնն է: Այժմ հօրեղբայր Գանիէլն էլ կարողանալ գալ շատ ուրախ կլինինք:

—Լաւ, Ֆրեդերիկ հալրիկ,—ասաց նա, և հաստատ քաշլերով հեռացաւ:

Մենք տուն դարձանք:

Յիշեցի իմ խեղճ կատէրինին ու մտածեցի.

«Լինում են գեղեցիկ օրեր կեանքի մէջ. ինչո՞ւ իմ բարի կլինն էլ մեզ հետ չէ»: Այս լիշողութիւնը մի հատիկ ախուրդոյ էր ամբողջ օրուայ ընթացքում:

Ը.

Ամեն ինչ ուրեմն կարգի դրուեց, ևս ալլանահանգիստ չէի լինում հրաժարականիս մասին: Ժան Մէրլէնն ու նորա մայր Մարգրէդէլը ամեն կիրակի գալիս էին մեզ մօտ:

Նկաւ աշունը—որսորդութեան և ձկնորսութեան ժամանակը. անտառները թակարդներով և գետերը թռռերով լցուեցան:

Ֆալցբուրգցի ծեր ժամագործ Բաուրը, նախկին տարիների նման, երևաց իւր երկաշն ձողերով ու պարկերով կարմրախաւսի համար. Լաֆլէշը, Վինլերէլն ու ալլը—բոլորն էլ Սալմերից մշահաւի որսորդներ-չներով ու հրազէններով. ամեն կողմից լսուեցան սուլոց, աղաղակ, նապաստակներ էին որսում, երբեմն նաև ալծեամիներ. բոլոր որսորդները գալիս էին հանգիստ առնելու և ուժերը կազդուրելու անտառի տանը. տապակածի և ապուխտով ձուգեղի հոտը մինչև պարտէզն էր հասնում, և սորանով մի քիչ դրամ էինք վաստակում:

Քեզ այս բաները շատ լաւ տնի են, Ժօրժ, ուստի և պէտք չէ երկար բացատրել:

Այդ տարին մեր մօտից շատ փաշտատներ էին անցնում Բաւարիայից և ուրիշ աւելի հեռաւոր տեղերից,—առողջ պնդակազմ մարդիկ, պարկերն ուսին, և ոսկորէ կոճակներով զանկապաններ ոտներին: Նոքա ամենքն էլ գնում էին դէպի Նիվէր-վիլ, Լիւնէվիլ և Տուլլ փաշտ կտրելու: Կերևալին խմբերով, բաճկոնակները կացիններից կախած և ուսին դրած: Այդ մարդիկ մեր մօտից անցնելով ձեռաց մի մի գաւաթ գինի

էին խմում. դա մի ուրախ, անհոգ ժողովուրդ էր, որոնց լախճապակէ ծխամորճերից ծխախոտի հոտով լցնում էին սենեակը, ինչպէս նաև ծիծաղախառն և կատակախառն խօսակցութիւններով, ինչպէս անում են այն մարդիկ, որոնք առանձին ղժուարութեամբ չեն ձեռք բերում իրանց ապրուստը:

Ի հարկէ ես ուրախ էի, որ նոքա ինձ մօտ էին իջևանում. դորանից քիչ շատ օգուտ ունէինք: Այդ ժամանակներից մի դէպք եմ լիշում, որ ցուց է տալիս, թէ այդ ժողովուրդն ինչ վստահութեամբ է հաւատ ընծայում իւր կառավարութեան, առանց հոգալու և խմանալու, թէ ինչ է կատարում մի քսան լեօ հեռու. ևս ամաչում եմ մենակ հէնց մտաբերելով, որ մենք կարող էինք այն ժամանակ ծիծաղել խեղճ և մեզ զգուշացնող մարդկանց վերաջ:

Մի անգամ մեր տունը լիքն էր քաղաքից և չրջականերից եկողներով. նոցա թւում կալին և մի քանի օտարացիներ: Խօսում էին, խմում, և մի բարձրահասակ, շէկ աչտամօրուքով և մեծ մեծ բեղերով բաւարացի՝ լուսամուտին մօտենալով՝ զարմանքով արտասանեց.

—Ի՞նչ գեղեցիկ երկիր է: Ի՞նչ հրաշալի մալրիներ... Ի՞նչ գեղանկար աւերալիներ... Այս փոքրիկ անտառն էլ, և Ժալուերի մէջ դէպի ձախ այս ձորը... Ես ալտսիսի ճոխ երկիր երբէք չեմ տեսել: Անտառակի ետեւում էլ երևում է կաթուղիներ: Ի՞նչպէս է կոչւում այս գեղեցիկ գիւղը:

Ես գոհ էի, որ այդ մարդը հիանում էր մեր հովտով, և ամեն ինչ մանրամասն պատմեցի:

Բաուրը, Դիւրը, Վինլերէլը զրուց էին անում, ծխում էին և մտնում խոհանոց խմանալու, պատրաստ էր արդեօք ձուգեղը, ուրիշ բանի մասին ամենին չմտածելով:

Այդտեղ էր նստած և ծովապետ Ռօնդօն, որ փոքր առաջ վերադարձել էր ալտսեղ պաշտօնը թողնելուց չետոյ, բարձրահասակ, չոր-չոր, ներս ընկած աչտերով մի մարդ, մինչև վիզը կոճկած բաճկոնակով, որ տանջւում էր Աֆրիկայում, Դրիմ, Խալիպում կրած վերքերից: Նա լսում էր այս ամենը և անշունչ կաթ էր խմում, որովհետև բիշկն արգելել էր մի ուրիշ բան խմել:

Անցաւ մի քանի ժամանակ և բաւարացիները, գաւաթները դատարկելով՝ ճանապարհուեցին: Ես ուղեկցեցի նոցա, որպէս զի ցուց տամ Բիզէլբերգի ճանապարհը: Շէկ բաւարա-

ցին բարձր ձայնով ծիծաղեց, նա շատ ուրախ էր. հրաժեշտ տալիս՝ նա պինդ սեղմեց ձեռքս և ասաց «Merci!» ու վաղեց իւր ընկերներին հասնելու:

Երբ նոքա գնացին, ծովափոս Ռօնդօն կանգնած էր դրանք, իւր ձեռնափախտի վերայ լինուած, վալլող աչքերը ման էր ածում նոցա ետևից եւ ատամները կրճտացնում:

—Այս ինչ մարդիկ են, Ֆրեդերիկ հալրիկ,—հարցրեց նա ինձ:—ձանաչում էք դոցա:

—Կապիտան,—պատասխանեցի ես,—դոքա գերմանացի փախտատներ են. նոցա մասին այսքան դիտեմ միայն, որ դընում են Տուլ ինչ-որ կապալառուների մօտ աշխատելու:

—Ինչու նոքա Ֆրանսիացիներին չեն տանում աշխատեցնելու:

—Նորա համար, որ այդ փախտատները մերոնցից արժան են, կիսազնով են աշխատում:

Կապիտանը լռեցերը կնճռտեց ու ասաց.

—Իոքա լրտեսներ են... դալիս են մեր լեռները դիտելու:

—Ի՞նչ լրտեսներ,—պատասխանեցի ես զարմացած:—Լրտեսելու ինչ կալ ապտեղ: Մեր դուրծերը նոցա հետ ինչ կապ ունին:

—Պրուսական լրտեսներ են,—պատասխանեց նա չոր ու ցամաք.—ուսումնասիրում են մեր երկիրը:

Ինձ այնպէս թուաց, որ նա ծիծաղում է վրաս:

—Սակայն, կապիտան Ռօնդօ, ասացի ես, բոլոր մալարդակները կան, ամեն մէկը կարող է ուզած երկրի քարտէսը գնել, Ստրասբուրգում, Նանսիում և ամեն տեղ, ուր կամենալ:

Բայց նա մի խիստ հաւեացք ուղղեց ինձ եւ դուրեց.

—Քարտէսներ... Քարտէսներ... Միթէ մեր քարտէսները վերայ նշանակուած են թէ ինչքան խոտ, դարման, վարսակ, հաճար, դինի, միս, ձի, սալակ կարող են գտնել զօրքի համար: Կարող ես քարտէսի վերայ իմանալ, թէ ուր է կենում մէրը, քահանան, փոստի կառավարիչը, հարկահանը, նորա համար որ ամեն ժամանակ ուզած բանը ձեռք բերուի:—Եւր է ասուք, որ ձիւր սլահեն ու հաղար մի ուրիշ բաներ, որոնք օգտակար են զլտեսնալու գերմանացոց համար:

—Քարտէսներ... նոցա վերայ նշանակուած են գետերի

խորութիւնը, թէ ուր են գետանցքները: Քարտէսները ցոյց են տալիս, թէ ինչ ուղեցուցներ պէտք է վերցնել, ինչ մարդիկ պէտք է կալահաւորել, որ չգրգռեն ժողովրդին:

Կռներս թուաջան դարմանքից: Այդ տեսակ բաներ մտքովս չէր անցել երբէք. այդ ժամանակ Բաուրը ձայն տրւեց կապիտանին դաշխից:

—Այս, կապիտան, ով գլուխ կռնենայ մեղ վերայ լարձակուելու: Կերմանացիները... հա, հա, հա: Թող մի փորձեն: Մենք եւս ցոյց կտանք մեղ: Ողորմելիք... ես շատ էլ չէի ցանկալ նոցա տեղ լինել... հա, հա, հա. նոցա այնպէս կանեն, որ մէկը չկարողանայ մեր լեռներից աղատուել:

Ներկալ գտնուողներն ամենքը ծիծաղեցին եւ աղաղակեցին:

Կապիտանը մտաւ դաշխիձ եւ ամենից բարձր զոռացող հաստափոր Ֆիշերին նայելով հարցրեց.

—Գնաք պիտի պատահէք... Ինչո՞վ: Գիտէք թէ ինչ էք խօսում... Ո՞ւր են մեր զօրքերը, մեր պաշարը, մեր զէնքերը, —ո՞ւր են, ո՞ւր, ո՞ւր: Կա այս եւմ հարցնում... Բայց դիտէք թէ ինչքան են այդ գերմանացիք: Գիտէք, որ նոքա մի ամբողջ միլիօն զօրք ունին, կաղմակերպուած, կարգաւորուած թնդանօթաձիգ, հեծելազօր, հետեւակ—պատրաստ գէթ մի չարաթից լետ դաշտ դուրս գալու մեր հանդէպ: Գիտէք այս ամենը... Գնաք պիտի հանդիպէք...

—Այո,—պատասխանեց Բաուրը,—Ֆալցրուրզը, Լիխտենշթերգն ու Նլէյտաղը քսան տարի շարունակ կարող են գիմաղրել նոցա:

Կապիտան Ռօնդօն պատասխանի չարժանացրեց նորան եւ, մատով ցոյց տալով գնացող փախտատների վերայ, ասաց ինձ.

—Նալեցէք, Ֆրեդերիկ հալրիկ, նալեցէք... Սոքա փախտաներ են միթէ: Սոքա մեր փախտատներն են,—այս մարդիկ, որոնք ուսերը վեր քաշած չափով են շարժում իրանց քալելով: Մեր բոլոր փախտատների մէջքը կռայած է արդեօք եւ գնացքը ծանր: Իոքա նոյն խոլ լեռնականներ չեն, դաշտերից են եկած. դոքա լրտեսներ են, այն լրտեսներ, եւ ես նոցա կձերբակալեմ:

Եւ, առանց պատասխանի սպասելու, նա մի քանի սու

չարտեց իւր խմած բաժակ կաթի համար եւ շտապով դուրս գնաց սենեկից:

Հազիւ չէմքից ոտը դուրս էր դրել, եւ անհապառայան եղողները բարձր ձայնով ծիծաղել սկսան: Լս նոցա զըլ-խով նշան տուի, որ կապիտանը կարող է լսել. նոքա շա-րունակեցին ծիծաղը, կողքերը բռնած եւ ասում էին.

— Զուարճալի է... շատ զուարճալի է... Գերմանացիները պիտի լարձակուին մեղ վերալ: Բաուրը, աչքերը թաշկի-նակով սրբելով՝ ասաց.

— Կապիտանը շատ պատուական մարդ է, բայց նա ծանր վիրավորուած էր, եւ անուհետեւ նորա զուլսը խան-գարուած է եւ Աստուած գիտէ ինչեր է երեւակայում:

Այս բանը ասելուց կենդանի լիշում եւ ալժամ, կարծես թէ երեկ էր: Այս դէպքից 2-3 օր անոց իմացալ, որ կապի-տանը ամբողջ մի խումբ փախտատներ է ձերբակալել Լիւտցէլ-բուրգի կալարանում. բանտարկուածների բոլոր թղթերը կար-գին է եղել, եւ թուլ են տուել նոցա շարունակել իրանց ճա-նապարհը Լոտարինգիայում, չնայելով պ. Ռօնդօի բոլոր պա-հանջներին եւ նկատողութիւններին: Այն ժամանակ ինձ էլ ասելու էր թուում, թէ կապիտանի խելքը բոլորովին էլ տե-ղը չէր:

Ամեն անգամ, երբ Բաուրը գալիս էր իմ անտառի տու-նը, նա լիշում էր գերմանացի լրտեսներին եւ ինձ հետ ծի-ծաղում կապիտանի կասկածանքի վերալ: Բայց այժմ էլ չենք ծիծաղում, եւ հաւատացած եմ, որ Ֆալցբուրգի կատակ անող-ները ծիծաղից ձեռքերն էլ չեն չփում, երբ ենթասպան ձայն է տալիս զինուորներին. «Gewehr auf! Gewehr ab!»: Ես կարծում եմ, որ այս վարժութեանց ժամանակ նոքա շատ անգամ են լիշում կապիտան Ռօնդօի նախազուշակութիւնները:

Թ.

1869 թ. աշնան երկրորդ կէսն էր. հովիտը մշուշով ծածկուած էր. եկաւ և ձմեռը. ձիւնը զիղուեց լուսամուտների առաջ, կրակը ծխում էր վառարանում, եւ Վարդ-Մարիի ճա-խարակը առաւօտից երեկոյ տղղում էր անդադար, ին ժա-մացուցի միակերպ ընթացքին ներդաշնակ:

Ես անցուղարձ էի անում սենեկում, ծխելով և հրաժա-

րականիս վերալ մտածելով: Վարդ-Մարին էլ, անկասկած, մտածում էր, իսկ Ժան Մէրլէնը երբեմն երբեմն խօսք էր գը-ցում, որ հարսանիքը շտապեցնենք, որով եւ ձանձրացնում էր ինձ, որովհետեւ, մի անգամ որ խօսք էի տուել, էլ չէի սիրում փոխել. ալ ինչպէս որոշել էինք պսակը կատարել նորա՝ իմ տեղը նշանակուելու օրը, էլ կարիք չէի գտնում նորից խօսել արդէն վճռուած գործի մասին:

Նշանուածներն շտապում էին. այս բանին նպաստում էր երիտասարդութիւնն ու աշնան ձանձրութիւնը:

Մօտ երկու ամիս Բաուրը, Վինչերէլը, Դիւրն եւ ուրիշ-ները էլ անտառ չէին գալիս. ծառերը եղեամով ծածկուեցան, եւ անցորդ շատ հազիւ կպատահէր մեր հովտում: Կապիտանի զիւլուածը լրտեսների հետ, որ անքան ծիծաղի առիթ տուեց, բոլորովին անցել էր լիշողութիւնիցս, երբ լանկարծ մի հան-գամանք պարզ ցուց տուեց, որ ձեր զինուորը ի դուր չէր վախենում պրուսացիներից և որ մեծ չարիք պատրաստեցին մեղ բարձրատիճան մարդիկ, որոնց սենք կատարելապէս հաւատ էինք ընծալում:

Այդ տարին կինճերի մի ահագին երամակ քանդեց մեր երկիրը. դոքա բոլոր ցանքները կերան, քարուքանդ արին անառւը, արմատները ոչնչացրին եւ ամեն գիշեր երեւում էին ագարակների եւ զիւղերի մօտ, եւ վնասում դաշտերին:

Անդադար լսում էր գիւղացիների դանդաղ. վերջա-պէս եկաւ բարձր Պիշարը անասնավարների հետ որս կաղմա-կերպելու: Ես հրաման ստացալ Բոտֆալց գնալ անտառալիւն լաւագոյն հրացանաձիւղներով եւ ինձ հետ տարալ կարելուցն չափ շատ որսորդներ չըջականերից:

Այս եղաւ զեկտեմբերին: Ճանապարհ ընկալ Մէրլէնի, Կէրնի, Ռօնդօի, Տրոմպէտի եւ 15 թէ 20 հրացանաձիւղնե-րի հետ. երեկոյեան դէմ արդէն տեղ հասանք: Եւ պ. Բարօնի-հիւրերին գտանք փոքրիկ խրճիթում. ամենքն ըստ սովորու-թեան խմում էին, ուտում եւ լարդի վերալ թափուած բարձր ձայնով խօսակցում:

— Բայց քեզ այս ամենը չափնի է, Ժօրժ, դու ծանօթ ես Բարօնին, քեզ ծանօթ են հրացանաձիւղները աղաղակը, չնե-րի հաչոցն ու հիւրերի կրած երկիւղը:

Բայց ես ցանկանում եմ քեզ պատմել, որ այն որսից լետու, երբ մի քանի վարաղ սպանուեց, խրճիթում մեծ խըն-

ջուր տեղի ունեցաւ: Բարօնի կառքերով մեծ քանակութեամբ զինի, խաղաթուղթ, սպիտակ հաց, խմորեղէն, շաքար, սուրճ, կօնեակ բերին, եւ բնական է որ կէս զիշերին, ձիւնի վերայ վազվազ՝ ամենքն էլ օրինաւոր խմում էին, գոռում եւ արքում, եւ ամբողջ խումբը մի կուշտ ուրախացան:

Անք խոհանոցումն էինք նստած եւ նոյնպէս լետ չէինք մնացել նոցանից. դահլիճի դուռը բաց էր, թարմ օդ շնչելու համար. լսում էինք հիւրերի խօսակցութիւնը, մանաւանդ որ այնպէս էին գոռում, կարծես խուլ լինէին:

Իմ ուշադրութիւնը դրակեց մի բարձրահասակ, չոր-չոր, կեռ քթով, սեւաչեւ, ոլորած բեղերով եւ կաշուէ բարձր զանկապաններով մարդ. նաչելով նորան՝ միտք էի անում:

«Այս մարդը գրասեղանի առաջ նստելու կամ ոտները վառարանի առաջ տաքացնելու սովոր մարդ չէ. սա անշուշտ զինուորական սպայ է եւ այն՝ բարձրաստիճան»:

Առաւօտեան, որսի ժամանակ, նա կանգնել էր ինձ մօտ եւ նորա՝ երկու անգամ արձակածն էլ լաջող էր: Ես նորան համարեցի իսկական որսորդ: Խմում էր չափաւոր, որովհետեւ կէս զիշերին, երբ հիւրերի երեք քառորդը խոր քուն էին մտել ամեն անկիւններում, նա շարունակ խօսում էր բարօն Պիշարի հետ, այ. Տիւբէնգի հետ միասին, որ էլզասցի մի հարուստ գինեւաճառ էր, պ. Ժան—Ալօդ—Բուպպէր նօտարի հետ, որ ընդունակ էր երկու օր անընդհատ խմել, առանց մի փոփոխութիւն կրելու դէմքի վերայ, և փախաւաճառ պ. Մուշիկի հետ, որ սովորութիւն ունէր հարբեցնել ամենքին, ով իւր հետ գործ ուներ. բացի այս հինգ մալգուց մնացեալ ամբողջ խումբը փռուած էին լարի վերայ:

Նոցա մէջ մի հետաքրքիր խօսակցութիւն սկսուեց. բարօնն ասում էր, թէ զերմանացիք աղչակներ են ուղարկում էլզաս. թէ նոքա ամեն կողմ լրտեսներ ունին, որոնք ման են գալիս իբրեւ ուղեորներ, առետրականներ կամ ցրուիչներ. թէ նոքա հանում են ճանապարհների, շաւիղների, անտառների մակարդակները. զիտում են մեր զորանոցները, ամենաճիշտ տեղեկութիւններ հաղորդելով իրանց հայրենիքին. թէ նոքա այդ միևնույնն արին առաջ Շելզվիլդ—Հօլշտէյնում պատերազմից առաջ, և Բօհէմիայում. թէ պէտք է վախենալ նոցանից և այլն:

Նօտարն ու պ. Մուշիկը պնդում էին, թէ կարող է ւտուղ

լինել այդ. որ այդ ամենը խիստ կարևոր է և որ մեր կառավարութիւնը պէտք է միջոցներ ձեռք առնէ այդ լրտեսութեան առաջն առնելու:

Հասկանալի է, որ երբ այս խօսակցութիւնը մեղ հասաւ, սկսեցինք ուշադրութեամբ ականջ դնել: Սպան բարձր ձայնով ծիծաղեց և ասաց, թէ մենք էլ նոյնն ենք անում և մեր ընդունակ զինուորական մարդկանց շատերը Գերմանիայումն են ապրում... Պ. Տիւբէնգն աւելացրեց, թէ այդ անհնարին է, և թէ ոչ մի Փրանսիացի սպայ չի համաձայնի այդպէս վարուել, զինուորական պատուի համար. սպան, ծիծաղը բարձրացնելով՝ ասաց.

—Միթէ այդպէս էք նայում դուրս վերայ: Բայց, մեծարգոյ աէր, ինչ բան է պատերազմը մեր ժամանակ: Մի արուեստ է, խաղ, բաց թղթախաղ. պէտք է աշխատել հակառակորդի թղթերը գուշակել: Ես—ար, ես ինքս, ձեզ հետ խօսողը, ամբողջ Պիշարց ման եմ եկել ուղևոր գործակատարի պաշտօնով. բօրոց եմ ծախել այդ բարենոցի զերմանացիներին:

Նա ծիծաղելով պատմեց, ինչ որ տեսել էր ճանապարհորդութեան ժամանակ, ճիշտ այնպէս, ինչպէս ասում էր. կապիտան Ռօնդօն, ինչպէս վարում են մեզ հետ պրուսացի լրտեսները, և աւելացրեց, որ մենք բոլորովին պատրաստ ենք և միայն զէպքի ենք սպասում, որպէսզի Ռէյնի ձախ փին տիրենք:

Պահապաններս, որոնք վառարանի մօտ էին նստած, երբ այդ լսեցին, այնպէս ուրախացան, կարծես թէ մի մեծ շահ էին սպասում: համարեա թէ սորանից լետոյ սենեկի դուռը փակուեց, և մենք էլ ոչինչ չլսեցինք:

Ես դուրս եկալ օդ շնչելու. Աէրնի, Տրօմպէտի և միւսնիւրի լիմարութիւնը զայրացրել էր ինձ:

Գուրսը շատ ցուրտ էր. հովիտը ծածկուած էր եղեամով և լուսինը մալրիներէից վեր դուրս էր նախում ամպերի միջից:

—Ի՞նչ է պատահել ձեզ, պ. անտառապետ,—հարցրեց ինձ Մէրլէնը, դուրս գալով ետեիցս.—բոլորովին գոյնը կորցրել էք... վատ էք զգում ձեզ:

—Այո, Տրօմպէտի և միւսների լիմարութիւնը լուսահատեցնում է ինձ,—պատասխանեցի ես:—Ինձ շատ է հետաքրքրում, թէ ինչի վերայ են նոքա ուրախանում: Դուք էլ, Մէրլէն, զարմացնում էք ինձ: Դուք զեղեցիկ բան էք համա-

բում մեր դրացիները վերադարձակուելը, զինի, հաճար, խոտ, դարման լափշտակելը խեղճ մարդկանցից, որոնք ոչ մի միլաս չեն տուել ձեզ... Ձեզ հրապուրիչ է թուում նոցա երկրին տիրապետելը և նոցա բռնի ֆրանսիացի դարձնելը, Կախաղ է. դուք ալդ խաղ էք համարում... հաճելի բան է գերմանացի դառնալ: Հաճելի է պրուսացիներին հպատակուել և հայրենիքը մի ուրիշի հետ փոխել: Այդպիսով ինչ կվաստակենք: Հարևանի հոգին հանելով կհարստանանք: Ես ի պատիւ մեր հայրենիքի՝ վատ ձեռք բերուած ոչ մի սանտիմ, ոչ մի թիղ գետին չեմ ուզում: Ես չեմ ուզում ալդ պարոնի խօսքերին հաւատալ: Եթէ նա ճշմարիտ է ասում, աւելի վատ: Եթէ չաղթանակը մեր կողմը լինի, գերմանացիք սերնդից սերունդ կաշխատեն իրանց իրաւունքները լեռ ստանալ և վրէժխնդիր լինել իրանց կորցրած հայրենակիցների արեան փոխարէն: Ամենաանսիրտ մարդիկ միայն պատերազմ կցանկանան: Խաղաժողները միշտ տանելու լուս ունին. բայց լաճախ տեսնում ենք, որ նոցա վերջը շատ վատ է լինում:

— Հայրիկ, — ասաց ինձ Մէրլէնը, — մի բարկանաք ինձ վերայ, ես շատ չեմ մտածել ալդ մասին — ձեր ասածները ճշմարիտ են: Բայց դուք չափազանց վրդովուել էք, լաւ կլինի որ էլի խոհանոցը գնանք:

— Այո՛, — ասացի ես, — գնանք քնենք. դա խմելուց լաւ է. ամբարում էլի տեղ կալ:

Այդպէս էլ արինք. իսկ միւս օրը լուսը չծագած տուն դարձանք:

Ինչ որ ես ասացի, Ժօրժ, ամենը ճշմարիտ էր. ես ճշմարտութիւնը միշտ վեր էի դասում ամեն բանից, և այժմ էլ, երբ կորցրել եմ ամենը, ինչ որ ամենից թանկ էր ինձ համար աշխարհիս վերայ, կրկնում եմ. աւելի լաւ է այսքան վիշտ կրել և զրկուած լինել, ինչպէս ես, երեսնամեալ աշխատանքից, քան կորցնել արդարութեան զգացմունքը:

Ժ.

Ձմեռն անցնում էր. անձրև, ձիւն, ուժգին քամիների շառաչիւն մերկ ծառերի միջև, արմատից շրջուած մալրիներ, ժալուերի փլատակներ, որոնք խիճով լցնում էին ճանապարհները, — այս բոլորին ահանատես եմ եղած ամբողջ 25 տարի:

Եկաւ դարունը: Անասունն իջաւ գետից ջուր խմելու, Զովիւներն երգում էին, խարազանը շարժելով, և աքաղաղը ցած պատնէշի վերայ թափահարում էր իւր թևերը հաւերի մէջ նստած, և իւր զիւ ձայնով արձագանք լարուցանում հովտում:

Այս, ինչպէս կենդանի են աչքիս առաջ. այս ամենը, Ժօրժ: Եւ այն իրերը, որոնց ես անտարբերութեամբ եմ նայում, դեղեցիկ են թուում ինձ այժմ վերնատանս նստած, ուր լուսի մի թույլ ճառագայթ հաղիւ է ներս թափանցում:

Ամեն առաւօտ Վարդ-Մարին, կարճ շրջադղեստ հագած, կրծքին խաչաձև կապած փողկապով, պարտեզ էր իջնում, նախախաչ բանջարը քաղելու: Անցնելիս նա կապկպում էր կախ ընկած ձիւղերը:

Հեռուից տեսալ ժան Մէրլէնին, որ մարդի միջով դէպի մեղ էր գալիս, և լսեցի, ինչպէս նա կանչում էր Վարդ-Մարինին: Սա շտապեց ընդառաջել նորան: Նոքա համբուրուցան և ծիծաղողէմ թե թևի տուած գնացին դէպի տուն: Ես չափազանց դժմածում էի. «Այս փառաւոր ջաշիւները անկեղծ սիրում են միմեանց»:

Պառաւ տատ Անան, որ գրեթէ սենեկից էլ չէր դուրս գալիս, ուրուռն կանաչով պատած իւր փոքրիկ լուսամուտից՝ քթացած աչքերով նոյնպէս հրճում էր նոցանով, և նորա խորշոմած երեսին զոճունակութիւն էր արտափալում. երբեմն նա ձայն էր տալիս ինձ.

— Ֆրեդերիկ:

— Ի՞նչ է, տատ:

— Ես երկտասարդացալ, ինչպէս հարսանիքիս ժամանակ: Սա դիտաւոր երեալու տարին էր, երբ մեծ քանակութեամբ խաղող ստացանք, Ռուսիայի խիստ սառնամանիքներից առաջ. լսել էք ալդ մասին, Ֆրեդերիկ. մեր բոլոր զինուորները սառեցին այնտեղ:

— Այո՛, տատիկ:

Նա սիրում էր լինել այս հին պատմութիւնը, և մեր մտքովն էլ չէր անցնում, որ շուտով վկայ պիտի լինէինք նոյնանման սարսափների:

Ֆալցբուրգի խեղճ ծերերը, ծեր Մէրլէն, Պարադիսը, Լաֆուէր պապը և ալ պաշտօնաթող զինուորները, որոնք Էրանց զօլութիւնը պահպանում էին աղքատների գանձանա-

կով և իրանց աննշան կենսաթոշակով, նախկին գարուններին նման սխեցին անտառ գալ զանազան սուռնկեր, ելակ ու մոր հաւաքելու: Անտառի ամենալաւ ելակը քաղաքում ամանը մի երկու սուռով էր ծախուում, իսկ սուռնկերը՝ փոքրիկ կողովը երեք սուռով:

Մարգերում գետի ափին նոքրա աղցան էին ժողովում: Մի սուռ վաստակելու համար քանի անգամ էին խեղճերն Իրանց ծեր մէջքները կռացնում:

Եւ տարեցտարի մերք պատուէր էինք ստանում աւելի ու աւելի խիստ գործ դնել անտառալին կանոնները, արգելել չոր սերնդներ ու խողկաղին ժողովելը, — զրկել խեղճերին ապրուստի վերջին միջոցից:

Այսպէս անցաւ մինչև հունձը, երբ սկսուեց սարսափելի չորութիւն, որ մինչև լուսիսի վերջը շարունակուեց և ամենքը երկիւղ էին կրում, որ գետնախնձորը կփչանալ:

Ինչ վերաբերում է ժողովրդական ընտրութեանց, ես այդ մասին չեմ էլ խօսում. մենք, անտառի պահապաններս, մի առանձին չէինք լուզում դորանով: Մի առաւօտ պատուէր ստացանք Պըտի-Պիեր գնալու, և լեռնալին բոլոր խումբը մօտ հաւաքուելով՝ կատարեալ համադրեստով գնացինք, որ, ինչպէս պատուիրուած էր, մեր ալոն տանք: Մտնելով «Երեք Աղաւնի» հիւրատունը, խմբինք կայսեր կենաց և ցրուեցանք մեր տները, իսկ միւս օրն արդէն ամենքս մոռացանք այդ գէպը:

Գրառփտալում, Գօզէնհայմում և Էշբուրգում միայն հէնց զանդատ էր լուում երաշտութեան մատին: Բայց հովտի խորքում այդ երաշտը ամենալաւ և պողտքեր ժամանակն էր լինում. խոնաւութեան պակասութիւն չունէինք. ահագին խոտ էր բուսել, և Էլզասի բոլոր թռչունները, — մշահակերը, թռչակատարները, կարմրալանջերը, — իրանց ձագերով խոնուում էին ինչպէս մի թռչնոցում:

Ձկնորսներին էլ թիւ չկար: Վարդ-Մարին ոչ մի տարի այնքան ձուաղեղ ու տապակած չէր պատրաստել: Նա կատարում էր ամեն բան ձեռաց, սիրալիր ժողտալով առաջիկայ ամուսնութեան շնորհաւորութիւններին:

Նա թարմ էր, ինչպէս վարդ, և ժան Մէրլէնը աչքը չէր հեռացնում նորանից:

Ո՞վ կմտածէր այդ ժամանակ, որ պէտք է պատերազմ ունենանք արուսացիների դէմ:

Ի՞նչը կարող էր մեզ այդ պատերազմը գուշակել տալ:

Բացի դորանից, ամենքը հաւատացնում էին, որ ժողովրդական քուէն խաղաղութեան կողմն էր: Պատերազմի միտքը հեռու էր մեզանից: Մի երեկոյ փոքրիկ հրէայ Դաւիթը, մի հորթ զնելով Գօզէնհայմում, անցնելիս հարցրեց ինձ.

— Նոր բան գիտէ՞ք, պ. անտառապետ:

— Ո՛չ, ի՞նչ նոր:

— Պարիզի լրագիրները հաղորդում են, որ կալսըր մտադիր է պատերազմ հրատարակել Պրուսիային: Նա չեմ հաւատում, թէպէտ և վաճառական Շատնէրը, Սաարբրիկէնից լետ դառնալով ինձ ասաց, որ ամբողջ գերմանական կողմը զօրքով հրացանաձիգներով, հետեակ և հեծելազօրով լիքն է, և որ անգամ ամեն մի քաղաքացուն բաժանուած են պալուսակի գէնք, ամբողջ սարք ու կարգ, թուահամարած, և որ քաղաքապետի առաջին նշանին միայն պէտք է հազնուեն և շոգեկառք մտնեն, որ խմբովին զիմեն դէպի մեզ: Իսկ մեր, Փրանսիացիներին կողմը, ոչ քաղաքներում, ոչ դիւղերում պատրաստ ոչինչ չկայ, և իմ պարզ խելքով հասկանում եմ, որ չէին կարող գերմանացիներին պատերազմ հրատարակել, մինչև որ մեզ պաշտպանուելու միջոց չտային:

Երբ հրէան ալլալիս լիմար բան հաղորդեց, ես ուսերս վեր քաշեցի, և հարցրի նորան.

— Միամիտ մալդ ես համարում կայսեր:

Բայց նա, հորթի պարանը ձգելով և քշելով՝ ասաց.

— Սպասեցէ՛ք... սպասեցէ՛ք, պ. անտառապետ. կտեսնէ՞ք, որ այս ամենը շատ չուտով կկատարուի:

Ես անուամենալիւ չհաւատացի նորան, և երբ երեկոյեան ժան Մէրլէնն եկաւ, մինչև անգամ նորան ոչինչ չասացի այդ մասին:

Դժբաղտաբար, ութը թէ տասը օրից լետոյ, պատերազմի պատրաստութիւններն սկսուեցան. կանչեցին բոլոր անորոշ ժամանակով թողած զինուորներին և անգամ ասում էին, թէ բաւարացիք արդէն հեռագրաթիւերը կտրտել են Էլզասում, թէ անհամար զօրքեր Սալերն են եկել և բանակ դրել Նիդերբորնում:

Յանկարծ լուր տարածուեց, թէ Վիսսամբուրդի մօտ տեղի է ունեցել ընդհարումը, և նոյն օրը երեկոյին Նիւվիլէրի քնակիչները իրանց կայքերով գլուխն աղատեցին Լիւցէլտէյն փախչելով. նոքա վախեցել էին ալստեղ մօտեւ, որ ժամանակ չկորցնեն: Մեր դռանը պատմում էին, թէ մեր զօրադնդերից շատերը կոտորուել են, թէ լառաջապահ զօրքի հրամանատար զօրապետը սպանուած է. թէ Վիսսամբուրդն ալրուել և մեքոնք լետ են մղուել Բիտլ:

Յուսահատութիւնը տիրեց մեզ: Մէրլէնն ու նորա մայրը եկան մեզ մօտ խօսելու ալս ցաւալի նորութիւնների մասին: Տատը ախ ու վախի մէջ էր ևս նորան հանգստացնում էի նորանով, որ դերմանացիք անկարող են մեր անտառները գալ, որովհետեւ ճանապարհները չգիտեն. բայց, ուրիշներին մխիթարելով՝ ես իմ մէջ չափազանց ալեկոծուած էի: Միտս եկան, ինչ որ մի տարի առաջ խօսել էր կապիտան Ռօնդօն և Լիւցէլբուրգ ձերբակալուած փախտատները: Ես առաւել վըշտացած էի նորա վերայ, որ բաղենցիք ու բաւարցիները առաջին իսկ պատահելիս հարուածեցին ֆրանսիացիներին: Թէպէտ և ինձ լալտնի էր, որ մերոնք կուռում էին տասը մէկի դէմ, բայց ալդ բանը իմ վիշտս չէր ամօքում:

Դա մեր առաջին վատ զիններն էր. ես չկարողացայ քնել և լսեցի, թէ ինչպէս Վարդ-Մարին իւր սենեակի լուսամուտը քայ արաւ:

Դուրսը կատարեալ լռութիւն էր, կարծես ոչինչ չէր պատահել:

Ներքին լուղմունքս քնել չէր թողնում ինձ: Չորս ժամին մօտ Ռագօն սկսեց հաչել. ներքեւ դուռը բաղխում էր մէկը: Հագնուեցայ և երկու բոպէլից լետ դուռը բացի: Պըտի-Պէրից՝ Նլէյն-Նիկէլի որդին տեսուչ Լարօշից պատուէր էր քերել ինձ, որ անմիջապէս ներկալանամ իրեն:

Վարդ-Մարին եւ իջաւ Ներքեւ Մի կտոր հաց հաղիւ կերալ և հրացանս լցնելով՝ ուղևորուեցի:

Կօթը ժամին մօտ ես ալ Լարօշի մօտ էի, որ, գրասենյակի առաջ նստած, գրում էր:

—Ա՛խ, դուք էք, Ֆրեդէրիկ,—ասաց նա, գրիչը վալդ զննելով.—Նստեցէք: Անախորժ նորութիւններ ունինք, գիտէք, որ մեր զօրքը ջարդուել է Վիսսամբուրդի մօտ:

—Լսեցի, պ. տեսուչ:

—Յարձակումն անակնկալ է եղել,—ասաց նա.—դա ոչինչ նշանակութիւն չունի և ի հարկէ միւս անգամ էլ չի պատահի:

Նա հանդիստ էր թոււմ, ինչպէս միշտ և ասում էր, որ ամեն պատերազմում պատահում են լաջողութիւններ և ձախողութիւններ, և թէ առաջին պարտութիւնը առանձին նշանակութիւն չունի, թէպէտ և այնուամենայնիւ պէտք է նախազգուշութեան միջոցներ ձեռք առնել առաւել ծանր և անախտաւս դէպքերի համար. ես պէտք է զգուշացնեմ իմ գունդս և անտառում ճանապարհ բանալու համար վարձուած մարդկանց, որ պատրաստ լինին առաջին իսկ կոչին, որովհետեւ դուցէ անհրաժեշտ կլինի ժալուեր քանդելով և խրամատներով ճանապարհները կտրել:

—Դուք հասկանում էք, ասաց նա, տեսնելով, որ ես մի փոքր վրդուլուած եմ,—հասկանում էք, Ֆրեդէրիկ, որ դուք պարզ նախազգուշութիւններ են և որ ոչինչ վտանգաւոր բան չկալ. մարշալ Մակ—Մահօնն իւր ոլթերը կեղրոնացրել է Գագենաուի մօտ, և մենք ստիպուած չենք անմիջապէս չարձակուելու. բայց գլխաւորը՝ պէտք է պատրաստ լինել կարիքի ժամանակ. երբ ամեն ինչ պատրաստ է լինում, ահուհետեւ գործը արագ և վստահ է կատարում: Ես կարող եմ պատուէր ստանալ մեներալ Ֆալլիից որ ճանապարհը կտրենք, և ալդ պատուէրը պէտք է ի կատար ածել մի քանի ժամուայ ընթացքում:

—Դա շատ ժամանակ չի պահանջի, պ. տեսուչ,—պատասխանեցի ես.—ժալուերը մեր ճանապարհների վրայ են կախուած. եթէ քանդենք՝ բոլոր ճանապարհը կլցուի:

—Ի հարկէ, ասաց նա:—Բայց կարևոր է, որ բոլոր ծառալողները նախապատրաստուած լինին: Մարդկանց պահապանութիւն չունինք, երբ պատուէրն ստացուի, եթէ բոլոր ծառալակիցներս միատեսակ դործեն,—մի օրուայ աշխատութիւնը բաւական է որ ոչ մի թնդանօթ, ոչ մի կառասալ էլ չլսուի լօտարինդիա չհասնի:

Ա՛յ թէ ինչ էր ասում նա, ճանապարհ ձգելով ինձ մինչև դուրս և ձեռքս սղմելով:

Ես, մտախոհ, հեռացայ տեսչից և յանկարծ Ալտենբերգի բարձրութեան վերայ մի քանի զինուոր տեսալ, որոնք կտրել

էին ճանապարհը լանջի երկարութեամբ: Ամբողջ աղգաբնակութիւնը աղմկուած էր, մարդիկ իրար մօտ էին վազվզում նոր բան իմանալու: Երկու թէ երեք հետեակ գունդ բանակ էր դրել գետնախնձորի դաշտի վերայ:

Այդ և հետեակ օրը ես պ. տեսչի պատուէրը հաղորդեցի Ֆրամիւլից մինչև Էշբուրգ, Էշբուրգից Խանդէվիլէր, Գրաուֆտալ և Մէտտինգ, ամեն մէկին նախազգուշացնելով, թէ ինչ պէտք է անէ, ուր հաւաքուին և ինչ շեղջեր կուտեն:

Միւս օրը տուն դարձաւ այնպէս լոգնած, որ ոչ ուտել կարողացայ, ոչ քնել: Առաւօտեան դէմ հէնց այն է քնել էի, վարդ-Մարին, մոտենալով սենեակս, բացեց դէպի Դօլէնհէյմ նայող լուսամուտը:

— Լսում է՞ք, հայրիկ, — ասաց նա դողդոջուն ձայնով, — լսում է՞ք ինչ աղմուկ է. ինչ բան է:

Ես ականջ դրի. մի անվերջ աղմուկ լցրել էր լեռները, ժամանակ առ ժամանակ խլացնելով անտառի շուինջը:

Դժուար չէր որոշել, թէ ինչ էր, և ես պատասխանեցի.

— Հրացանաձգութեան ձայն է... այստեղից եօթ թէ ութ լեռ հեռու ճակատամարտ կալ, վերտի մօտ. մեծ պատերազմ է:

Վարդ-Մարին ցած իջաւ, և ես, հագնուելով, իջաւ դահլիճը, ուր էր արդէն տատը, որի ծնօտը դողում էր. — նա վախեցած աչքերով նայեց ինձ:

— Մի վախենաք, — ասացի ես նոցա, — ոչինչ չի լինի. գերմանացիք այստեղ չեն գալ. նոքա գիտեն, որ մենք լաւ ենք պաշտպանուած:

Բայց ինքս էլ ոչինչ լույս չունէի:

Հրացանաձգութիւնը հետզհետէ աւելանում էր, կարծես թէ որոտման հեռաւոր ձայներ էր լսում. ապա մեղմացաւ և լսում էր տերեւների շրջիւնը, Ռադօի հաչոցը զուան մօտ և բաղբիւր կրկնողը գետի եզերքում: Այս բոլոր ձայները կարծես թէ օտարոտի էին, երբ մտածում էի, թէ անտառների ետեւ ինչ էր կատարւում:

Մէկ ուղեցայ բարձրանալ ժալոն ի վեր, որ տեսնեմ թէ ինչ է կատարւում դաշտավայրի միւս կողմը, բայց բոպէ առ բոպէ սպասում էի փոսեր փորելու հրամանին, և ստիպուած էի մնալ:

Այսպէս շալունալիւից մինչև ցերեկուայ երեք ժամը:

Աշխատում էի հանգիստ երևալ, կանանց երկիւղ չաղղելու համար: Այդ օրը, օգոստոսի 6-ը, խիստ երկար եղաւ, այսօր անգամ, մեր կրած բոլոր դժբաղդութիւններից լեռնի, որ լինում եմ այդ օրը՝ կուրծքս ծանրանում է:

Ամենազարհուրելի բոպէս այն էր, երբ բոլորովին կըտրուեց այն խուլ աղմուկը, որ առաւօտից լսում էինք: Դէպ այդին նայող լուսամուտից ականջ էինք դնում, բայց էլ ոչ պալթիւն էր լսում՝ և ոչ ձայն, բացի տերեւների շրջիւնից:

Մի քանի բոպէից լեռնի ես ասացի.

— Պատերազմը վերջացաւ: Այժմ ոմանք փախչում են որ աղատուեն, ուրիշները հալածում են... Տայ Աստուած, որ չաղթանակը մենք տանենք:

Եւ մինչև ուշ գիշեր ոչ մի մարդ չերեցցաւ շրջակայքում: Ընթրիքից լեռնի ցրուեցանք քնելու՝ ամենքի սրտերի վերայ կարծես մի ծանր քար դրած:

ԺԲ

Միւս օրը մռայլ եղանակ էր, երկինքը ամպամած և երկամսեալ երաշտութիւնից լեռնի անձրևեց. ծանր, խոշոր կաթիլներ թափւում էին անդադար. ժամանակը դանդաղ էր ընթանում և աշխատելու հրամանը չէր ստացւում. ես մտածում էի:

«Աւելի լաւ... Նիթէ չաղթում լինէինք, արդէն ստացած պիտի լինէի հրամանը»:

Ոչ մի լուր չիմացանք, և երեք ժամին մօտ, համբերութիւնից ելած, ասացի Վարդ-Մարին ու տատին.

— Լսեցէք, այսպէս չի լինիլ, ինքս կերթամ և կիմանամ թէ ինչ է լինում:

Մոմլաթէ վերարկուս առնելով վրաս ճանապարհ ընկալ չորդ անձրևի տակ: Մեր աւաղուտ երկրումն անձրևը շուտ է ծծւում հողից, և մեծ ցելս չէ գոյանում: Վեց ժամին հասալ Պլտի-Պիերին, ուր բոլոր բնակիչները փակուել էին տներում: Հին ամբողջ առաջ պահապան կար կանգնած: Մի քանի բոպէից ես մտաւ պ. տեսչի գրասենեակը: Նա միայնակ էր և բաղմանող կերպարանքով անցուդարձ էր անում սենեկում, ինձ որ տեսաւ՝ կանգ առաւ և ասաց.

—Դուք էք, Ֆրեդերիկ հալբիկ, եկե՛ք նորութիւններ իմանալու և որեւէ պատուէր:

—Ճիշդ աղբալէս, պ. տեսուչ:

—Է՛հ, մեր նորութիւնները միտթարակաւ չեն: Առիւժնը կորցրել ենք. մեր զօրքերը լիտ նահանջեցին Էլզաս. հարիւր լիտոն հազար գերմանացի Լոտարինգիա են գալիս:

Սարսուռ անցաւ մարմնովս ու շնչացի:

— Բայց մեզ մօտ ամեն ինչ պատրաստ է, պ. տեսուչ. հարկաւոր է միմիայն վառօդ բաժանել, և կարող ենք գործի ձեռնարկել. բոլորովին պատրաստ սպասում ենք հրամանի:

—Ամեն ինչ պատրաստ է,—ասաց պ. Լարօշը, դառը ժպիտով,—բայց էլ մեզ անելու բան չէ մնում. մեր զօրքերը նահանջում են դէպի Բիտչ և Սալերն, և թշնամին ամեն կողմիւր առաջապահ հեծեալօրն է ուղարկում:

Ես պատասխան չտուի, իսկ նա նստեց և շարունակեց.

—Ինչո՞ւ ծածկեմ ձեզանից ճշմարտութիւնը: Ժեներալ Ֆալլին պատասխանում է ինձ, թէ ճանապարհներ կտրելն անօգուտ է, և էլ մեզ բան չէ մնում անելու:

Ես արձանացալ, ոտներս դողում էին: Պ. Լարօշը, ձեռները մէջքին դարսելով, սկսեց լուռ ման գալ սենեկում. ես հարցրի.

—Ի՞նչպէս պէտք է վարուել, պ. տեսուչ:

—Տեղներս նստել, ինչպէս վաղել է ազնիւ մարդկանց սորանից խելօք բան չեմ կարող մտածել:

Մի բան խեղդում էր ինձ... Նա ալդ նկատեց և արտասուքն աչքերին ձեռքը մեկնեց ինձ:

—Արիացիր, Ֆրեդերիկ հալբիկ... Այնուամենայնիւ հաճեւի բան է, որ մարդ ձեռքը սրտին դրած ասէ, թէ ես ազնիւ մարդ եմ... Անձ մեր ամբողջ վարձատրութիւնը:

—Եթէ աղբալէս է, պ. տեսուչ,—պատասխանեցի նորան զգացումով,—այնուամենայնիւ մեզ մնում է մի միտթարութիւն, որովհետեւ ազնուութեան մէջ լիտ չենք մնացել:

Նա ինձ պատուի նշանով ուղեկցեց մինչև դուռը և ձեռքս սղմելով՝ հրամեշտին մի անգամ ևս կրկնեց.

—Քաջ եղէք:

Ես սկսալ իջնել մեծ ճանապարհով: Անձրեւ հեղեղի պէս գալիս էր: Չեմ կարող քեզ պատմել, Ժօրժ, արն ամենը, ինչ որ մտքովս անցաւ ալդ միջոցին: Աւելի կարող անձ պէտք է

լինել զգացածները հաղորդելու, բայց ես ոչ ոք չունիմ ալդ անելու. քանի մի անգամ ձեռքս տարալ երեսիս՝ արտասուքս և վրաս ցալտող անձրեւը մաքրելու. խելքս գլխիս չէր և ալեկրծուած կրկնում էի:

—Ո՛չ մի պատուէր... Ամեն ինչ անօգուտ է... Ժեներալ Ֆալլին ասում է, որ անօգուտ է խրամատներ փորել և ճանապարհներ կտրտել: Նշանակում է, նա ցանկանում է, որ թշնամին մօտենալ մեզ և ձորերն անցնէ...

Շարունակ գնում էի:

Մութ գիշեր էր, երբ հասալ տուն: Վար-Մարին սեղանի առաջ սպասում էր ինձ. նա անհանգիստ հալեացքով նայեց ինձ, և կարծես հարցնում էր. «Ի՞նչ է կատարուում: Ի՞նչ պիտի պատուէրներ է ստացուած»:

Բայց ես անխօս թաց վերարկուս ձգեցի աթոռի թիկունքին ու գլխարկս թափ տալով՝ գոչեցի:

—Դնձ քնիր, Վարդ-Մարի: Այս գիշեր մեզ անհանգիստ չեն անի. հանգիստ քնիր: Ժեներալ Ֆալլին չէ ցանկանում, որ պաշտպանուենք: Պատերազմը տարուած է, բայց կրկնում է Էլզասում, Սալերնում և թերեւ աւելի հեռու, - ճանապարհները աղատ պիտի մնան. մենք կարիք չունինք ճանապարհները կտրտելու— թող անարգել մօտենան գերմանացիք:

Չգլխեմ, թէ նա ինչ մտածեց. բայց տեսնելով, որ ես չեմ նստում՝ առաց:

—Ապուր եմ պահել քեզ համար—չեմ ուզում ուտել. դեռ բոլորովին տաք է:

—Սոված չեմ,—պատասխանեցի ես.—չատ ուշ է, գնանք քնելու, քնելն աւելի լաւ է:

Անկարող էի ալ ևս ինձ դուպել, - բարկութիւնը պատել էր ինձ: Լամպարը ձեռքիս վեր բարձրացալ, Վարդ-Մարին հետեց ինձ: Ամեն մէկս մտանք մեր սենեակը: Ես լսեցի նորա պարկելու ձայնը. գլուխս ձեռքերի մէջ առած՝ ես դեռ երկար նայում էի արն լուսին, որ փալիւլում էր մութ ապակիների վերայ, որոնց ետեւ անձրեւի տակ դողում էին պատուկի տեղիները:

Ալդ գիշեր, լոյս օգոստոսի ութը, գերմանացիք, ամեն ճանապարհները դտած լինելով, խմբերով առաջ էին եկել և բռնել ձորերը, ոչ միայն Յինցէլի, ալ նոյն իսկ Յօրնը, պաշարելով ալսպիսով Ֆալցբուրգի շրջակայքը, որի ութակոծու-

թիւնը սխտեց երկու օրից լետու: Նոքա Լօտարինգիա մտան Գօմարտէնի մեծ ներքնուղու միջոցով, մինչդեռ մեր զօրաբանակը ուժգին կերպով նահանջում էր Նանսի և Շալոն:

Այսպիսով գերմանական Վեօրտի և Ֆօրբիխի երկու ուժեղ զօրաբանակներ միացան, իսկ մենք բաժան բաժանուած էինք և զրկուած ամեն օգնութիւնից և յօսից:

Նրեակայիր ինչ տեսարան էր. Ֆրիդրիխ իշխանի ահագին բանակները—բաւարացիք, վիրտեմբերգցիք, բադէնցիք, թնդանօթաձիգը, հեճեւազօրը, հետեակը վաշտ վաշտ և զունդ գունդ լարձակում էին մեր առանձնացած հովտում, — այս մարդկանց ամբողջ ամբողջ շարաթ շարունակ շարժւում էր մեր աչքի առաջ, — թնդանօթաձիգութիւնը խմբական արձագանք էր դառնում Գրաուֆտալի ժայռերում, և այնուհետև հըրդենի ծովը մութ կամարի նման բարձրանում էր մեր անտառի վերայ:

ԺԳ

Գերմանացի զօրքի եռանդուն շարժողութիւնից և քաղաքի ռմբակոծութիւնից լետու, բոլոր շրջակայքում տեղաւորուեց նոցա զինուորական ուժը: Բոլոր գիւղերն ու աւանները բռնեցին նոքա. այստեղ մի զօրաբաժին, այնտեղ երկուսը, մի փոքր հեռու էլ պրուսական սպաների առաջնորդութեամբ երեք կամ չորսը: Նոքա հսկում էին բոլոր ճանապարհներն ու շաւիղները և շարունակ հարկ էին հաւաքում հաց, հատիկներ, ալիւր, խոտ, լարդ, անասուն, ամեն բան էլ պէտք էր իրենց. զոհ սրտով հաւաքում էին կրակի շուրջ, գորովալից խոտակցում իրանց կանանց ու որդւոց մասին, ցաւակցում էին իրենց խեղճ եղբայրների՝ էլլաոցիների և Լօտարինգցիների վիճակի և ան քաջում մեր զմբաղդութեան վերայ: Բայց այս ամենը չէր խանգարում լաւ ուտել և խմել մեր հաշուին, փռուել տատի կամ սլապի բաղկաթոռի վերայ և կուշտ կուշտ ծխախոտ ծխել, որ մենք պարտաւոր էինք նոցա մատակարարել: Այն, նոցա համար շատ հեշտ էր գեղեցիկ խօսքեր չապելել: Նոյնը տեսել եմ և Գրաուֆտալում, Էշբուրգում, Բէրլինդէնում և Գանդելլիւ ուր դնում էի երբեմն շապկով և փայտը ձեռքիս խմանալու թէ ինչ նորութիւն կալ այնտեղ:

Սեպտեմբերի սկզբին Գազենառ վերաբնակուեց նոցա ժեներալ—նահանգապետ Բիսմարկ-Յօլէնը, լայտնելով, թէ էլլաոց միշտ գերմանական նահանգ է եղած և թէ նորին մեծութիւն պրուսական արքան նորից սեպականացնում է իրան. թէ Ստրասբուրգի, Բիլի, Պֆալցբուրգի և Նեով-Բրիգանի վերայ պէտք է նայել իբրեւ ապստամբների վերայ, որոնք ոտի են կանգնել Վիլհելմ կայսեր օրինական իրաւանց դէմ, բայց որ նոցա շատ շուտով խելքի կբերեն 300 ֆունտանոց ռումբերի միջոցով:

Ահա թէ ինչ էր բացաշկարայ քարոզում մեզ մօտ, Ժօրթ, և սա ցուց է տալիս, որ գերմանացիք մեզ լիմարների տեղ էին դնում, որոնց կարելի էր ամեն տեսակ դատարկ բաներ պատմել, առանց երկնչելու, որ երեսներին կծաղրեն:

Միակ մխիթարութիւնն այն էր մնում մեզ, որ ապրում էինք մի անտառում, որի վերայ այս քաջիկները չէին սիրում ուշադրութիւն դարձնել, և ամեն երեկոյ օրնում էի երկինքն այս բանի համար: Բայց Բիսմարկ-Յօլէնի տեղաւորուելուց լետու, հովտում ամեն առաւօտ ու երեկոյ սկսեցին անցուղարձ անել ձիաւոր ոստիկաններ սաղաւարտներով ու երկաթն վերարկուներով, նահանգապետների պատուէրներն ու լայտարարութեանց ծրարները ձեռքներին, պարտաւորացնելով դատաւորներին կայնել այն եկեղեցիների ու դատարանների դռներին:

Այս ծանուցումներով խոտացւում էր ամենալաւ վերաբերմունք դէպի Վիլհելմ արքայի հաւատարիմ նպատակները և մահ էին սպառնում ամենքին, ով որպիսի և իցէ օգնութիւն կանէ Ֆրանսիացիներին, որոնց «մեր թշնամիներն» էին անուանում: Արգելւած էր նոցա հաց կամ մի բաժակ ջուր տալ, ուղեցուց լինել նոցա և թաղցնել աներում. ազնիւ մարդ լինելու համար նոցա պէտք էր մատնել չհնազանդուելու դէպքում, պիտի ենթարկուէինք զինուորական դատարանի և ամենաթույլ պատիժն այս լանցանքներից մէկն ու մէկի համար՝ էր 25 օրեայ տաժանակիր աշխատանքը և 37,000 ֆրանկ տուգանք:

Այսպիսի միջոցներով Բիսմարկ-Յօլէնը կարող էր դիւրին կերպով կռաւարուել առանց որ և է բացատրութեան ցեղի, գերմանական հայրենիքի և նորին մեծութեան իրաւանց նկատմամբ:

Երեակալիւր ալժմ մեր միաշնութիւնն ու կրկիւղն աս-
պատակողներէց, որոնց չպէտք է հակառակելինք, և թէ թա-
գաւորի անունից երեւին նոքա: Բարեբաղտաբար ալ ժողո-
վուրդը շատ էլ քաջ է: Ըստ տարածուեց, որ շրջակայքում
թափառում էին աղատ հրացանաձիգներ և անդամ վերստից
փախած զինուորներ: Դա մեզ պահպանում էր ալ թաւրի աղ-
զի մեզ համար աջքան մեծ բարիք ցանկացող լաճախորդ-
ներէց:

Ասում էին, թէ անտառային բոլոր ծառաւորներին
պէտք է թողնեն իրանց նախկին տեղերը, թէ մինչև անդամ
ռոճիկները պիտի աւելցնեն և շատերին էլ բարձր պաշ-
տօն տան:

Կարող ես զայրոյթս երեակալել, երբ այս բառերը կրկի-
նեցին իմ առաջ: Ես մեր տեսչի խրատները չէի մոռացել և
ամեն լարմար դէպքում մտաբերում էի ստորադրեալներս:

«Ամենքը պէտք է իրանց տեղերը մնան... բազդը, թեր-
ևս, միշտ մեզ հակառակ չի լինի... Թող իւրաքանչիւր մարդ
իւր պարտքը կատարէ մինչև վերջ... Ուրիշ ոչ մի պատուէր
չկայ»:

Այս իսկ պատուէրը ինքը կատարեց, մնալով Պըտի-
Պիերում և կատարելով իւր պարտաւորութիւնները:

Ստրասբուրգը պաշտպանում էր. Մէցի մօտ կռիւ էին
մղում: Ժամանակ առ ժամանակ ես ուղարկում էի Մէրլէնին
իշխանութիւնից պատուէրներ ընդունելու, և պատասխանը
միշտ միևնույնն էր լինում. «Անյուսալի ոչինչ չկայ... Մենք
կարող ենք վալրկեան առ վալրկեան պիտանի լինել և օգ-
նութիւն ցուց տալ... Թող ամենքը մնան իրանց տեղերը»:

Ես այսպէս, շարունակ ոպասում էինք: Մեր լեռներում
միշտ գեղեցիկ աշունը, իւր կարմիր սաղարթներով, բար-
ձրը խաղաղ անտառով, ուր արդէն ոչ մի թռչնի ձայն
չէր լսում, նոր-հնձած ու անվերջ գորգի պէս հաբթ
մարգերով ու շուշանի չոր տերեւներով ծածկուած գե-
տով, և այս ամեն փառաւոր ու հանդարտ տեսարանը առա-
ւել փառաւոր էր և մօռլ, մեր կրօն դարձուրելի դէպքերէց:

Ո՛րքան անգամ ես այն ժամանակ, լսելով անտառի ան-
վերջ շփոնքը, որով արդէն անցնում էին ձմրան առաջին սար-
սափները, ասում էի ինքս ինձ.

«Երբ դու նայում ես այս վաղեմի, քնած անտառին,

Ֆրեդէրիկ, մի բան կատարում է անտեղ, Շամպայնում, ալդ-
պէս չէ: Ինչ եղաւ այն բաղձաթիւ զօրքը, հեծեալօրով, հե-
տեակով, թնդանօթներով, այն հաղարար էակներով, սրոնք
խստութեամբ ձգտում էին դէպի անկում, ի սէր փառքի և
քանի մի անձանց շահերի: Կտեսնենք արդեօք նոցա լեռ-
փախչելը: Կմնան նոքա Մասի մշուշի մէջ թէ կվերադառնան
և կծանրանան մեզ վերայ:

Ես ես շատ անգամ մեծ պատերազմներ էի երեակալում:
Տատն էլ սաստիկ անհանգիստ էր և լուսամուտի առաջ
նստած՝ ասում էր.

— Լսեցէք, Ֆրեդէրիկ. դուք ոչինչ չէք լսում:

Եւ ես ականջ էի դնում. բայց միայն լսում էր չոր տե-
րեւների հողմից շարժող ձայնը:

Երբեմն, բաց հաղիւ, կարծես քաղաքը խոր քնի մէջ
էր ընկնում. քանի մի ուռմբի ձայներ արձագանք էին տա-
լիս Quatre-vents-ից և Միտտէլբրօնից, և նորից ամեն ինչ
լուռ, Ամեն բանից աւելի սիրտ էր տալիս Մէցը. զլխաւո-
րապէս անտեղից էինք օգնութիւն սպասում:

Այժմ քեզ մի բան պիտի պատմեմ, որ սկզբում մեզ շատ
զարմացրեց և որ ոչ մի կերպ չկարողացանք հասկանալ, բայց
զժբաղդաբար, շատ շուտով պարզուեց թէ մեզ և թէ ուրիշ-
ների համար:

Բիսմարկ-Բօլէնի՝ Գազէնաու տեղաւորուելուց երկու շա-
բաթ անց, մի գեղեցիկ առաւօտ դաշտավայրում մի սալակ
երեւեալ, այն սալերի նման, որոնցով դերմանացիք զաղթում
էին երբեմն Ամերիկա, երբ դեռ երկաթուղի չկար մի երկայն,
ծածկած սալ էր, լարդեալ ներքնակներ, մահճակալներ, կաթ-
սաներ և ամեն դատարկ բան բարձած, հետը մի կեղտոտ
շուն, խճճուած մաղերով մի կին, կեղտոտ երեխաների մի
խումբ և մի տղամարդ, որ սանձը ձեռքին քաշ էր տալիս
տալակը:

Նայում էինք զարմացած և մեզ ու մեզ մտածում.

— Այս ինչ է. ինչու են գալիս սօքա:

Կտաւէ ծածկի տակ, նոյն իսկ սալադեկի մօտ, արդէն
պառաւած, դեղին, կնճռոտած մի կին, չամչիկը ծուռ դրած
զլխին, քթթում էր լարդի մէջ թափթփուած մի քանի շիկա-
հեր տղաների ու աղջկանց զլուխները, որոնց ալտերն ու
փորերը ուռած էին, ինչպէս լինում են բոլոր՝ զետնախնձո-
րով կերակրուողները:

—Հանգիստ կնստեա թէ չէ, Վիլհելմ—կռկռում էր նա: —Սպասիր, թող քիչ էլ նայեմ, սպասիր. էլի ինչ որ տեսնում եմ... Լնւ, բռնեցի... Կարող ես զլխիցս հեռանալ: Վիլհելմին, գլուխդ դիր ծնկանս... ամենքիդ հերթով... ժամանակ կգտնես մայրիներին նայելու...

Իսկ հալը, մի հաստամարմին տղամարդ, մէջքին խիստ ձխտուած կանաչ բաճկոն հագած, կախ ընկած ալտերով, փոքր քթին ակնոցներ, անդրաւարտիքի ծալերը կօշիկներու մոտ մոցրած և լախճապակեալ մեծ ծխամորչը ատամներում, սանձից քաշում էր դժբաղտ սալակը, երբեմն դիմելով կնոջ.

—Մէկ նայիր, Հերմինէ, ինչ անտառներ են, ինչ մարդեր կան այս հարուստ Էլզասում... Իսկ և իսկ երկրալին դրախտ է:

Նոքա ցիգանների էին նմանում, և երբ Մերլենն եկաւ, ամբողջ երեկոյ միմիայն նոցա մասին էինք խօսում:

Բայց մեզ վիճակուած էր ուրիշ շատ բաների ականատես լինել, որովհետեւ այս օտարականների չուելը հին թըրթրակների ու սալակների վերայ, երկանիւ, քառանիւ և ճանապարհին բեզառի պատճառով ժողոված սալերով ուղևորութիւնը շատ երկար շարունակուեց: Այս առաջին սալից լեռոյ, որ այսօր էլ աչքին առջնէ, էլ վերջ չկար նոցա, ամեն օր 3, 4, 5 հատ գալիս էր, բոլորն էլ երեխաներով, ծերերով, դեռատի կանանցով և տարօրինակ հագնուած մատաղահաս օրիորդներով լիքը, հագնուած աչն տարազով, որ տասնընիւնգ, քսան տարի առաջ եմ տեսել մեր սալերնեան տիկիների վերայ թղթէ ծաղիկներով զարդարած մեծ մեծ գլխարկներ ծածկած, և հիւսած, ինչպէս ունեւում են մեր պապերը, դեղին մազերով:

Այս բոլոր մարդիկ խօսում էին մի տեսակ անհասկանալի գերմաներէն լեզուով: Ոմանց դէմքը ուռած, հաստիկ, պատկառելի էլ մօրուք ունէին, ոմանցը՝ նեղ և սրածե, հին, մինչև օձիքը կոճկած և փոխնորդը ծածկող բաճկոն հագած. ոմանք բաց մոխրագոյն աչքեր և խիստ, ստեանման շէկ ալտամօրուք ունէին, միւսները մանր, կլոր, կենդանի, ճարպիկ, բայց ամենքն էլ, մեր սիրուն հովիտը տեսնելով, ակամա աղաղակ էին բարձրացնում հիացմունքից և մարդիկ, կանաչք թէ երեխաք, ամենքն էլ ձեռքերը վեր էին բարձրացնում, ինչպէս, ասում են, անում էին հրէալք աւետեաց երկիրը մտնելիս:

Այսպիսով մեզ մօտ էին գալիս սոքա Գերմանիայի զանազան ծալերից. մինչև սահմանը գալիս էին երկաթուղով. բայց որովհետեւ մեր բոլոր գծերը, Վիստենբուրգից կամ Սուլցից սկսած, նոցա զօրքերով, սննդեղէնի սալերով և պատերազմական գործիքներով լիքն էր, ուստի ստիպուած էին Էլզասի սովորութեամբ սալերով գալ:

Երբեմն դոքա, երբեմն ուրիշները հարցնում էին մեզանից Սալերնի, Մէտտինգի և Լիւտցէլշտէյնի ճանապարհը. կամրջի մօտ, գետափին, դուրս էին սողում սալակներից և ջուր էին խմում խեցիով կամ բռով: Նւ այս բանը կրկնում էր ամեն օր: Նս գլուխ էի պատռում իմանալու, թէ ինչու պէտք է այս օտարականները գալին մեզ մօտ ալսպիսի ծանր ժամանակ, երբ կենսական մթերքները քիչ էին և ոչ ոք չէր գիտէր, թէ միւս օրն ինչ պիտի ուտէր: Այդ մասին նոքա ոչ մի խօսք չէին ասում և շարունակում էին իրենց ճանապարհը: Ապա միայն իմացանք, որ նոքա ևս մասնակցելիս են եղել պատերազմական հարկահանութեան, որով հնար են ունեցել տնտեսութեան հսկել և իրանց ստամոքսը լցնել:

Երևակայիր, Ժօրժ, որ նոր տեսակի այս բօջաները, որոնց արտաքինը նոյն իսկ մեր այդ դժբաղտ բոլէներում կարեկցութիւն էր զարթեցնում մեր մէջ, սպաներ էին, որ Գերմանիան ուղարկում էր մեզ կառավարելու. աչն է՝ հարկահաններ, վերակացուներ, զանձապահներ, ուսուցիչներ և Աստուած գիտէ ուրքեր: Մարդիկ, որոնք սեպտեմբեր և հոկտեմբեր ամսից, խաղաղութիւնը ստորագրելուց շատ առաջ, արդէն սկսել էին երեւալ մեր կողմերը, և հանգիստ կերպով բռնել մեր տեղերը, առանց քաշուելու ասելով մեզ.

—Հեռացիր գնա, թող տուր ինձ:

Կարելի էր կարծել, որ այդ ամենը կանխապէս վճռուած էր, որովհետեւ նոցանից մի քանիսը եկան Ստրասբուրգը լանձնելուց առաջ: Ինչքան շատ էին գարեջրի տակառները, արեցողները, որոնք տարիներով տառապում էին Պամերանիում, Բրանդենբուրգում և Լիւ հեռու, որոնք իրանց տանը երբէք ոչինչ չէին գտնի և չգիտէին ուր գնան և որտեղ վարկ գտնեն, ինչքան այդպիսիներ ներս խուժեցին աչն ժամանակ «հարուստ Էլզաս», այս երկրալին դրախտը, որ խոստացուած էր գերմանացիներին իրանց թագաւորների, պրոֆէսսորների և զպրոցական վարժապետների կողմից:

Այդ ժամանակ նոքա իրանց էլի բաւական համեստ էին պահում, չնայելով իրանց զօրքերի անհաւատալի լաղթութիւններին. նոքա դեռ հաւատացած չէին, որ բախտը կը հովանաւորէ իրենց մինչև վերջ. իրանց հին, ողորկած շորը և խղճուկ տեսքը համեմատելով Էլզասի և Լոտարինգի ամենափոքր սպայի բարեկեցութեան հետ, անշուշտ մտածում էին. «Կարելի չէ, որ Աստուած այսպիսի փառաւոր երկիրը մեր եղբոր համար լինի պատրաստած: Ի՞նչ մի առանձին ծառայութեան համար պէտք է առաջնութիւն ունենանք այն երկրում, որ Փրանսիացիք են մշակել, բնակեցրել, արհեստանոցներով ու գործարաններով հարստացրել... Երանի թէ լեւ չլսէին ու ժեղ չստիպէին վերադառնալ մեր Schnaps-ին»:

Այն, ժօրժ, իսկ և իսկ այսպէս էլ պէտք է մտածէին ընդ որ այն եկուորները, եթէ գէթ փոքր ինչ առողջ միտք ունենային և արդարութեան զգացմունք. նոցա հայեացքի և ժպիտի մէջ մի տեսակ վրդովմունք էր նկատուում: Բայց հէնց որ Ստրասբուրգը անձնատուր եղաւ և Մէյը ծախուեց, ծանր ու բարակ տեղաւորուեցան զեղեցիկ, մեծ մեծ տներում, որ իրանք չէին կառուցել, պառկեցին կուսակալների, դատաւորների և այլ անձանց փափուկ մահճներում, որոնց մասին չէին էլ երազել. հաւաքելով այն երկրի հարկը, ուր իրանք չէին սերմանել, թաթը դնելով մեր կառավարչական բոլոր մատենաների վերայ, որ իրանք չէին հիմնել, և տեսնելով որ «հարուստ Էլզասի» փողերը թափում են իրենց դրամարկը, այն ժամանակ, ժօրժ, արդարև իրանց երեակալեցին ինչ-որ մէկի ներկայացուցիչներ, տեսուչներ, հարկահաններ, վերակացուներ, և այստեղ դերմանական հպարտութիւնը, որ նոքա դիտեն այնպէս լաւ ծածկել նուաստութեան տակ, երբ իրանց ուժեղ չեն դգում, այդ կոպիտ հպարտութիւնը այժմ փքել էր նոցա այտերը:

Երբ ես այնտեղ էի, նոցա լիշողութեան մէջ էր տակաւին Լոմպէ-շարաֆէն, ուր կացել էին երբեմն: Դա ստիպում էր նոցա շատ խնայող լինել. երկու հոգի մի բաժակ քարեջուր էին խմում, և ամէն մէկը վճարում էր իւր բաժնի համար. վիճում էին կոշիկաւորի և դերձակի հետ գնի մասին. քրքրում էին ամեն մի ստացած հաշիւ և հետն էլ գոռում էին, թէ կողոպտում են իրանց: Մեղ մօտ ամեն մի կոշիկաւոր կամաշէր այնպիսի կծծիւթիւն անել, ինչ որ անում էին այս

նոր սպաները, որոնք մեծ մեծ բարկւթներ էին խոստանում մեղ դերմանացուց հալթիւթի անունով և որոնք միաժամանակ ցոյց էին տալիս իրանց զոռելի ժլատութիւնը և զարհիւթիւնը: Մենք հասկանում էինք, թէ ում հետ գործ ունենք:

ԺԴ

Մի անգամ, հոկտեմբերի վերջին, ամեն առաւօտ մեղ մօտ անցնող Բիսմարկ-Բօլէնի ժանդարմներից մէկը կանգնեց մեր դրան առաջ:

— Է՛յ, ո՛վ կալ ալդտեղ,—գոչեց նա:

Ես դուրս գնացի:

— Դուք էք անտառապետը,—հարցրեց նա:

— Այո՛, —պատասխանեցի,—Ֆրեդէրիկ է անունս և այստեղի անտառապետն եմ:

— Է՛յ, առէք ուրեմն,—շարունակեց նա, մի նամակ տալով ինձ:

Եւ կամաց կամաց հեռացաւ դէպի մի փոքր հեռու սպասող ընկերը:

Ես գարձալ տուն:

Վարդ-Մարին տատի հետ չփոթուեցաւ և սկսան անխօս ինձ նայել:

— Ի՞նչ են ուզում ինձնից սլրուացիները,—ասացի ես ծրարը բանալով:

Դա մի հրաման էր Յօրնաշաղ վերաբնակուող անտառապետների տեսչից, որով պատուիրում էր ինձ՝ իմ բաժնի բոլոր պահապաններին հետ ներկայանալ իրան: Նամակը բարձր ձայնով կարդացի և դա վախեցրեց կանանց:

— Ի՞նչ ես մտաւիր անել, հալթիկ, լոպէշապի լռութիւնից լեւ հարցրեց Վարդ-Մարին:

— Ես ես այդ եմ մտածում,—պատասխանեցի ես—Գերմանացիք իբրեւնք չունին պատուէրներ արձակել ինձ. բայց արժ ուժը նոցա կողմն է, կարող են մեղ արտաքսել, երբ ցանկանան,—ուրեմն պէտք է մի լաւ միտք անել:

Ես ման էի գալիս լեւ ու առաջ, շարաշար լողում, երբ լանկարծ ժան Մէլլենը երեւց լուսամուտի տակ, չէմքի երեք աստիճանից միանգամից քալեց և մտաւ սենեակը:

— Բարե, Վարդ-Մարի, բարե, տառիկ: Օրէրֆէրստերից հրաման ստացա՛ք, — հարցրեց նա ինձ:

— Այո՛:

— Ա՛յ, — շարունակեց նա. — նոքա ձեզ հաւատ չեն ընծաւում, որովհետեւ նոյնպիսի հրամաններ ուղարկուած են բոլոր պահապաններին: Ի՞նչ պիտի անենք, գնում ենք:

— Տեսնենք, — պատասխանեցի ես: — Գնացէ՛ք Պըտի-Պիեթ և տեսէ՛ք, թէ ինչ կասէ տեսուչը:

Ժամի ութն էր, և ժանն իսկոյն ճանապարհ ընկաւ. ճիշտ կէսօրին նա արդէն լետ դարձաւ ու ասաց, որ պ. Նա-րօշը խորհուրդ է տալիս իմանալու, թէ ինչ են ուզում մեզանից գերմանացիք և անյապաղ ծանուցանել իրան: Ուրեմն որոշուած էր գնալ: Պէտք է ասել, ժօրժ, գերմանացիները ընակութիւն հաստատելուց ի վեր անտառն ամենաանխիղճ կերպով կողոպտում էին. վաճառելու համար դարսած բոլոր փայտը չերտ առ չերտ անյալտանում էր. լանդվէրը ինչ որ ձեռքն էր ընկնում, ամեն բան վերցնում էր. նոքա սիրում էին պալծաւ կրակի մօտ նստել, իրանց՝ քաղաքի կողմից շինած հողէ ամբողջութիւնների մէջ, գիւղացիք էլ էին պաշար պատրաստում, և կարելի էր կարծել, որ պետութեան սեպ-հակառակութիւնը առաջին հանդիպողին էր պատկանում:

Ես շարունակ աչն էի պնդում պահապաններին, որ նոքա լիչեցնեն լանցաւորներին, թէ անտառը ըստ առաջնոյն պատկանում է Ֆրանսիային և որ պատերազմը աւարտելուց լետ պէտք է դոցա մասին հաշիւ տալ: Իմ անտառաբաժինը աւելի քիչ տուժեց ուրիշներից, որովհետեւ ես առաջուայ պէս չըջագայում էի, իսկ մարդիկ միշտ լարգում են նորան, ով կատարում է իւր պարտաւորութիւնը:

Ժաննի ուղարկեցի ընկերներին զգուշացնելու, որպէս զի ամենքը միւս օրն ինն ժամին հաւաքուին պահապանի տանը, պաշտօնազգեստով, բայց առանց վահանակի, որ ամենքս միասին գնանք Յօրնշտադ:

Միւս օրը, երբ ամենքն եկան, ճանապարհ ընկանք և 12 ժամին արդէն մեծ տան հաշտումն էինք, ուր ընակուում էր պ. Օրէրֆէրստէրը բոլոր ընտանիքով:

Այդ օրը Յօրնշտադում մեծ տօն էր պրուսացիների հաւմար: Նոքա հէնց նոր էին իմացել Բաղէնի անձնատուր լի-նելու լուրը և ամեն պանդոկներում բարձր ձայնով երգում էին: Օրէրֆէրստէրի մօտ ես խնջոյք կար:

Հասկանալի է, որ այս տխուր լուրը առաւել վշտացրեց մեզ:

Դռների մօտ կանգնած էին արդէն վաղուց ժողովուած՝ միւս բաժինների պահապանները և կարլ Վէրնէր, Բալտադար Րեօդիգ անտառապետները և ամենքի գլուխ անցած՝ Յակոբ Գէպպը:

Միմեանց ձեռք սեղմելով՝ որոշեցինք լուրթեամբ լսել Օրէրֆէրստէրի նկատմունքները, իսկ եթէ հարկաւոր լինէր պատասխանել, պէտք է, իբրեւ ամենաաւագ անտառապետը, ես խօսէի:

Ստիպուած եղանք կէս ժամ սպասել, որովհետեւ խնջոյքը երկարում էր, ծիծաղում էին, բաժակները շրկակացնում, նուազում ու երգում. «Wacht am Rhein»:

Չնայելով նոցա անհաւատալի անախառնութեան, այդ մարդիկ այնուամենայնիւ չէի կարծում թէ ազգային խոշոր լաղթանակ կտանեն. և ես կարծում եմ, որ չնայելով վաղօրօք արած պատրաստութիւններին և թուի գերազանցութեան, եթէ մենք ուրիշ վարիչներ ունենայինք — նոքա այդպէս չէին կարող ուրախանալ:

Վերջապէս երկու ժամին մի գերմանացի՝ գլխին կանաչ թաղիքէ և աքաղաղի փետուրներով զարդարած զլխարկ զգրած, ուրախ դէմքով և մինչև ականջները կարմրած այտերով, որովհետեւ խոհանոցից էր դուրս գալիս, դուռը բաց արեց:

— Կարող էք ներս գալ, — ասաց նա:

Անցնելով մի մեծ սենեակ, միւսում մենք տեսանք պ. Օրէրֆէրստէրին: Նա մենակ էր և նստած բաղկաթոռի մէջ երկայն սեղանի ծայրին, — որի վերայ տակաւին մնում էին աղանդերն ու դատարկ շիշերը — կարմրած երեսով և ինքնագոհ կերպով ձեռները խաչած փոքի վերայ:

Դա մի գեղեցիկ տղամարդ էր, կանաչ մահուդէ և կզա-բիսի շորթի բոլորած բաձկոն հագին: Այն, ժօրժ, պէտք է ասած, որ շատ գեղեցիկ, բարձրահասակ, բարեկազմ մի տղամարդ էր, մեծ զլխով, մազերը խուզած, պինդ ծնօտներով, երկայն բեղերով և լալն, ցած կախուած այտամօրուքով: Մի-միայն մեծ, կարծես ուռած սպիտակ բծերով ծածկուած կարմիր քիթը ակամայից ապչեցնում էր ձեզ առաջին վայրկե-նին և կարծես ստիպուած էիր — ի չարդանս նորա կոչման — աչքերը ցած թողնել:

Նա նախում էր, թէ ինչպէս ենք մտնում, իւր փոքրիկ մոխրագոյն աչքերը պշարած. և երբ վերջապէս ամենքս կանգնեցինք սեղանի շուրջը գլխարկները ձեռքներին, նամի անգամ ևս անթարթ հայեացք ուղղեց մեզ վերայ, բաճկոնակը ցած քաշեց, հաղաց և սկսեց մեղմ կերպով.

— Ամենքդ էլ փառաւոր մարդիկ էք երևում. դուք ամենքդ էլ գերմանական բարի կերպարանք ունիք, ալդ բանից ես չառ դո՛հ եմ: Շատ էլ լաւ էք պահում ձեզ. ես չառ դո՛հ եմ ձեզանից:

Կողքի սենեակից բարձրաձայն ծիծաղ լսուեցաւ, որ ընդհատեց նորա խօսքը:

— Գուռը փակիր, Վիլհէլմ.— ասաց նա մեզ ընդունող ծառային. ծառան կատարեց պատուէրը և նա շարունակեց.

— Սո՛, դուք բարի, գերմանական դէմք ունիք... և ես ակամայ զայրոյթ եմ զգում, երբ մտածում եմ, որ ձեզ այսքան տարի ստրկութեան մէջ են պահել, — ալդ թեթեամիտները: Բայց, Բարձրեալի և մեր մեծ ինքնակալ Վիլհէլմի լաղթական զօրքի շնորհիւ՝ ազատութեան ժամը հնչեց, և Սոդոմ Գոմորի թաղաւորութիւնը վախճան ունեցաւ: Այսուհետեւ ընտանիքների ազնիւ հայրերն ու հաւատարիմ, իրանց պարտաւորութիւնները ազնւութեամբ կատարողներն ու նորին մեծութեան սեպականութիւնը պահպանող ծառաները ստիպուած չեն լինի հինգ կամ վեց հարիւր ֆրանկ ուճկով ապրել, մինչ օրէնքը խախտող որեւէ բաղդախնդիրներ, խաղամոլներն ու զանազան արատաւորներ տարին քառասնական միլիոններ են սեպականացնում իրանց՝ պարեկող կանաչք, խոհարարներ, խաբեբաներ, լրտեսներ պահելու, ալ և նորահամար, որ անշրջանկատ կերպով, լիմարաբար, առանց որեւէ շարժառիթի պատերազմ՝ լատարարին խաղաղ դրացիներին, չունենալով ոչ զօրք, ոչ պատերազմական զործիք, ոչ թընդանօթ, միով բանիւ ոչինչ: Չէ, ալդ բանն ալ ևս չի լինիլ ձեր Գերմանիան թող չի տալ:

Նւ միանգամայն դո՛հ իւր ճառից, պ. օբէրֆէրստէրը մի բաժակ գինի լցրեց, մտքերը թարմացնելու համար, քիչ քիչ խմեց, աչքերը կիսախուփ, և շարունակեց.

— Նա ձեզ կանչեցի այստեղ, որ ձեզ հաստատեմ ձեր պաշտօններում. որովհետեւ դիտեցի անտառները, ամեն ինչ կարգին գտալ, համողութեցի, որ դուք հաւատարիմ ծառաներ

էք. ուստի և արդարութիւնը պահանջում է ձեր տեղերում թողնել ձեզ. Նւ ես լալտնում եմ, որ ձեր ուճիկները կիրկնապատկուին. հին ծառայողները արձակուելու փոխարէն բարձր պաշտօն կստանան. Նոքա իրանց կոչման համեմատ բաւարարուած կլինին, — միով բանիւ, նորին մեծութեան առատատուութիւնը կտարածուի բոլորիդ վերայ և ձերութեան հաստատում օրհնող կլինիք ազնիւ էլզասի բաղտաւոր միացումը իւր ալժմեան հայրենիքի հետ: Գուք ժամանակով կպատմէք ձեր որդոց ու թոռներին այն Բաբիլոնիան գերութեան մասին, որի մէջ այսքան երկար նեղութիւն ու տանջանք կրեցիք, և նույնպէս ամենահաւատարիմ ծառաները կլինիք նորին արքայական մեծութեան: — Ահա իմ ցանկութիւնը: — Այդպիսի հաւատարիմ ծառաներ, լարդուած իրանց հրաշալի ծառայութեան համար, միշտ մեծ աղղեցութիւն ունին գիւղացիների վերայ: Գուք պէտք է բարձր ձայնով ու բաց արտաբայութեք ձեր սրտադին, իւրաքանչիւր գերմանացու սրտում կենդանի, անձնուիրութիւնը մեր մեծ արքայ Վիլհէլմին: Այո, պէտք է երգուէք. ինչ վերաբերում է ուճիկ աւելցնելուն, ես ձեզ օբէրֆէրստէրի խօսք եմ տալիս, որ ամեն ինչ կկարգադրուի, ինչպէս ես ձեզ ասացի:

Խօսելիս նա շարունակ դիտում էր մեզ: Մեր ետևում կանգնած էին երկու թէ երեք բարձրահասակ գերմանացիք. համազգեստով, որոնք ըստ երևութին ոչ թէ միայն լափշտակուած էին, այլ և խորը զգացուած նորա ճառից: Բայց մենք, գլխարկները ձեռներին, կանգնած էինք խիստ անտարբեր. և որովհետեւ ես պէտք է պատասխանէի, ուստի ամենքն ինձ էին նախում, աշխատելով դուշակել իմ միտքս: Գու հասկանում ես, Վոթթ, թէ ինչ մեծ էր իմ ներքին զայրոյթը, երբ լսեցի, որ մեզ անուանում են ազնիւ մարդիկ և հաւատարիմ ծառաներ, եթէ մենք զաւաճաններ զառնանք: Նս զգում էի, որ արիւնը խփում էր երեսիս, և կցանկալի հնար ունենալ պատասխանելու, որ միայն վատերը կարող են ազնիւ մարդու տիտղոս ընդունել, պատուին զաւաճանելով, — բայց լեզուս պահեցի, չուղեմալով ընկերներիս անպատուել, վասնզի նոցանից շատերը ծանրաբեռնուած էին ահագին ընտանիքներով. պատասխանատուութիւնը խիստ ծանր թուեցաւ ինձ:

Նրբ ճառն աւարտեց, պ. օբէրֆէրստէրը մի սուր հալեացք ձգեց մեզ և լատկապէս ինձ վերայ:

—Ի՜նչ ինչ կասէք, իրաւունք եմ տալիս խօսելու, — աւագ նա:

—Պ. օրէքՖէրստէր, — պատասխանեցի ես, — ընկերներս իրաւունք են տուել ինձ, ինչպէս ամենից աւագ անտառապետի, խօսելու ամենքի կողմից. բայց ձեր առաջարկութիւնը վերին աստիճանի լուրջ բան է, և ես ենթադրում եմ, որ մեզանից ամեն մէկը ժամանակ կ'իսնդրէ մտածելու:

Ամենքը դուրսնեղը խոնարհեցին. իսկ նա, միանգամայն զարմացած, — վասն զի կարծում էր, թէ ռոճիկն աւելացնելը վճռել էր ամեն բան, — մի բողբոջից աւելի նստած էր աչքերը չռած, և նայում էր ինձ, կարծես թէ մի տարօրինակ քան տեսած լինէր. վերջապէս նա մի աչք ածեց միւսներին և աւելացրեց արդէն խիստ կերպով.

—Ես ձեզ 24 ժամ միջոց եմ տալիս: Վաղը հէնց այս ժամանակ ես պէտք է ունենամ զրաւոր և ամեն մէկիդ ստորագրութեամբ պատասխան. այս կամ ոչ: Մի կարծէք, թէ մարդիկ չունինք, Գերմանիայում շատ կան փորձուած անտառապետներ, որոնք ձեզանից լաւագոյնից պակաս հմուտ չեն գործին. և նոքա շատ ուրախ կ'լինին հարուստ Լիլլասը վերաբերուեալ տաք բներում հրաշալի անտառների մէջ, առաւօտ երեկոյ շրջապակում իրանց բաժնում, արձանագրութիւն կադմեւում և այդ բանի համար 1500 Փրանկ ստանալու տարին, տուն պարտիդով, խոտհոնձ, վառելափայտ, արօտատեղ կոլի համար և մնացեալ ամեն բան: Ո՛չ, այդպէս մի կարծէք: Հարկաւոր մարդիկ անհամբեր սպասում են, որ մի նշան տանք դալու: Եւ ձեր պատասխանը լաւ կ'ըլլէք. մտածեցէք ձեր վրանանց ու երեսօտոց մասին, լիշեցէք, որ գուցէ ստիպուած լինիք դառնապէս զղջալ, եթէ ասէք-ոչ: Ֆրանսիան խաղաղաւերուած է, նա ոչ մի կողմէի չունի. Լանդերում և Բրէտանում մնացած ողորմելի անտառները աւելի պէտք անդամ չեն. այդ մացառների պահապանները կ'մնան իրանց տեղերում, իսկ դուք երբէք տեղ չէք ստանալ. Դուք—գերմանացիներ: Ֆրանսիացիք շահագործում են և անարդում են ձեզ. նոքա ձեզ հաստագլուխ են անուանում: Մտածեցէք այս ամենը. ես խորհուրդ եմ տալիս ձեզ իբրև աղնիւ մարդ, ինչպէս գերմանացի-եղբայր և ընտանիքի լաւ հայր:

Եւ նա նայեց ինձ, սպասելով, որ ես որեւէ բան կ'ասեմ,

բայց ես չըթուեցներս հուստ տուի և զղացի, թէ ինչպէս ճապատու կարծես սառը օդի հոսանք էր անցնում:

ԺԵ

Բոլոր ընկերներս նոյնպէս լուռ էին: Մեր կողքին, դրան ետեւ նուազում էին զաշնամուրի վերայ. մի կին երգում էր քնքուշ ու թախծալի եղանակով:

—24 ժամ—կրկնեց նա վերկենալով, — և ոչ մի բողբոջ աւելի:

Եւ, բարկացած՝ անձեռոցը սեղանի վերայ շարտելով, աւելացրեց.

—Լաւ իմացէք, որ ոչ պատասխանը իսկույն ճանապարհ կտայ. ճանապարհը լաւն բաց է: Մենք չենք կարող տանել մեր թշնամիներին և վնասակար մարդկանց մեր մէջ... այդ մեծ լիմարութիւն կ'լինէր... Ֆրանսիացի հօ չենք:

Նա ներս մտաւ մօտակալ ընդունարանը, իսկ մենք դուրս եկանք նախասենեկով:

Ֆորստմէյստրի վերջին խօսքերը, թէ «մեզ դժուար կ'լինի էլզասում տեղ ստանալ և թէ գերմանացիք առանց խնայելու կարողանան մեզ՝ զարհուրելի էր, և ամենից անվեհերները լուսահատուեցան:

Մի քանիսի մտքով անցաւ մտնել «Եղենու տակ» պահուկը խորհրդակցելու. նոցա առանձնապէս հետաքրքրում էր իմ կարծիքը. բայց ես նոցա ասացի՝ պանդուկի դրան առաջ:

—Այժմ, ընկերներ, պէտք է խնայել այն փոքրիկ դրամը, որ ունինք. մի դաւաթ գինին հինգ սու արժէ — բայց հինգ սուն էլ փող է: Ժողովրդային թշուառութեանց ժամանակ ամեն բան թանկ է. չուելը թանկ է նստում, մանաւանդ կանանց, երեսաների և ձերերի հետ ճանապարհորդելը:

Բարձրահասակ Վէրնը անշուշտ ցանկանում էր իմանալ, թէ ես ինչ եմ մտածում. շատերը չըջապատել էին ինձ և ես ասացի.

—Լսեցէք... իմ կողմից ես դիտեմ թէ ինչպէս պիտի վարուիմ, բայց այսպիսի վարկեաններում ամեն մէկը պարտաւոր է գործել իւր գիտեցածի պէս. ամեն մէկը իւր խղճի տէրն է, — ուստի և ես ոչ ոքի խորհուրդ չեմ տալ:

Տեսնելով, որ վեց երեխաների հայր Յակովբ խէնը խելքը թուցրեց, և ձեռները ցած թողնելով՝ դետնին էր նայում, աղաղակեցի.

— Ընկեր, ձեռքդ տուր սեղմենք, դուցէ վերջին նուազ: Թող հին բարեկամական լիշատակները մեղ հետ լինին ամենուրեք, ուր երկինքը կառաջնորդէ մեղ:

Ոմանք համբուրուեցան, և մենք բաժանուեցանք:

ԺԶ

Ժան Մէրլէնն ու Լու մենակ ուղևորուեցանք դէպի Ֆալքերդ, չգիտեմ ինչ արին միւսները—մտան պանդոկ, թէ տուն դարձան:

Իսկ մենք աչնպէս էինք մտածում ինքների մէջ խորատուղում, որ երկար գնացինք առանց ձայն հանելու:

Յօրնշտադից դուրս գալով՝ բարձրացանք Բրիւէրի բարձրութեան վերայ, մինչև Գրաուֆտալի դաշտը: Յանկարծ արեւը, ամպերի տակից դուրս նայելով՝ լուսաւորեց անտառները: Արևի լուսի տակ մերկ ծառերի միջից, հովտի խորքում, տեսանք աչն սիրուն տնակը, ուր երկար բաղդաւոր օրեր էին անցրել աչն օրից, երբ Բրուատ հալրիւն իւր դուստրը կնութեան տուաւ ինձ:

Լու կանգ առաւ: Ժանը նույնպէս կանգնեց, և լինուելով ձեռնափախտերի վերայ՝ երկար ժամանակ նայում էինք, կարծես թէ երազում լինէինք:

Բոլոր անցկացրածս տարիները պատկերացան աչքիս առջև:

Փոքրիկ տնակը ալդ պաճառ և ցուրտ օրը կարծես նկարուած լինէր բլրակի վերայ, բարձրուղեւ եղնինների մէջ. գորշ տանիքը, ծխող ծխնեւոյղը, լուսամուտը, ուր Վարդ-Մարին դարնանը դարսում էր մեխակն ու չափրուկը, աչն վանդակը, ուր պտտում էր բաղեղը, սրահը՝ որդնակեր սիւներով—աչս ամենը աչնպէս մօտ էր երևում մեր աչքին, որ թւում էր, թէ կարող էինք ձեռքով չօշափել:

Նայելով ալդ տեսարանին՝ ես մտածում էի.

«Նայիր, Ֆրեդէրիկ, նայիր ալդ խաղաղ անկիւնին, ուր

անցել է քո երիտաւարդութիւնը և որտեղից պէտք է դուրս գնաս ալեղարդ գլխով, չգիտենալով, թէ ուր գնես աչն: Այդտեղ էին բնակում կինդ և զաւակներդ, որոնցից ոմանք հանգստանում են նորա կողքին Գօլէնհայմում: Նայիր... չի՛ չիր անցեալ կեանքդ, որ անց ես կացրել լաւ մարդոց մէջ, որոնք քեզ անուանում էին բարի որդի, բարի հայր, աղնիւ մարդ և որոնք Աստուծոյ օրհնութիւնն էին հացում քեզ վեմարդ և որոնք Աստուծոյ օրհնութիւնն էին հացում քեզ վեմարդ, ինչ բանի ծառայեց բարի հայր և բարի որդի լինելդ, աղնիւ վերաբերուելդ դէպի քո պարտաւորութիւնները, երբ քեզ քշում են, և ոչ ոք չէ կարող քեզ պաշտպանել: Գերմանացիք ալժամ հզօր են, և ոչքը երևում է բարձր իրաւունքից, որ նույն իսկ Աստուծոյ է սահմանուած...»

Ես սոսկացի, որ համարձակուեցայ տրտունջ լայտնել Նախախնամութեան դէմ. բայց տանջանքս շատ ծանր էր, անօրինութիւնը թւում էր ինձ խիստ մեծ... Թող ներէ ինձ երկինքը, որ ես կասկածեցի նորա վերայ:

Իսկ բոլոր մնացածի վերաբերմամբ, իմ որոշումս անդրդուելի էր. աւելի շուտ կհամաձայնէի կորչել, քան ստորութիւն անել: Նայելով Մէրլէնին, որ իմ կողքին լինուել էր թխտենուն, ասացի.

— Վերջին անգամ եմ նայում իմ հին տանը. վաղը ֆօրստմէյստրը իմ պատասխանը կըստանայ, իսկ միւս օր բոլոր ունեցածս սալի վերայ կլինի: Ասացէք ալժամ, դուք ինչպէս պիտի վարուէք:

Նա խիստ կարմրեց և պատասխանեց.

— Ո՛հ, Ֆրեդէրիկ հալրիկ, ինչպէս էք այդ մասին հարց տալիս ինձ: Դուք ինձ վերաւորում էք: Միթէ չգիտէք թէ ինչպէս կվարուեմ: Աչնպէս՝ ինչպէս դուք. աղնիւ մարդը միւս աչն մի ճանապարհ ունի:

— Այդ լաւ է. ես առաջ էլ հաւատ ունէի ձեզ վերայ, բայց ուրախ եմ, որ դուք արդարացրիք իմ վարկումը ձեր մասին: Պէտք է, որ ամեն ինչ պարզ լինի մեր մէջ: Մենք գերմանացի չենք, որոնք 36 ճանապարհով են մերձենում ամեն բանի և բոլոր միջոցներն էլ լաւ են համարում միայն թէ գործը չաջողի: Դեհ, գնանք, Ժան, վստահ:

ԺԷ

Սկսանք բլրից ցած գալ, և խոստովանում եմ, ժօրժօ, քանի մօտենում էինք տանը, ծնկներս սկսում էին դողալ երբ մտածում էի, թէ ալդ զարհուրելի միտքը պիտի հաղորդէի դստերս և տատին։

Վերջապէս—հասանք չէմքին. առաջինը ժանը մոռաւ։ Ես հետեւեցի նորան, դուռը փակեցի ետեկից։

Չորս ժամի մօտերքն էր, Վարդ-Մարին ընթրիքի համար դետնախնձոր էր կճպում, իսկ տատը նստած բաղկաթուռի մէջ, տաքանում էր կրակի մօտ, ինչպէս սովոր էինք նորան տեսնել։

Նրեակալիւր իմ դրութիւնը. Բնչպէս սկսէի ասել նոցա, թէ դերմանացիք արտաքսում են մեզ։ Բայց բաւական էր խեղճ կանաչք նալէին մեզ, որ իմանային, թէ մի ծանրակշիւ բան է կատարուել։

Ձեռնափախտս դրի ժամացուցի մօտ և ղլխարկս կախելով մեխից, մի քանի անգամ անցուղարձ արի սենեակում. ինչ և լինէր, պէտք էր պատմել ֆօրստմէյստէրի արած առաջարկի մասին պրուսական ծառայութիւն մտնելու։ Առանց շտապելու, ամեն ինչ պարզ պատմեցի, առանց բան ծածկելու և աւելացնելու, ցանկալով, որ ալդ ողորմելիները կարողանային ազատութեամբ ընտրել չքաւորութիւն կամ նախատինք։

Ես հաւատացած էի սակաւն, որ չքաւորութիւնը կնախաւորէին։

Վարդ-Մարին, ամբողջովին զուճատուած, մի վալրկեան ձեռքերը երկինք բարձրացրեց ու շշնջաց։

—Միթէ կարելի բան է ալդ, տէր։ Միթէ ալդ տեսակ անպիտաններ դուրսիւն ունին աշխարհում։ Ա՛խ. լաւ է մեռնել, քան ալդպիսի մարդկանց հետ կապուել։

Ինձ ուրախացրեց, որ աղջիկս ալդպիսի սիրտ ունի, և ժան Մէրլէնն այնպէս զգացուած էր, որ ես տեսայ, թէ ինչպէս ձգւում էր նորա երեսը։

Տատը թախաճարուեց, ինչպէս խխունջը խեցիի մէջ, նորա ծնօտը դողդողաց, հանգած աչքերը բարկութեամբ փալլեցին. ես ինքս ջախջախուած էի. Նրբ ասացի, թէ ֆօրստ-

մէյստը, եթէ մենք հրաժարուենք Պրուսիային ծառայել, 24 ժամ է միայն տալիս, որպէս ղի տանից քաշուենք, նա չկարողացաւ իւր զայրութիւնը ծածկել։

—Այս տունը թողնենք,—ասաց նա տեղից բարձրանալով,—երբէք։ Սա իմ տունն է։ Ես այստեղ եմ ծնուել. 80 տարուց աւելի է չեմ հեռացել այս տնից։ Պապս Լօրան Դիւտարուց աւելի է չեմ հեռացել այս տնից։ Ես այստեղ եմ ծնուել. 130 տարուց աւելի է, ինչ որ նա պողարեր ծառեր է տնկել այս բլրակի վերայ. հալրս ժակմէնը առաջինը ճանապարհաց արաւ մինչև Դոդէնհայմ և շաւիղ մինչև Տօմօնթալ. ա՛մուսինս Ժօրժ Բրուտը և փեսաս Ֆրեդէրիկը, որ ներկայ է այստեղ, տնկել են հաճարիների և եղևինների ծառատանները, որոնց անտառներն աճում են երկու հովիտների երկայրը, նուրբամբ. մենք ամենքս խաղաղ ապրում էինք այս տանը, մենք ենք ձեռք բերել սորան. մենք պատել ենք պարտէզը կենդանի պատնէշով և ցանկապատով. ամեն մէկ ծառը—մեր սեպհակա՛ ութիւնն է. մենք փող ենք խնայել, որ մարդաղէտին գնենք, կալատեղ և անասունների համար բազ շինենք... Մեղ արտաքսում են այս տանից։ Ա՛խ, անպիտաններ... Ահա՛ ինչպէս են գերմանացիք վարւում... Դեհ, թող մէկ զան. Խնքս, Աննա Բրուտսս, կիսօսեմ նոցա հետ։

Չկարողացալ խեղճ զառամած տատիս հանգստացնել. ինչ որ նա ասում էր, բոլորը ճշմարիտ էր. բայց ի զուր կլի։ Նէր խօսել այն մարդկանց հետ, որոնք պնդում էին, թէ ոչ ոք ամեն բան է և թէ նախատինքն ու անարդարութիւնը ոչինչ չէ նշանակում։

Նրբ նա հետևով նստեց, ես հարցրի թախձալի, բայց հաստատ ձայնով։

—Տատիկ, կկամենա՞ք, որ ես գերմանացիների մօտ ծառայութեան մտնեմ։

—Ո՛չ,—պատասխանեց նա։

—Է՛, ուրեմն 48 ժամից լետ պէտք է ամենքս միասին այս տանից հեռանանք։

—Երբէք,—աղաղակեց նա։—Ես չեմ ցանկանում։

—Բայց ես ասում եմ, որ պէտք է անել։ Ես ուզում եմ...

—Ա՛խ,—զարմացած դուրս պրծաւ նորա բերանից։

Ես շարունակեցի խոցուած սրտով։

—Տատիկս, գիտե՞ք, որ ես միշտ անշափ լարգել եմ ձեզ։

Հազար անէծք այդ գերմանացիներին, որոնք ստիպել են ինձ ձեզ հետ այս եղանակով խօսել, ես նոցա աւելի խիստ կ'անիծէի, եթէ հնարաւոր լինէր... բայց միթէ չէ՞ք հասկանում, տատիկ, որ այդ վարենիները, առանց ամօթի, խղճի և կարեկցութեան նոյն իսկ դէպի ծերութիւնը, եթէ դիմադրութիւն տեսնեն, պատրաստ են ձեզ էլ քաշ տալ ձեր ալեղարդ մազերից. դուք ոյժ չունիք, իսկ նոքա ուժեղ են—և այդ բաւական է... Միթէ չէ՞ք հասկանում, որ ես, այդպիսի տեսարան տանել չեմ կարող, և եթէ նոքա ամբողջ գունդ անդամ լինին—կարձակուեմ նոցա վերայ, և նոքա ինձ կ'ապանեն... Այնուհետեւ ինչ կ'լինի ձեր և դստերս գրութիւնը: Անա խնջի մասին պէտք է մտածել, տատիկ: Ներեցէ՛ք, որ ձեզ հետ այսպէս կ'ոպխտ եմ խօսում, բայց ես նոցանից ոչ մի շնորհ չեմ ուզում, և հաւատացած եմ, որ դուք նոյնպէս չէ՛ք ցանկանալ, այդ անսիրտ մարդիկ այդ շնորհն էլ չէին անի մեզ:

Տատի աչքերը արտասուքով լցուեցան և շշնջաց.

—Ո՛հ, Աստուած իմ, Աստուած. պէտք է թողնեմ այն տունը, ուր ես յօւս ունէի թողանալ երջանկացած տեսնել, խնամել ծուռներին... Աստուած իմ, ինչո՞ւ չկանչեցիր ինձ քեզ մօտ աւելի շուտով:

Նա աչնպէս դառն էր լաց լինում, որ մեր սրտերը կը տրտաւում էին. ամենքս գլուխները կ'ախել և զգում էինք, թէ ինչպէս արտասուքի կաթիլները միմեանց ետեւից գլորւում էին մեր այտերի վերայով: Որքան լիշողութիւններ կ'ալին մեր ամեն մէկի առաջ, բայց խեղճ տատի առաջ առաւել շատ, քան մերն էր. նա հովտից հեռանում էր տարին երկու կամ երեք անգամ, դնում էր Սափերնի և Ֆալցբուրգի վաճառանոցը. այս էր նորա ամենահեռաւոր ճանապարհորդութիւնը:

ԺԸ.

Վերջապէս սարսափելի հարուածը տրուեցաւ Անհրաժեշտութիւնը, Ժօրժ, սոսկալի անհրաժեշտութիւնը, ստիպում էր ինձ խօսել, կանաչը հասկացան, որ պէտք էր հեռանալ, գուցէ և ընդ միշտ, որ ոչ մի բան չէր կարող հեռացնել մեզանից այս զարհուրելի զփթաղութիւնը:

Բայց պարտաւոր էի մի ծանր պարտականութիւն էլ

կատարել: Հէնց որ լաց ու կոծր հանդարտեց տանից հեռաշաւու որոշումից լետով և ամեն մէկս լուսահատ այդ մասին էինք մտածում, ես սկսեցի նոր բացատրութիւն.

—Ժան Մէրլէն, —առացի ես, —դուք խնդրեցիք դուստրս կնութեան, և ես ձեզ իբրեւ որդի ընդունեցի, որովհետեւ լաւ ճանաչում էի ձեզ և չարգում: Այս վճռուած բան էր, մենք խօսք տուինք միմեանց, և այս բոլորովին բաւական էր... Բայց այն ժամանակ ես անտառապետ էի, իրաւունք ունէի հրաժարական տալ պաշտօնիցս, և իմ տեղս խոստացուած էր ձեզ. ես հարուստ չէի, բայց մի բան ունէի. և դուստրս լաւ ընկեր կարող էր համարուել: Այժմ ես ոչինչ եմ, ճիշտն ասելով՝ մինչև անգամ աղքատ եմ: Հնոտի կարասիս, որ մնում է ինձ, այստեղ մեր տանը լարմար էր. բայց երբ հարկ լինի տալին, այստեղ մեր տանը կարող է լինել մեզ, այն մարդագետինը, որ գնել եմ հաւաքածս գրամով, զին ունէր իբրեւ տանս մօտ գտնուող, իսկ եթէ վաճառեմք՝ կէս գին էլ չեն տալ:

Դեռ դուցէ գերմանացիք կըլալանեն, որ անշարժ կա. լուածքը ուղղակի նոցա պէտք է անցնի որպէս սեպհականութիւն: Այդ միայն նոցանից է կ'ախուած, վասն զի ով ուժեղ է—նա է և արդար: Դուք էլ առանց դործի չմնաք. ձեր պառաւ մայրը ձեր խնամքին պէտք է մնայ, Վին պահելը, այս բոլոր զփթաղութիւնների մէջ, ծանր կ'լինի ձեզ... Այս բոլոր պատճառներով, Ժան, իմ և դստերս պատիւը պարտք են դնում ինձ վերաջ խօսքդ լետ դարձնել ձեզ: Հանգամանքները փոխուեցին, Վարդ-Մարին ոչինչ չունի, և ես հասկանում եմ, որ այսպիսի ծանր դէպքերում աղնիւ մարդը կարող է իւր դիտաւորութիւնը փոխել:

Մէրլէնը գունատուեց, ինձ լսելիս, և դողդոջուն ձայնով պատասխանեց.

—Ես ցանկանում էի Վարդ-Մարինի հետ ամուսնանալ հէնց իւր սիրուն, Ֆրեդերիկ հարկի, և միայն նորա համար, որ սիրում եմ նորան, և նա ես ինձ է սիրում: Ես ցանկանում էի պսակուել նորա հետ ոչ ձեր պաշտօնի և ոչ նորա օժիտի համար. եթէ ես այդպէս վարուէի, անպիտան մարդ կ'լինէի: Այժմ աւելի լաւ եմ գնահատում նորան քան առաջ, վասն զի համոզուեցաւ, թէ ինչ պատուական սիրտ ունի նա, իսկ սա ամենից բարձր է:

—Եւ վերկենալով՝ ձեռքը մեկնեց նորան։

—Վարդ-Մարի։

Հազիւ թէ արտասանել էր նորա անունը, օրիորդը արտասուալից աչքերով վրայ ընկաւ ու փաթաթուեց նորա վրով։ Նոքա երկար աչդպէս զրկած կանգնած էին, իսկ ետ մտածում էին։

«Դուստրս աղնիւ մարդու ձեռքին է—սա ամենամեծ մխիթարութիւնն է մեր ամեն սոսկալի դժբաղտութիւնների մէջ»։

Սորանից չետով, ժօրժ, չնայելով մեր բոլոր լուսահատութեան, խաղաղութիւնը տիրեց մեզ վերայ, Մէրլէնն և ես որոշեցինք միւս օրն այս պատասխանը տանել Զօրնչտադ։

«Ո՛չ, պարոն ֆօրստմէյստր, մենք չենք ծառայի պրուսաց արքային»։ Ես տեղնուտեղը դրեցի աչդ, և ժանը տոմսակը դրեց զրպանը։

Վճռուած էր նոյնպէս, որ առաւօտը վաղ ես գնալի Գրաուֆտալ, մեզ համար բնակարան որոնելու։ Իկէլի մօտ առաջին լարկում երեք սենեակ միշտ ազատ էր գերմանացիների արշաւելու ժամանակից։ Ի՞նչ մի ճանապարհորդ չէր երևում մեր կողմերը։ Իկէլի ակոռն էլ դատարի էր, և լոյս ունէի վարձել աչդ բոլորը արժան գնով։

Մէրլէնը զեռ պէտք է մօրն ևս նախազգուշացներ, որ անտառը թողնելու էր. նա ասաց, թէ մօրը Ֆալբէրգ կուղարկէ, ուր Գանիէլ հօրեղբայրը ուրախութեամբ կընդունէ նորան։ Գպրոցական աչդ հին վարժապետը երկար ժամանակ ապրում էր քրոջ հետ միասին. միայն երբ ժանը սաշտօն ստացաւ, նա մօրը տարաւ իւր տուն Տօմօնթալի անտառում։

Բարի պառաւ Վարդըղէլն ուրեմն պէտք է վերադառնար իւր նախկին կացարանը։

Սոքա էին մեր վերջին որոշումները։ Ժանը իւր վերայ առաւ նաև Լարօշի մօտ մտնելու աշխատանքը, տեղեկացնելու նորան պատահած անցքերի մասին և ասելու, որ ես կը գնամ նորան տեսնելու, հէնց որ կտեղափոխուեմ։ Նա մի անգամ ես զրկեց Վարդ-Մարիին, մի քանի դովետտի խօսքեր ասաց տատին և դուրս գնաց։ Ես ուղեկցեցի նորան մինչև դրան շէմքը և բաժանուեցանք։ Գիշերը եկաւ. սառտիկ ցրտեց, ամեն մի դալար փալլում էր եղեամով և երկինքը արծաթազօծում աստղերով։ Ալդպիսի մի ժամանակ մենք ստիպուած էինք տունը դատարկել և ուրիշ ապաստանարան որոնել։

Երբ ևս դարձաւ տուն, Կալաոր սեղանի վերայ դրեց գետնախնձոր և երկու ամանով շիճուկ. նա զարմանքով նայում էր ինձ, և ոչ ոք տեղից չէր շարժում։

—Նստիր Կարնս, — ասացի նորան. — արօր մենք ամենքս սովածացել ենք։

Նա նստեց և սկսեց գետնախնձորը կծակել. ակոռատան աղբը մաքրելով և անասուններին կեր տալով—նա դորանով լրացնում էր իւր բոլոր պարտականութիւնները. նորա խիղճը հանգիստ էր։

Բաղդաւոր է ով միւս օրուայ համար մոմտուք չունի և ում վիճակուած չէ թշնամու լարձակման ականատես լինել... Սկիւնոքա մեր տանջանքների մի չորրորդն էլ չեն կրում... Սկիւռը, նապաստակը, աղուէսը, բոլոր կենդանիները մաղով են ծածկում ձմեռնամային. թռչուններին աղուամաղ է դուրս գալիս փետուրների տակ. իսկ դոցանից նոքա, որոնք չեն կարող ձմեռը ցուրտ երկրում ապրել, միջատների պակասութեան պատճառով, որոնք ծառալում են նոցա իբրև կերակուր, օժտուած են ուժեղ թևերով, որոնց օդնութեամբ նոքա թռչում են առաւել տաք երկիրներ։

Միայն մարդը ոչինչ ոչ չունի իրան օգնելու. Ո՛չ աշխատանքը, ոչ նախատեսութիւնը, ոչ քաջութիւնը չեն կարող նորան պահպանել դժբաղտութիւնից. մերձաւորները լաճախ նորա ամենաշար թշնամիներն են դառնում, իսկ ծերութիւնը լրացնում է նորա չարչարանքները։ Ահա մեր վիճակը։

Մի քանի մարդիկ մտածում են իրենք իրենց կառավարել, բայց դժուար բան է. դորա համար հարկաւոր է մանաւանդ շատ սէր և խելք, որ հէնց մեզ միշտ պակասում է։

Ո՛չ գիշերը մենք բաժանուեցանք և մեղանից ամեն մէկը իւր անկիւնում մտածում էր մեզ խորտակող դժբաղտութեան մասին։

ԺԹ.

Միւս օրը, նոյեմբերի 1-ին, լուսը չբացուած ճանապարհ ընկալ դէպի Գրաուֆտալ։ Հազալ խալաթս, հաստ կօշիկներս և ծածկեցի կլոր գլխարկս։ Ճանապարհի երկու կողքերքում ծառերը կորացել էին եղևնու տակ. երբեմն երբեմն մշահաւն

ու թուխկատարը դուրս էին թռչում ձիւնով ծածկուած թփի տակից. և բարձրանալով օդի մէջ՝ ճչում էին, կարծես ցանկալով հրաժեշտ տալ ինձ: Այդ ժամանակից ես շատ անգամ եմ լինել այդ օրը. ես քսորի ճանապարհի վերայ էի. ժօրժ, այդ ուղևորութիւնը միայն սկսուեց և շատ երկար եղաւ:

Նօթը ժամին մօտ հասաւ մեծ ժայռերին, որոնց մօտ գլուղի ամենախոշոճ տնակներն էին, միւս տները ձգւում էին գետի ուղղութեամբ. և կանգ առաւ Նիկէի տան մօտ:

Ներս մտնելով՝ անցաւ խոհանոցի միջով՝ ծխախոտի մը խով լիքը պանդոկի փոքրիկ դահլիճը: Անեկում աչպիսի լուսթիւն էր տիրում, որ կամեցաւ ում և իցէ կանչել, բայց աչքիս ընկաւ Նիկէը, որ թափաղը մինչև ականջները ցած քաշած և սև ծխամորչը ատամներում՝ նստած էր վառարանի մօտ. նա տեղից չչարժուեց, որովհետև մի քանի շաբաթ առաջ նորան ծանր լօղալին թուլութիւն էր պատահել մի միգապատ գիշեր ձուկ որսալու ժամանակ:

Երբէք ամբողջ հովիտը դորանից լաւ ձկնորս չէր տեսել. նա կարմրախաւով ու խեցգետին էր ծախում Ստրասբուրգի ամենահարուստ հիւրանոցներում:

Դժբաղդաբար վաղ թէ ուշ ամեն բանի փոխարէնը պիտի ստանալ. ծանր լօղացաւ ստացաւ և նորան մնաց միայն երազել երբեմն գետի լաւ լաւ տեղերի մասին, ուր ամենից շատ ձուկն էր ընկնում իւր թոռի մէջ:

Երբ ես նկատեցի նորան, նորա փոքրիկ մութ աչքերը լառած էին ինձ վերայ:

—Վա՛ր էք, Ֆրեդէրիկ հայրիկ, —ասաց նա: Ինչո՞ւ եկել էք ինձ մօտ աչպիսի մի ժամանակ, երբ այս անպիտանները աւերում են մեզ: Նիկէ ձեր տեղը լինէի, լաւ կհամարէի մնալ անտառում, գալերն աչպէս վատ դրացիներ չեն, ինչպէս գերմանացիք:

—Միշտ հնարաւոր չէ ուղածի պէս վարուել, —պատասխանեցի նորան: —Ազատ են ձեր վերին երեք սենեակները և ախոռում տեղ ունիք երկու կովի համար:

—Տեղ ունի՞մ, —գոչեց նա: —Այո, պրուսացիները դատարկեցին: Նոքա դուրս տարան անասունը, իսկ հետն էլ փախցրին խոտը, դարմանը, դարին, ալիւրը... Տեղ... տեղ... Այո, ես այժմ տեղ չաւտ ունիմ —բոլորն ազատ է, ձեզունից մինչև նկուղը, և զեռ երկար ժամանակ ազատ կլինի... Չարագործ:

ներ... Տէր, օգնիր, որ միանգամ մենք նստենք նոցա գլխին. չնալելով լօղացաւիս, անթացուպերով կերթամ նոցանից՝ չեռ առնելու աչն ամենը, ինչ որ լափչտակել են ինձանից:

—Ուրեմն, —հարցրի ես, —ազատ են ձեր սենեակները:

—Այո, ախոռն էլ փոքրիկ բակով խոտի ճամար ձեր տրամադրութեան տակ կլինի: Բայց ինչո՞ւ էք ինձ հարցնում այդ մասին:

—Որովհետև եկել եմ վարձելու ձեզանից:

—Դուք. —աղաղակեց նա զարմացած: —Ինչո՞ւ ձեր տանը չէք մնում:

—Պրուսացիները արտաքսում են:

—Արտաքսում են ձեզ... Ինչի:

—Որովհետև հրաժարում եմ գերմանացիներին ծառայել: Իկէլը զգացուած էր. նորա կեռ քիթը մինչև կզակն էր հասնում, և ասաց լուրջ կերպով.

—Ես միշտ կարծում էի, որ դուք կատարեալ մարդ էք, Ֆրեդէրիկ հայրիկ: Դուք մի փոքր խիստ էիք, կատարելով ձեր պաշտօնի պարտաւորութիւնները, բայց միևնույն ժամանակ միշտ արդարադատ էք եղել. ոչ ոք չէ կարող ուրիշ բան ասել ձեր մասին:

Ապա նա ձայնեց.

—Կատէլ... Կատէլ...

Եւ նորա դուստրը, որ կրակ էր վառում հոցու, ներս մտաւ:

—Լսիր, Կատէլ, —ասաց նա՝ մատնացոյց անելով ինձ վերայ. —ահա Ֆրեդէրիկ հայրիկը, որին պրուսացիներն արտաքսում են իւր անտառի տնից դստեր ու տատի հետ, որովհետև չէ ցանկանում նոցա խմբի մէջ մտնել: Սա հաղաբանգամ վատ է քան պատերազմի հարկահանութիւնը. աչպիսի բան, որից մազերը բիզ բիզ են կանգնում:

Նորա դուստրը ևս կարեկցեց մեզ, նա ասաց, թէ երկինքը պիտի պատռուէր և անպիտան գերմանացիներին ճնշէր: Յետոյ ինձ վերև տարաւ, որ ցոյց տալ աչն երեք սենեակները, որ ուղում էի վարձել:

Չես կարող երեակալել դորանից աւելի խոշոճ բնակարան. առաստաղի գերաններին ձեռքով կարելի էր հասնել. ցած պատուհաններից, որոնք ծածկուած էին ժայռերով, հազիւ էր թափանցում ցերեկուալ լուսը:

Ի՞նչ համեմատութիւն սորա և մեր անտառի տան մէջ, որ լոյս էր և ուրախ, և նկարչական գեղեցկութեամբ կանգնած բլուրի ստորոտին: Այո, այս բնակարանը շատ տխուր տըպաւորութիւն գործեց մեզ վերայ, բայց ընտրութիւն անելու ոչինչ չկար, պէտք էր ուրեկցէ տեղաւորուել:

Ես խնդրեցի Կատէլին կրակ վառել մեծ սենեակում, որպէս զի խոնաւութիւնը մի փոքր անցնի. լետույ, ցած իջնելով, ծերունի իկէլի հետ որոշեցինք, որ ես վերցնեմ առաջին խորկը, ախոռում երկու տեղ կովերի համար, մի փոքր խոտնոց, խողերի համար փոքր տեղ, նկուղի մի մասը գետնախնձոր պահելու, և սալատան կէսը, ուր պահեմ կարասիիս այն մասը, որ չի տեղաւորուի երեք սենեակում. այս ամենի համար պարտաւորուեցայ վճարել ութ ֆրանկ,—բաւական նշանաւոր գումար, մանաւանդ մի ալիսիսի ժամանակ, երբ մի սանտիմ անգամ չէիր կարող վաստակել:

Երկու թէ երեք դրացի, բարձրահասակ ամլաւաճառ Շտարկը և նորա կին Սօֆին, կողովագործ Կօֆֆէլը և հին մաքսանենդ Կիւլօտը, սովորաբար մտնում էին պանդոկը մի մի բաժակ օղի խմելու. իկէլը նոցա պատմում էր գերմանացիների նորանոր զարհուրելի արարքների մասին, և ամենքն էլ լուզուած էին: Շտարկը առաջարկեց իմ կարասին փոխադրել իւր ձիաներով ու սալակով, և ես ամենալին սիրով ընդունեցի այդ առաջարկը:

Այսպէս ուրիմն վճռուած էր, որ Շտարկը անպատճառ մընչև 12 ժամը կգայ մեզ մօտ: Ես դարձայ տուն: Ձիւն էր գալիս, ոչ մի շնչաւոր էակ չտեսայ ամբողջ ճանապարհին, և Լեկոպեան ինն ժամին մօտ ալնչափ մեծ ձիւն էր գալիս, որ հարկ եղաւ ոտներից թափ տալ՝ ճանապարհը շարունակելու համար:

Երբ տուն հասայ՝ չորս խօսքով ասացի Վարդ-Մարին թէ բնակարանը վարձեցի, թէ պէտք է տատին պատրաստել ճանապարհ գնալու համար, բոլոր իրերը զարսել կողովներում և կարասին պատրաստել փոխադրելու: Կալասին կանչեցի, որ օգնէ ինձ և խսկոյն գործի ձեռք զարկինք: Մուրճի թխթխկոցով լցուեց ամբողջ տունը, լսում էինք, ինչպէս տատը հեկեկում էր սենեակում, իսկ Վարդ-Մարին մխիթարում նորան:

Ահա բոլորը ինչ որ լինում եմ: Սարսափելի էր խեղճ

պառաւի հեծկտանքը և զանգատը իւր բաղդից, որ ծերութեան հասակում հալածում էր նորան. նոյնպէս առանց արցունքի չէինք կարողանում լսել, թէ ինչպէս նա օգնութեան էր կանչում ամուսնուն, պատկառելի Բրուատ հայրիկին, որ մեռել էր տասը տարի առաջ, և բոլոր աղգականներին, որոնց ոսկրները վաղուց արդէն հանգչում էին Ռօզէնէլմի հանգստարանում: Եւր միտս է դալիս նորա վիշտը՝ այժմ էլ դողս բռնում է:

Մուրճը շարունակում էր իւր գործը. կարասին, հին ապակին, որ կախուած էր Կատէրինի — իմ հանգուցեալ խեղճ կնոջ մահճի մօտ, պապի և տատի պատկերները, Բիկարի ձեռքով նկարուած — այն անձի, որ ամենագեղեցիկ ցուցանակներն է նկարել Կարլ Ժ.— ի ժամանակ, այնուհետեւ երկու սրսկիչներ (օրհնած ջրի) և հին խաչելութիւնը ծալքի խորքում, Վարդ-Մարիի գզրոցը և մեծ կաղնէ պահարանը, որ տակաւին մեր պապ Ռիւշէլին էր պատկանում, — այս բոլոր հին իրերը, որոնք լինեցնում էին մեր նախնիքներին և մեր անցեալ կենցաղը, այս ամենը բարձեցինք և ուղարկեցինք. մենք ստիպուած եղանք մեր սեպական ձեռքով աւերել մեր կեանքը:

Եւ արդէն անկիւնից անկիւն անցուղարձ էր անում, զարմացած այս աղմուկի վերայ, Կալասը հարցրեց.

— Ի՞նչ էինք արել, որ զոդի պէս պէտք է աղատուէինք...

Լաւ կլինէր որ երբէք չմտաբերէի և չսկսէի այս պատմութիւնը, մարդկային ցեղի այս նախատինքն ու քրիստոնեաների անարգանքը, որոնք աւերեցին իրանց այն մերձաւորներին, ուր չէին ցանկանում խոնարհել նոցա հպարտութեան առջև:

Բայց որովհետեւ արդէն սկսել եմ պատմել, ուստի և պէտք է շարունակեմ:

Բոլոր ասածներս ոչինչ էին համեմատելով նորա հետ, որ դէպ եղաւ մեզ տեսնել աւելի ուշ:

Երբ բարձրահասակ Շտարկը եկաւ և կարասին զարսեցինք սալակի վերայ, հարկաւոր էր վերջապէս տատին խընդրել որ սենեկից դուրս գայ. Տեսնելով որ ամեն ինչ պատրաստ է որպէս զի ճանապարհ ընկնենք, նա երեսն ի վալը ընկաւ գետնին ու աղաղակեց.

—Յրէհերիկ, Յրէհերիկ... սպանեցէք ինձ... մահացրէք... բաց մի հանէք ալտեղից... թողէք որ ընդ միշտ ննջեմ ձեր տակ մեր փոքրիկ պարտիզում:

Այդ միջոցին ժօրժ, ինքս էլ ցանկանում էի մեռնել...

Արևնը սառեց իմ երակներում: Այլ ակամ էլ, չորս տարի անցնելուց լետու, ես անդօր եմ պատմել քեզ, թէ ինչպէս նստեցրինք խեղճ տատին սալակի մէջ, դարմանէ ներքնակների վերայ, և տարան ձեան տարափի տակ:

Ի.

Ձիւնը, վաղ առաւօտուանից դալով՝ նստել էր բաւական բարձր: Սալակն ընթանում էր դանդաղ. Շտարկը, առջևից գնալով, քաշում էր իւր խղճուկ ձիերը, հաչոյելով և մտաւելելով, Կալասը փոքր ինչ հեռու քշում էր կովերն ու խոզերը: Ռազօն օգնում էր նորան. Վարդ-Մարին և ես հետևում էինք նորան գլխիկով, իսկ ետեւ եղերներին մէջ մնաց մեր անակը, ամբողջովին ձիւնի մէջ ծածկուած:

Միւս օրը տակաւին պիտի փոխադրէինք փայտը, խոտն ու գետնախնձորը. ուստի դռանը փականք դրի և բանալին պահեցի գրպանումս:

Գիշերը ուշ հասանք Իկէլի մօտ: Այս տատին գրկեցի և տարալ վերեւ սենեակը, ուր Կատէլը փառաւոր կռակ էր վառել: Վարդ-Մարին և Կատէլը համբուրեցան. նոքա միևնույն ուսումնարանումն էին սովորել և առաջին անգամ ճաշակուեցին Ֆելսերգոմ: Կատէլը լաց եղաւ: Վարդ-Մարին, լուզմունքից գունատուած, ձայն չէր հանում: Նոքա մօտան սենեակը, իսկ մինչև Շտարկը Կալասի և երկու երեք դրացիների հետ կարասին սալից ցած բերելով՝ տեղաւորեցին օրոշուած տեղը. ես ներս մտալ դահլիճ մի րոպէ հանգիստ առնելու կրակի մօտ և մի բաժակ գինի խմելու. գործ չինել չէի կարողանում, ուժերս նուազել էին բոլորովին:

Առաջին գիշերը, որ անցկացրինք Գրաուֆտալում, այն սենեակներում, ուր ամեն կողմից փչում էր քամին, շատ ձանձրալի էր: Վառարանը ծխում էր. տատը հաղում էր անկողնում. Վարդ-Մարին, չնայելով ցրտին, վեր կացաւ որ մի բան խմէ. լուսամուտի մանր ապակիները դողդողում էին քամու իւրաքանչիւր շաշխնից, որ իւր հետ ձիւն էր ներս ա-

ծում սենեակը: Այն, չափազանց տանջուեցինք այդ առաջին գիշերը: Աս անդօր էի աչքս փակելու և մտածում էի.

«Անհնար է ալտեղ ապրել: Երկու շաբաթ չի անցնի, և անշուշտ ամենքս կմեռնենք. պէտք է աւելի առաջ գնանք: Բայց ուր գնանք... Ո՞ր կողմ?»

Ամբողջ էլզասն ու Լօտարինգը բռնուած էր գերմանացիներով, ճանապարհները ծածկուած էին թնդանօթներով ու սալերով. ոչ թէ միայն վրանահիւղերը, այլ բոլոր անոռներն էլ լիքն էին: Այս մտածմունքներից մազերս ճերմակեց. երանի թէ վիդո կոտրուէր այն ժամանակ, երբ մեր տան չէմքից ոտս դուրս գրի, նոյնը կուզէի և տատիս և դստերս համար:

Բարեբաղդաբար ժան Մէրլէնը միւս առաւօտը վաղ եկաւ: Նա պատմեց, թէ մեր պատասխանը տարել էր ֆօրստմէյստրին, կարասին փոխադրել էր Ֆէլսերգո, և նորա մայր պառաւ Մարգրէդէլը արդէն հանգիստ տաքանում էր վառարանի մօտ, Գանիէլ հօբեղբօր տանը:

Այս ամենը պատմեց մեզ ուրախ ուրախ, առաջ Վարդ-Մարին համբուրելով և սպա ողջոյն տալով տատին:

Նորա սոսկ տեսքը հանգստացրեց ինձ. երբ դանդաղում էի ցրտից, ծուխից ու վատ անցկացրած գիշերից, նա աղաղակեց.

— Այն... շատ լաւ հասկանում եմ, թէ ինչքան դժուար է ձեզ համար. ես մտածել եմ այդ մասին, ուստի և շտապեցի եկալ: Ձեր տարիքում ծանր է սովոր կեանքը թողնել և ուրիշ մարդկանց մօտ ապրել. դուք ուղղակի լուսահատութեան մէջ էք: Այսպիսի դէպքերում պէտք է մի բանով զբաղուել. Ահա անտառի տանս բանալին և գնահատական գիրքը. ցուցակն ու մուրճը ձեզ մօտ է: Եթէ ձեր տեղ լինէի, գիտէք թնչ կանէի: Այս բոլորը կտանէի պ. տեսչին, մանաւանդ որ Յօրն-շտադի ֆօրստմէյստրը կարող է այդ ամենը ձեզանից պահանջել և մինչև անգամ ստիպել որ իրան տաք: Որչափ շուտ լանձնէք պ. Լարօշին, այնքան ոչ ոք չի վստահանալ բան տեսել: Մինչև կլիրադառնաք, Վարդ-Մարին լուսամուտներն ու լատակը կլուանայ, Կալասն ու Շտարկը կերթան փայտը, խոտըն ու գետնախնձորը բերելու, իսկ ես կարասին կտեղաւորեմ և ամեն բան կարգի կդրեմ:

Այնպէս խելօք էր դատում, որ ես հետեցի նորա խորհրդին. Իջանք պանդոկի դահլիճը և — իմ սովորութեան հակա-

աակ—միասին մի մի դառաթ օղի խմեցինք: ապա ցուցակը խալաթիս տակ բռնակ, մուրճը դրպանումս և մատենանը ձեռիս՝ դուրս գնացի: Այս իմ վերջին ճանապարհորդութիւնս էր պաշտօնական գործով ալդ կողմերը:

Փրօմիւլի մօտ ջուրը սառել էր. աշխատանքը դադարած էր ջրաղացում և սղոցելու դործարանում: Երեկոանից ինձանից լետոյ ոչ ոք չէր անցել ալդ ճանապարհով. ամեն ինչ կարծես ամապցել էր. երեք ժամուայ ճանապարհի վերայ ոչ մի կենդանի էակ չտեսայ:

Ալդ միջոցին միտս եկան ածխակոլտի ծուխը, անտառի կտրած տեղերում աշխատող փայտատների կացնի ձայնը, որոնք փայտը դարսում էին ճանապարհի երկարութեամբ, նոյն իսկ խիստ ձմրան ժամանակ,—այս ամեն նախկին ուրախ դործական կեանքը, որ կերակրում ու կենդանութիւն էր տալիս ամենափոքրիկ դիւղին անգամ. ես մտածում էի, որ կախելու արժանի էին այն աւազակները, որոնք ընդունակ էին խանգարել մի ալդպիսի խաղաղ կեանք, որ ինչ է ապօրինի կերպով օգտուեն ուրիշի աշխատանքի պտուղներից: Ժամանակ առ ժամանակ լուռթեան մէջ անցնում էր իմ վրայից բազէն իւր լայն թեկերով և ճանկերը հաւաքած. նորա թափանցիկ ձայնի վերայ՝ ես մտածում էի.

«Ահա պրօւսացիները... ներկայումս նոքա ամեն բան լափում են. նոքա իրանց ճանկերն իջեցրել են բոլոր գերմանացիների վերայ. գրել են նոցա մօտ իրանց սպաներին, որոնք ղեկավարում են նոցա. աշխատելու փոխարէն գերմանացիք իրանց վերջին լիարդը ծախսում են պատերազմի վերայ, իսկ պրօւսացիները իրանց կտուցն ու ճանկերը չեն հաւաքում նոցա ճարպից. պրօւսացիները փետտում են նոցա, իսկ նոքա պաշտպանուել չեն կարողանում: Վաչ մեղ ամենիս: Աղնիւ պրօւսացիները կկլանեն մեղ ամենիս, իսկ մեղ հետ էլ թէ բազէնցիներն, թէ բաւարացիներն, թէ վերտեմբերգիներն և թէ հէսսէնցիներն»:

Ահա ինչ տխուր մտքեր էին անցնում իմ գլխով:

Առաւօտը տասը ժամին մօտ ելալ հին ամբոցի պատնէշի վերայ, որ անուշադիր էր թողնուած նոյն իսկ պատերազմի սկզբից. ապա, իջնելով արուարձանի փողոցը, մօտեցալ պ. տեսչի տանը, բայց գրասենեակի դուռը հաշտի ձախ կողմից փակ էր. ի դուր զանգեցի ես, փորձեցի բանալ—պատասխան

տուող չեղաւ. կամեցալ դուրս գալ հարեաններից մէկին հարցնելու թէ ինչ է պատահել պ. Լարօշին, երբ լանկարձ դուռը վերեից բացուեց, և ինքը պ. տեսուչը, խալաթով երեսաց սանդուխքի վերայ:

ԻԱ.

—Ո՞ր է—հարցրեց պ. Լարօշը, չճանաչելով ինձ կ'որ գլխարկիս տակ:

—Ես եմ, պ. տեսուչ:

—Ա՛խ, դժբ. Ֆրէդերիկ հայրիկ,—ասաց նա ուրախացած.—Դեհ, վերե եկէք. շուտ վերե եկէք: Տեսցիք ամենքը գնացել են, մենակ եմ մնացել. ճաշս «Գրանն» պանդոկից են բերում. Ներս եկէք, ներս եկէք...

Մտանք առաջին չարկի մի փոքր, շատ մաքուր սենեակ. վառարանը՝ թէժ ծխում էր: Բաղկաթուր մօտ քաշեց ինձ համար, նստեց գրքերով լի սեղանի առաջ և ասաց.

—Նստեցէք, Ֆրէդերիկ հայրիկ:

Ես նստեցի և սկսեցինք խօսել մեր գործերի մասին: Պատմեցի, թէ ինչպէս ներկայացանք Փօրստմէյստրին. բայց երեսց, որ նա արդէն դիտէր թէ ալդ և թէ շատ ուրիշ բան:

—Շատ ուրախ եմ,—ասաց նա, որ մեր բոլոր պահապանները, բացի խեղճ խէնից, որ վեց երեխայի հայր է, իրանց պարտաւորութեանց հաւատարիմ են մնացել: Իսկ ձեր և ձեր փեսայ Ժան Մէրլէնի մասին երբէք կ'սկսեմ չեմ ունեցել:

Հարց ու փորձ անելով մեր գործերի մասին և վերցնելով ինձանից ցուցակն ու մուրճը, ալդ ամենը դարսեց պահարանում և ասաց, որ բոլոր թղթերն արդէն ուղարկել է և սորանք էլ կ'ուղարկէ ետեից: Նա ինձ հարցրեց, թէ որ և է բանի կարիք ունի՞ք արդեօք: Պատասխանեցի, թէ տակաւին 300 ֆրանկ ունիմ, որ լետ եմ ձգել մի փոքրիկ տափ առնելու, ալդուն մօտիկ, և թէ ալդ դուժարը կ'բաւականանայ:

—Աւելի լաւ, ասաց նա.—Դուք գիտէք, Ֆրէդերիկ հայրիկ, որ իմ քսակս ձեր տրամադրութեան տակ է. դա ներկայումս շատ էլ ստուար չէ. այժմ ամենքս պէտք է տնտեսաբար վարուենք, վասն զի Աստծուն միայն լալտնի է, թէ ինչքան ալ ևս կ'երկարի պատերազմը. բայց եթէ որքան և իցէ պ'աք լինի ձեզ...

Ես նորից շնորհակալութիւն յայտնեցի:

Մենք խօսակցում էինք ինչպէս վաղեմի բարեկամներ. նա մինչև իսկ ծխախոտ տաճարիկեց ինձ իւր տուփից. բալց ես մերժեցի: Ապա ծխամորէ առաջարկեց: Այս բոլոր մանրամասնութիւնները պատմում եմ նորա համար, որ հասկանաս, թէ ինչ արժանաւոր մարդ էր մեր տեսուչը:

Նա պատմեց, թէ պատեղազմը դեռ չէ վերջացել. թէ մեր կանոնաւոր դօրքը խմբերով անձնատուր է լինում, և ամենքը—մարշալից մինչև լստին տասնապետը—թշնամիների ձեռքն են ընկել: Չլսուած մի զէպը ոչ միայն Ֆրանսիայի, այլ նոյն իսկ որ և է մի երկրի պատմութեան հէնց սկզբից: Այս բանը շատ էր վշտացնում և լուգում նորան: Արկուսիս աչքերն էլ ալտասուքով լցուեցան:

Այնուհետև պատմեց, թէ Փարիզը ամուր է պահում, որ Պարիզի մեծահոգի բնակիչները երբէք այդ աստիճան քաջութիւն և սէր չեն ցուց տուել զէպի հայրենիքը. թէ Սրէշանի մօտ կազմակերպում է սեծ, ուժեղ, թէպէտ և անխորձ մի բանակ, որից շատ բան են սպասում. թէ Սեղանից լետ հասարակապետութեան հրատարակելը նման է նորան, ինչպէս գիւղացիներն երբեմն դիմում են բժշկին, երբ հիւանդն արդէն մահու տագնապի մէջ է, և թէ այնուամենայնիւ այդ հասարակապետութիւնը պէտք է իւր վերալ առնէր մի շարք դառն անցքերի ծանրութիւնը, որոնց պատճառն ինքը չէր, այն ինչ մեզ պատերազմի քաջող մարդիկ հեռացել են արտասահման: Ապա տեսուչը պատմեց, թէ շարժման գլուխ է անցել մի և՛ ռանդուն մարդ, Գամբէտտան, ժամանակաւոր կառավարութեան անդամը, թէ նա հրաւեր է կարդում անխտիր բոլոր Ֆրանսիացիներին, որոնք ընդունակ են զէնք կրելու, և թէ եթէ պատերազմը էլի մի քանի ամիս տևէ, գերմանացիները չեն դիմանալ. թէ նոցա բոլոր տղամարդիկ զէնք են կրում, իսկ նոցա երկիրը, դործարանները, արդիւնաբերութիւնը ամենը բարձի թողի են արած. դաշտերը մնացել են անմշակ և չցանած, և կանայք, և երեխաներ, ամբողջ ժողովուրդը սոված և կլինի:

Արջը, ժօրժ, համոզուեցանք որ այս ասածները ստույգ էին. սպանուած պահեստի զինուորների մօտ գտնուած լուրը նամակներից իմացում էր, որ զարհուրելի չքաւորութիւն էր տիրում Գերմանիայում:

Պ. Լարօշի առածները կենդանացրին իմ լոյսերս: Նա խոստացաւ միջնորդել իմ հրաժարականին մասին, երբ միայն հնարաւոր կլինէր, և մի ժամին մօտ հեռացաւ նորանից գրեթէ հանգստացած: Նա սեղմեց ձեռքս և ձայն տուեց ետեիցս.

—Մի վրդովուէք, Ֆրէդերիկ հայրիկ. մենք դեռ լաւ օրեր կարող ենք տեսնել:

Բոլորովին փոխուած հեռացաւ նորա մօտից և առանց շտապելու հասաւ Գլաուֆտալ, ուր ինձ սպասում էր մի անակնկալ ուրախութիւն:

ԻԲ.

Ժան Մէրլէնը ամեն ինչ կարգի էր դրել: Գռների ու լուսամուտների բոլոր ձեղքերը պնդացրել. լատակը լուացուած էր, կարասին դասաւորած, պատկերները պատերից կախուած մօտաւորապէս այնպէս, ինչպէս մեր անտառի տանն էին կախուած: Գուրսը շատ ցուրտ էր. վառարանը, որ մաքրել էր ժանը, լաւ էր տաքացնում. տատը նորա մօտ հին բազկաթոռի մէջ նստած, տաքանում էր և նայում բոցին, որ լոյս էր տալիս ամբողջ սենեկին, Վարդ-Մարին թեկը կշտած աշխատում էր և ուրախացաւ երբ տեսաւ որ ես գոհ եմ, Ժան Մէրլէնը ծխամորէր բերանին և աչքերը չաւած նայում էր ինձ վերայ, կարծես թէ ասելով.

—Ի՞նչ էք մտածում այս ամենի մասին, Ֆրէդերիկ հայրիկ: Միթէ դեռ էլի ցուրտ է սենեակում: Ամեն բան մաքրուած չէ՞ տակաւին և տեղերը դարսած: Ես ու Վարդ-Մարին կարգի բերինք այս ամենը:

Իսկ ես, տեսնելով այս բոլորը, ասացի նոցա.

—Բոլորը լաւ է... Տատը տաք տեղ է... Ալժմ տեսնում եմ, որ կարող ենք մնալ այստեղ... շատ փառաւոր ջանքեր եք: Այս բանը շատ դուր եկաւ նոցա:

Սեղանը դցեցին: Վարդ-Մարին համեղ չչի էր ելիւ ապխտից. գերմանացիք բոլոր թարմ միսը լափշտակել էին, և մենք ուրախ էինք, որ գէթ ապխտածը մնացել էր: Բարեբաղդաբար գետնախնձոր, կաղամբ և սև բողկ բաւական ունէինք, որ կաղմում էր մեր ապրուստի գլխաւոր միջոցը:

Ընթրեցինք. ապա ես պատմեցի հասարակութեան վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները, որ հաղորդել էր ինձ պ. տեսուչը: Սոքա անգրանիկ զրական նորութիւններն

էին Ֆրանսիայի մասին, որ մենք իմացանք, և գիտեա թէ ինչ ուշադրութեամբ էին լսում նոքա ամենքն ինձ:

Ժան Մէրլէնի աչքերը փալլում էին, երբ խօսում էի Ղուարի ապագայ ճակատամարտների մասին:

—Ա՛, հրաւէր են կարգում Ֆրանսիացիներին, հին զինուորներին: Արեմն-ուզում են պաշտպանուել:

Ես ողորդեաւ աղաղակեցի:

—Պաշտպանուել... այն պաշտպանուել: Պ. տեսուչն աւագ, որ եթէ մի քանի ամիս էլ տեւէ, գերմանացիների բանը վատ կլինի:

Ժան Մէրլէնը բեղերը ոլորեց, կարծես ուզում էր բանասել, բայց Վարդ-Մարին նախելով, որ ըստ սովորականին լսում էր մեզ անմուռն, լուրջ գէմքով, նորից սկսեց ուտել, ասելով:

—Ինչ էլ որ լինի, Ֆրեդերիկ հարիկ, մեծ բաւականութիւն պատճառեցիք ինձ այդ միութարական նորութիւնը պատմելով:

Աւթը ժամի մօտերքը նա գնաց մեր մօտից, խոստանալով մէկ կամ երկու օրից լետու վերադառնալ: Մենք հանգիստ պարկեցինք քնելու:

Ինչպէս նախընթաց գիշերը ցուրտ էր և ձանձրալի, նոյնքան էլ այս գիշերը հանգիստ էր. մենք քնեցինք ինչպէս բազմաւոր մահկանացուներ, չնայելով սաստիկ քամուն, որ փչում էր դուրսը: Ես թողի չուսահատութիւնս և մտածում էի, որ միանք Գրաուֆտալում մինչև եղելութեանց վախճանը:

ԻԳ.

Գրաուֆտալ առանձնանալով՝ մտածում էի, որ գերմանացիները հանգիստ կը թողնեն մեզ: Ել ինչ կարող էին խելը նոքա մեղանից: Ամեն բան թողել էինք և ապրում անտառում, մի փոքրիկ գիւղում, որ ամենից խղճուկն էր ամբողջ շրջակայքում. երբեմն այնուամենայնիւ նոցա զինուորները փոքրիկ խմբերով գալիս էին մեր անկիւնը, ուր նոցա հազիւ չաջողում էր քանի մի խուրձ խոտ կամ դարման թռցնել: Ամենը, ըստ իս, դէպի լաւն էր փոխուել, և մտածում էի, որ մեզ շրջապատող աղքատութեան շնորհիւ, ստիպուած չէինք լինի գործ ունենալ այդ ամեն բան չափաւոր:

ժողովրդի հետ: Բայց, տարաբաղաւոր, չաճախ մարդ սխալուում է. ամեն ինչ այնպէս չէ լինում աշխարհումս, ինչպէս մարդ ենթադրում է:

Լուր տարածուեց, թէ Գօնադիեն, Կլինը և անտառի մեր պահապանները Վոգէզն անցել էին և կուռել գերմանացիների հետ Բէլֆորի մօտ. իսկուն միտս եկաւ, որ Ժանը նոցա օրինակին կհետեւէ: Յուս ունէի, որ Վարդ-Մարին լետ կպահի նորան, բայց բոլորովին հաւատացած չէի այս բանում: Այս երկիւղը չէր հեռանում ինձանից:

Ամեն առաւօտ, երբ աղջիկս անտեսութեամբ էր պարապում, իսկ տատը համրիչն էր քաշում, ևս լջնում էի դահլիճը ծխամորչ ծխելու ձերուհի Իկէլի հետ: Վֆֆէլը, Շտարկն և ուրիշներ գալիս էին մի մի բաժակ օղի խմելու. խօսում էին տների խուզարկութեան դէմ, զանգեր զարկելն արգելելու, գերմանացի դպրոցական ուսուցիչների մերերին փոխարինելու, զանազան հարկահանութիւնների մասին, որոնք օրէցօր աւելանում էին, դժբաղդ գիւղացիների մասին, որոնք ստիպուած էին երկերը մշակել պրուսացիներին կերակրելու համար, և հաղարաւոր ուրիշ սարսափների մասին, որոնք մեզ զինուորել էին բաղէնցիների, բաւարացիների և վիրտէմբերգիների դէմ, որոնք իրանց կեանքը զոհում էին Վիլհէլմ արքայի համար և կուռում էին նոյա փոխարէն ի միաս իրանց իսկական շահերի:

Շտարկը, որ մի խիստ բարեպաշտ անձն էր և ոչ մի կիւրակի պաշտամունքից լետ չէր մնում, գոչում էր, թէ բոլոր գերմանացիք անողորմ կերպով դժոխքում պիտի տանջուեն լաւտեանս լաւտանից:

Այսպէս էինք անցկացնում մեր ժամանակը:

Մի անգամ, Կիւլտը մեզ մօտ բերեց իւր թոռն Ժան-Բատիստին, մի բարձրահասակ 16 տարեկան պատանուն, քաթանէ վարտիկ և բաճկոն հագած, որ ամառ ձմեռ առանց գուլպայի էր ման գալիս. հաստ մաշիկներով, որի մազերը երկաթն դեղին հիւսուածքներով կախուած էին երեսի վերալից, և մաքսանենգի պարկը նիհար մէջքից կախուած: Այս աղան նստեց կրակի մօտ և սկսեց պատմել, թէ Սարբրիւկէնի և Լանդաուի մօտ զօրքերը սաստիկ զարացած են և ամեն պանդոկներում լսում է նոցա անէծքները անմիտ հասարակապետականների դէմ, որոնք պատճառ էին պատերազմի շարունակուելուն Սէզանից լետու. թէ Կուլմիէի կողմերը, Օրլէանի մօտ, կուռ եւ

դաւ. գերմանացիք փախան, և Ֆրիդրիխ-Վարլը շտապեց օգնութիւն հասնել նոցա, բայց որ մեր ջանքը նորակողները աշնուամենախնիւ մտադիր են միանալ հասարակագետական դո. րաբանակին. թէ չըջանի կառավարիչը տարեկան 50 Փրանկ տուգանք դրեց երկրից փախչող կամաւորների ծնողների վերաւ,— թէ, սակայն, այդ չէ արգելում նորան ժան Բատիտին, հետեւել իւր ընկերներին հալոյնիքը պաշտպանելու համար:

Երբ նա աւարտեց, ես վեր բարձրացայ Վարդ-Մարիին հաղորդելու այս նորութիւնները: Նա ինձ պատահեց սանդուխտներին, գնում էր լուացատուն, և ամենևին չզարմացաւ իմ հաղորդածների վերաւ:

— Այո... այո... հալոյնի, — ասաց նա. — ես այդպէս էլ կարծում էի. պէտք է ամենքն էլ մասնակցին պատերազմին. ամենափետին տղամարդն անգամ պարտաւոր է գնալ այդ գող գերմանացիներին պատժելու:

Նորա անդորրութիւնը ինձ զարմացնում էր, վասն զի նա անշուշտ պիտի մտածէր որ ժան Մէրլէնը — այդ վստահ մարդը — տանը չէր մնալ այդպիսի վալրկենին և լանկարծ կարող էր ճանապարհ ընկնել դէպ այնտեղ, չնայելով որ խոստում էր տուել ամուսնանալ նորա հետ:

Այս մտքերով, մտալ նորա սենեակը, իսկ աղջիկս իջաւ ներքեւ. երկու ընտելից ցետոյ սանդուխտներում լսուեց ժան Մէրլէնի ոտնաձայնը:

ԻԴ.

Նա ներս մտաւ հանդարտ, գլխարկն ուսին թեքած և ուրախ-ուրախ ողջունեց ինձ:

— Բարեւ ձեզ, Ֆրէդերիկ հալոյնի, մենակ էք:

— Այո, ժան. Վարդ-Մարին իջաւ լուացատունը: իսկ տատը դեռ պառկած է:

— Հա. — այդպէս, — նկատեց նա և ձեռնափախար դրեց դրան ետեւ:

Ես փոքր ինչ բան դուշակեցի նորա կերպարանքից: Նա անց ու դարձ էր անուամ սենեակում, գլուխը կախ, և լանկարծ կանգ առնելով՝ ասաց.

— Գիտէ՞ք ինչ է կատարւում Օրլէանի մօտ: Ֆրանսիան ակսում է աղատուել գերմանացիներից և ամեն կողմից հրա-

ւէր է կարգում կամաւորներին: Դուք ինչ էք մտածում այս մասին:

Իմ երեստ բորբոքուեց, և լուզուած պատասխանեցի.

— Լուարի միւս կողմը գտնուողների համար այդ չարմար է. բայց մեզ, այստեղ ապրողներին այնքան էլ հեշտ չէ հասնել այնտեղ և դեռ պրուսացիներն էլ կարող են մեզ բռնել. նոքա բոլոր ճանապարհները, չաւիղները պահում են:

— Ո՛չ, — ասաց նա, — նոցա աւելի վտանգաւոր ենք համարում, քան թէ իսկապէս են: Ես գրաւ կգամ, որ նոցա քթի տակ իսկ անցնեմ Վօգէղը. կէրնը, Դօնատիւն և ուրիշ շատեր շատ լաւ անցել են:

Ես իսկոյն հասկացայ, որ նա ուզում էր գնալ, որ այս որոշումը բոլորովին հասունացել էր նորա գլխում. հանգստութիւնս վրդովուեց. «Եթէ նա գնայ, — մտածում էի, — Աստուծոն է չալտնի, թէ կրք գլուխ կգալ հարսանիքը»: Վարդ-Մարին մասին մտածմունքը լուզում էր ինձ:

— Իարի գործ է, — ասացի նորան, — բայց պէտք է մտածել ձերերի մասին ևս, ժան: Ի՞նչ կասէ բարի պառաւ Մարգրէդէլը, եթէ մի այսպիսի ժամանակ թողնէք նորան:

— Մարս իսկական ֆրանսուհի է, այս մասին ես խօսել եմ հետը, պ. անտառապետ. նա համաձայն է:

Առնելով թուլացան, և չգիտէի թէ ինչ պատասխանեմ մի ընտելից ցետ նորան հարցրի:

— Իսկ Վարդ-Մարին, ջէք մտածել Վարդ-Մարիի մասին: ջէ որ դուք նշանուած էք... Նա ձեր կիներն է Աստուծո առաջ:

— Վարդ-Մարին ևս համաձայն է, — ասաց նա. — Միայն ձեր հաճութիւնն է հարկաւոր. ասացէք. այո. և ամեն բան վերջացած է: Վերջին անգամ, երբ ես այնտեղ էի, երբ մենք ներքեւ ծխում էինք ձեր ծխամորչը, ես պարզկարգող պատմեցի Վարդ Մարիին, թէ ինչպէս անպաշտօն անտառի պահականին մնում է մասնակցել պատերազմին. նա հասկացաւ և համաձայնեց ինձ հետ:

Նորա խօսքերը զարհուրելի էին ինձ համար: Անկարելի բան է. — ասացի և լուսամուտը բանալով՝ ձայն տուի աղջկաս.

— Վարդ Մարի... Վարդ-Մարի... Այստեղ արի... Ժանն այստեղ է:

Նա լուացք էր փռում պատնէշի վերաւ, բայց իսկոյն, գործը թողեց, ու բարձրացաւ մեզ մօտ:

—Վարդ-Մարի,—ասացի նորան,—ճշմարիտ է, որ դու համաձայն ես, որ ժան Մէրլէնը Օրլէան գնաց զերմանացիներին դէմ կռուելու: Զճշմարիտ է: Ասած անց քաջուելու:

Նորա աչքերը փալտաւեցին, դէմքը զոնաւորեց, և պատասխանեց.

—Այո... Այդ նորա պարտքն է... պէտք է գնալ: Մենք չպէտք է պրուսացիների և ուրիշների պէս վարուենք. նա պէտք է կռուէ մեր փոխարէն... Պէտք է տղամարդ լինել... Պէտք է հայրենիքը պաշտպանել:

Դեռ այսպիսի ուրիշ շատ բան ասաց նա. ես ալեկոծուած լսում էի ու մտածում:

Ինչ փառաւոր աղջիկ ունիմ... Չէ, ես սորան կատարելապէս չեմ ճանաչել մինչև այժմ... Բրուտոների արիւն կալ մէջը...

Թուում էր թէ ծերունիները չարութիւն էին առել և խօսում էին երեխաների բերանով: Նոքա, կարծես, պահանջում էին, որ մենք պաշտպանենք այն հանգստարանի հողը, ուր նոցա ոսկրներն էին հանգչում:

Ես փրկեցի իր կացալ բոլորովին զոնաւորեալ և ձեռներս դէպի նոցա մեկնեցի:

—Եկէ՛ք գրկեմ ձեզ: Դուք ճշմարիտ էք, որդիք: Այո, իւրաքանչիւր Քրիստոսեան պարտքն է կռուելու գնալ: Այո, երանի թէ տասը տարով միայն փոքր լինէի: Աս ես կգալի քեզ հետ, ժան, և մենք եղբայր կլինէինք զէնքի կողմից:

Եւ երեքս գրկեցինք միմեանց:

ԻԵ.

Ես լաց էի լինում. խոստովանում էի, որ կարող եմ պարծենալ, այդպիսի աղնիւ ու փառաւոր դուստր ունենալով, որին ես ինքս մինչև այժմ լաւ չէի ճանաչում: Ժանի և Վարդ-Մարիի որոշումը ինձ միանգամայն բնական էր թուում:

Լսուեցաւ տատի ոտնաձայնը, որ գալիս էր խարխափելով և պատից բռնած. ես նշան արի, որ ամենքը, լռեն, և երբ խեղճ պառաւր ներս եկաւ, ասացի նորան.

—Տատի, պ. տեսուչը ժանին Նանսի է ուղարկում, պիտի ստիպուի մի առժամանակ մնալ այնտեղ:

—Վտանգի չի ենթարկուի,—հարցրեց նա.

—Ո՛չ, տատի, անտառային գործի չանձնարարութիւն է, պառաւրազմի չվերաբերող բոլորովին:

—Աւելի լաւ,—ասաց նա:—Քանի քանի մարդիկ են վտանգուում հիմի... Արոնք նորանից հեռու են՝ բաղդաւոր պիտի համարեն իրանց:

Նա նստեց ու ըստ սովորականին սկսեց աղօթք մըրմընջել:

Ել ինչ պատմեմ քեզ, Ժօրժ, այն ամսնի մասին, որ այդպէս սաստիկ լուրում էր իմ սիրտը:

Ժան Մէրլէնն ամբողջ օրը մեզ մօտ անցկացրեց: Վարդ-Մարին մի համեղ ճաշ պատրաստեց, ինչքան որ հնարաւոր էր մեր կացութեան մէջ, նա ծածկեց իւր ամենալաւ գլխարկն և կապուտ մետաքսէ գլխի փաթըթելուն, որպէս զի աւելի դուր գալ իւր սիրած մարդուն:

Կարծես թէ դեռ աչքիս առաջն է նա, սեղանի առաջ նստած, տատի կողքին, և ժպտալիս իւր ամուսնուն, որ նըստած էր նորա հանդէպ:

Կարծես թէ դեռ լսում եմ ժանի զրուցը Օրլէանի լաւ համբաւների, պատերազմի բաղդաւոր փոփոխութիւնների մասին. թէ ինչպէս տատը ներհում է իւր բաղկաթուում, իսկ որդիքը նստած են նորա կողքին պատուհանի մօտ, ձեռք ձեռքի տուած, սիրահարութիւն անելով միմեանց, և խօսակցելով ցած ձայնով, և ուրախ խօսքերից դառնալով տխուրի, ինչպէս այդ լաճախ պատահում է սիրահարներին:

Ես ման էի գալիս սենեկում, ծխամորչը բերանումս և ապագայի մասին մտածում: Լսում եմ պանդուխտ դահլիճում տեղի ունեցած խօսակցութիւնը, ինչպէս թէ ինչ վտանգ է սպառնում իւրաքանչիւրին, որ թողնում է երկիրը, և այն ամեն արդեւորները, որ առաջ էին բերում զերմանացիք մեր զօրքին միանալ ցանկացողներին, և ինձ սկսում է թաւալ թէ լսում եմ կօշիկների ձուռը և թրերի շաչիւնը: Իջնում և բաց եմ անում ծխախոտի ծխով լի դահլիճի դուռը, ուշադրութեամբ նայում անտեղ, ապա նորից բարձրանում վերեւ, փոքր ինչ հանգստացած, և ասում ինքս ինձ, թէ պէտք չէ ամենևին վախենալ, որ երբեմն պատահում է աւելի զօրաւոր ոտնաձայններ անել, բայց որ եռանդուն մարդկանց ամեն ինչ լաջողում է:

Այսպէս անցաւ բոլոր ժամանակը ճաշից լետու:

Ընթերթից լետու, որքան մօտենում էր բաժանուելու

րոպէն, ալիքան ծանր նեղութիւն էր գալիս ինձ վերայ, և վերջապէս, մի տարօրինակ, անհասկանալի երկիւղ տիրեց ինձ:

—Գնացէ՛ք, քնեցէ՛ք.—ասացի տատին:—արդէն ուշ է:

Բայց նա չլսեց, որովհետեւ ականջը մի փոքր ծանրացել էե. նա աղօթք էր մրմնջում և մենք միմեանց նայելով, նշանացի էինք փոխանակում մեր մտքերը: Վերջապէս խեղճ պառւարդ վեր կացաւ և երկու ձեռքերով բաղկաթուղին չե-
նուելով՝ ասաց մեզմէ ձայնով:

—Մնաք բարով, որդիք: Մօտ եկէ՛ք, Ժան, ուզում եմ ձեզ գրկել: Զգուշ կացէ՛ք պրոսպերիներից... Նոքա խաբեբաներ են: Պահպանեցէ՛ք ձեզ... և թող Տէրը ձեզ օգնէ:

Եւ գրկեց նորան. Ժանը, կարծես, զգացուած էր: Երբ դուռը փակուեց ետևից, իսկ եկեղեցու զանգն էլ ութ ժամը հնչեց և գրեթէ բոլորովին խաւար պատեց, նա ասաց.

—Վարդ-Մարի, ալժամ ժամանակն է... Լուսինը դուրս եկաւ և արդէն լուսաւորում է ճանապարհը:

Նոքա գրկախառնուեցին և երկաթ անխօս կանգնած էին, վասն զի ներքևից օտար մարդկանց խօսելու և աղաղակի ձայներ էին լսում—կարող էին մեզ լսել, պէտք էր զգուշ լինել:

Զգիտես, յօրժ, և կամենում եմ որ երբէք չիմանաս, թէ ինչ է կրում հալոն այսպիսի րոպէներին:

Վերջապէս նոքա բաժանուեցան: Ժանը վերցրեց ձեռնափախը. Վարդ-Մարին, լուզմունքից դունատուած, ասաց նորան հաստատ ձայնով.

—Մնաս բարեւ, Ժան:

Եւ նա, առանց պատասխան տալու, գրեթէ դուրս փախաւ սենեկից, ծանր շունչ քաշելով, կարծես թէ մի բան խեղդում էր նորան:

Ես հետևեցի նորան:

Մենք իջանք նեղ ու մութ սանդուխքով և լուսնի աղօտ լուսով լուսաւորուած փողոցում գրկախառնուեցանք:

—Ոչինչ չէս ուզում,—հարցրի նորան, մտածելով փոքր ինչ դրամ տալ կարիք ժամանակի համար:

—Ո՛չ, ես ամեն բան ունիմ, ինչ որ պէտք է:

Սեղմեցինք միմեանց ձեռքը, անզօր միմեանցից բաժանուելու:

Ես զգում էի որ շրթունքներս դողում են, և Ժանն էլ դողողուն ձայնով ասաց ինձ.

—Պէտք է քաջ լինել, հալոյիկ: Մենք տղամարդ ենք:

Եւ արագ քալելով հեռացաւ ինձանից:

Նայեցի թէ ինչպէս ծածկուեցաւ նա գիշերուայ մութի մէջ, և մտքումս օրհնում էի նորան: Ինձ թւում էր, թէ ժալուի միւս կողմն անցնելիս, նա մի անգամ ևս դարձաւ դէպ ինձ և զլխարկը շարժեց:

Երբ լեռ դարձաւ, Վարդ-Մարին նստած էր աթոռի վերայ բաց պատուհանի առաջ և լաց էր լինում, երեսը ձեռքերով ծածկած:

Խեղճ երեսան մինչև վերջին վայրկեանը անվեհերութիւն էր պահպանել, բայց այժմ նորա բոլոր վիշտը արտասուքով էր արտալալտում:

Ես ոչինչ չասացի և, փոքրիկ լամպարը թողնելով սեղանի վրայ, դնացի սենեակս:

Այս ամենը տեղի էր ունենում 1870 թուի նոյեմբերին:

Առաջիկայում մեզ աւելի մեծ տանջանքներ էին սպասում:

Ի.Զ.

Փանի մի օր անցաւ բոլորովին խաղաղ:

Օրլէանից ոչինչ լուր չկար: Երբեմնապէս քաղաքում թնդանօթի ձայն էր լսում, թշնամին պատասխանում էր նոյնպիսի հրացանաձգութեամբ, և նորից ամեն ինչ դադարում էր:

Անձրեակին եղանակ սկսուեց. անձրերը հեղեղի պէս թափւում էր. հալուող ձիւնը վարարում էր գետը: Ամեն մարդ աշխատում էր կրակի մօտից չհեռանալ, մտածելով բացակաների և պատերազմի մասին: Բիւսմարկի ժանդարմները շարունակում էին իրանց պարտաւորութիւնները կատարել. նոքա միշտ երևում էին իրանց՝ անձրեկից թրջուած վերարկուներով: Լուսթիւնն ու անորոշութիւնը զարհուրելի ճնշում էին մեզ: Վարդ-Մարին աշխատում էր անխօս. երբեմն միայն, նկատելով, որ ես չատ տխուր եմ, աշխատում էր ժպտալ, բայց ես նորա դժգոհն երեսից տեսնում էի, թէ ինչպէս սաստիկ էր տանջւում նա:

Երբեմն տատն ես սկսում էր հարցում փնտրել Ժանի մասին: Հանդստացնում էինք որքան կարող էինք, և նա չողութեան թուլութեան պատճառով չուտով մոռանում էր ինչի մասին որ խօսում էր, և մեր պատասխաններով դոճացած՝ չնչում էր կարծես թէ երազում:

—Այդպէս... այդպէս:

Անհրաժեշտ աշխատանքները, ամենօրեայ գործերը, անասուններին խնամելը, տնտեսութիւնը, — այս ամենը մեր ուշադրութիւնը հեռացնում էր մեր դժբաղդութիւններից:

Խեղճ կալսուր, այլ ևս գործ չունենալով մեզ մօտ, սկսեց մաքսանենդութեամբ պարապել Պֆալցբուրգի և շրջակայքի միջև, ամեն օր կեանքը վտանգի ենթարկելով, որպէս զի մի քանի ֆունտ ծխախոտ կամ ուրիշ որևէ մանր բան անցկացնէ, լուր էր պտտում, թէ գերմանացի մի պահապան սպանել է նորան. Ռադօն հետևեց նորան, և այնուհետև նոյա մասին էլ ոչինչ չսեցինք: Անշուշտ վաղուց արդէն հանդիման էին նոքա ուրեիցէ անտառում եղնու տակ:

Մի առաւօտ, երբ մենք ներքև դաշիճումն էինք ծերունի Իկէլի հետ միայնակ, նա ասաց ինձ.

—Յրէկերիկ, ալտեղ արդէն գլտեն, որ ձեր փեսայ Ժան Մէրլէնը, գնացել է, որ ազգային գնդին միանայ: Զգուշ կացէք, — պրուսացիները շատ չարութիւններ կարող են անել ձեզ:

Ես ջախջախուած էի և մի րոպէից լեռ պատասխանեցի.

—Սխալում էք, Իկէլ հայրիկ: Ժանը գործով է գնացել Դոզէնհայմի մօտ. հին ապառիկներն է ժողովում. ներկայումս ամեն ոք դրամի պէտք ունի:

—Բահ, բահ, այդ տեսակ բաներ ինձանից ծածկել չէք կարող, — ես Բրուատի հին բարեկամն եմ. ձեր Մէրլէնը մի քանի օրից չէ երևում արդէն ձեզ մօտ. նա անցել է լեռները, և լու էլ արել է. շատ պատուական ջահիլ է. բայց դա. ւաճաններ բաւական շատ են մեզ մօտ, ձեր մասին տեղեկութիւններ են տուել, դժուշացէք:

Այս խօսակցութիւնը սթափեցրեց ինձ. ենթադրելով, որ լաւ կլինէր նախազգուշացնել Մարգրէդէլին և հօրեղբայր Դանիէլին, ես նախաձաշին լեռ, առանց Վարդ Մարիին բան ասելու՝ ձեռնափայտս վերցրի և ուղևորուեցայ Ֆէլսբէրգ:

Անձրեղ դադարել էր: Զմեռուայ արեղ լուսաւորում էր

անտառը, և այս ուրախ տեսքը, մեր մօտ անկիւնից լեռու, կարծես կենդանութիւն էր տալիս ինձ: Հանապարհ լերան ստորոտում անցնում էր նոյն իսկ լեռնալին տան մօտից. հեռուից, տեսնելով հին ծանօթ տանիքը, ես անշափ լուղուեցայ: Բոլոր լիշտակները չարութիւն առան իմ մէջ, և մըտքովս անցաւ մօտից նախել տնակին:

Կարծում էի հոգիս կթեթեանայ, եթէ նախմ այն սենեկին, ուր մեր նախնիքն էին մեռել և որդիքս ծնուել: Սիրտս սաստիկ զարկում էր, և դնում էի արագաքայլ, երբ լանկարծ փոքրիկ կամրջին հասնելով, որ ձգուած էր երկու եղեամով ծածկուած ուռնու միջով, հիացած կանգ առայ:

Անտառի գերմանացի պահապանը, կանաչ մահուղէ դըլ-խարկ ծածկած քաղաղի փետուրներով զարդարուած, լալու-ճապակէ երկաթն ծխամորչը բերանին և մեծ մեծ չէկ բեղերով, բաց լուսամտում թեք ընկած, հանդարտ ծխում էր, և արտաքուստ երևում էր բոլորովին բաղդաւոր և իւր վիճակից գոհ մի անձ: Նա ժպտալով նայում էր երկու հաստաթուշ երեսաներին, որոնք խաղում էին դուրսը, իսկ նորա ետևը ջրջրուն, կարմրաթուշ գերմանուհին ուրախ ուրախ ձայն էր տալիս.

—Վիլհէլմ, կար, եկէք ձեր իւղահացերը վերցրէք:

Արիւնը սառեց երակներումս:

Ինչ զարհուրելի բան է օտարական մարդ տեսնել նախնիքների տանը, ուր ապրել ես մինչև ծերութիւնդ և որտեղից, առանց մի չանցանք գործելու, արտաքսել են միայն նորա համար, որ ուրիշները անարդարութեամբ տիրապետեն օտարի սեպականութեան և ձեզ դուրս են չպրտում:

Սարսափելի բան է.

Պահապանը գլուխը վեր քաշեց. ես վախեցայ, որ չտեսնէ ինձ և թագ կացայ: Այո, թագ վացայ ուռնիների ետև, չտապելով առաջ գնալ և գողի պէս պահուելով: Ամաչում էի, չտապելով նկատէ, որ հին տէրը տեսնում է նորան իւր թէ այդ մարդը նկատէ, որ հին տէրը տեսնում է նորան իւր տանը, իւր սենեկում, իւր օջախի մօտ. թագ էի կենում նորա համար, որ գերմանացին կարող էր ծաղրել արտաքսուած էլզասցու վերայ. կարող էր դուրճանալ ինձանով: Բայց այդ օրից ատելութիւնը, որ մինչև այդ ժամանակ չէի զգացել, ծնուեց իմ սրտում. ես ատում եմ այն գերմանացիներին, որոնք անխուով լազենում են մեր աշխատանքի պտուղներով և

դեռ իրանց աղնիւ մարդիկ են համարում. ես արհամարհում եմ նոցա:

Աերջապէս, գիր ծառաստանով Ֆէլքսէրգ հասաւ, շատ վատ տրամադրուած:

Խղճուկ գիւղը, աղբի ու ցեխի մէջ թաթախուած, ինձանից ուրախ տեսք չունէր. ոչ մի կենդանի էակ չէր երևում փողոցում, ուր արդէն բազմիցս անցել էին հարկահանները:

Երբ հասաւ հին տանը, ուր ղետեղուած էր զպրոցը, փորձեցի դուռը բանալ, բայց փակ էր: Ականջ դրի... Ոչ մի չուկ, ոչ մի մանկական ձայն: Ներս նայեցի մանր լուսամուտներից. զեղազրութեան օրինակները կախուած էին սլափից, բայց նստարանները դատարկ էին:

«Հօրեղբայր Պանիէլ» ձայն տուի ես և ներս նայեցի առաջին չարկի լուսամտից, որովհետեւ դուռը փակ էր:

Մի քանի վայրկեանից Մարգրէդէլին տան միւս դուռը բացուեց. դուրս եկաւ Պանիէլ հօրեղբայրը, մի ցածրիկ, աշխույժ տղամարդ բրդէ հաստ բաճկոնով բամբակի թափակ զըլ-խին. և հարցրեց.

—Ո՞վ է:

Ես մօտ գնացի:

—Է՛, անտառապետ Ֆիլեբերիկն է: Ներս եկէ՛ք:

—Այլ ևս այնտեղ չէ՛ք բնակուում, — հարէր ինք:

—Ո՛չ. երեք օր է զպրոցը փակուած է, — տխրութեամբ պատասխանեց նա.

Եւ հին տան ցածր սենեկում, չուգունէ փոքրիկ վառարանի մօտ, ուր կաթսայի մէջ գետնախնձոր էր եփ զալիս, որի գոլորշին մինչև առաստաղն էր բարձրանում, տեսաւ Մարգրէդէլին, աթոռիկի վերաւ նստած:

ԻԷ.

Մարգրէդէլն ըստ սովորականին արտաքուստ աշխույժ էր երևում. նախկին ժպիտն անգամ չէր անհետացել երեսից:

—Ա՛—ասաց նա. — սորանից լաւ սենեակ չունինք հիւրին ընդունելու... գերմանացիք ամեն տեղից քշում են մեզ... շուտով չենք իմանալ, թէ ուր դիմենք... բայց ինչ արած, գէթ այստեղ նստեցէք, նստարանի վերաւ, Ֆրէդերիկ հայրիկ, և եթէ անորժակ ունիք, միասին ղետնախնձորով ճաշենք:

Նորա առուգութիւնն ու լաւ տրամադրութիւնը, այն չըքաւորութեան մէջ, ինձ աւելի ևս վրդովեց նոցա դէմ, որոնք այն ամենի պատճառն էին. ես այնպէս լուզուած էի, որ անկարող էի խօսել:

—Այրդ Մարին և տատն առնող են, — հարցրեց Մարգրէդէլը:

—Այո՛, Աստուծոյ ողորմութեամբ, բայց անհանգիստ ենք ժանի պատճառով: Պրուսացիները զիտեն, որ նա գնացել է. ծերունի Իկէլը ասաց որ զղուշ լինիմ, և եկել եմ ձեզ նախազգուշացնելու:

—Պրուսացիներից ես այնքան էլ չեմ վախենում, — ասաց նա, արհամարհանքով վեր քաշելով ուսերը: — Ա՛խ, Աստուծոյ, ինչ անիծուած ազգ են: Ժանը վաղուց է անցել լիւաները. եթէ նորան բռնած լինէին, վաղուց կ'իմանայինք. նոքա առիթ չէին փախցնի մեզ հաղորդելու այդ նորութիւնը, ձեռքերը չփակով. բայց նա անցել է արդէն... նա քաջասիրտ ջահիլ է...

Եւ ծիծաղեց իւր անատամ բերանով:

—Ովքեր նոցա ձեռքն ընկնեն, էլ ծիծաղ չկալ նոցա համար... Նա անշուշտ միացել է արդէն մեր կամաւորների հետ... հրացանի ու ռումբերի ձայները լսում են այնտեղից: Խեղճ կնոջ, ինչպէս միշտ, ամեն ինչ վարդազօյն էր երևում, և ես մտածում էի.

—Բաղտաւորութիւն է այսպիսի բնութիւնը մարդու համար:

Պանիէլ հօրեղբայրը ման էր գալիս սենեակում. ասելով.

—Ինչ է՛ ժանը գնացել է, այդ աւազակները ուսումնաբանս փակեցին: Նոքա ոչ մի բանի համար չկարողացան ինձ կշտամբել և ոչ մի բողաւորութիւն չտուին ինձ. դպրոցը փակեցին, անխօս, այնքան ժամանակ միայն տալով, որ կարասիս դուրս աանեմ. նոքա կ'առնեմ քով էին նախում մեզ վերաջ և աղաղակում... «g'schwind!... g'schwind!...».¹⁾

—Այո՛, գոչեց Մարգրէդէլը, — նոքա խորամանկ են, երեսպաշտ են, հարուածում են առանց զգուշացնելու: Առաւօտը հեռի կծիծաղեն. կրակի մօտ նստած ինչպէս բարի մարդիկ գուրդուրում են երեսաներիդ արցունքն աչքերին, իսկ արդաճանկարծ նոցա դէմքի արտայայտութիւնը բո՛ւրբոլին փոխում է, և առանց ամենեւին կարեկցելու տանից դուրս են անում: Ա՛խ, բարի գերմանացիներ. աշխուշ ճանաչեցինք այդ բարեմիտ-

¹⁾ Շուտով. արագ:

ներին: Բայց միշտ չեն կարող աղապես հպարտանալ... Սպասեցէք... մի փոքր սպասեցէք... երկինքն արդարադատ է. մենք մերը չեմ կտանանք... Ժանը կգալ... կտեսնէք, Ֆրէդերիկ հալ-րիկ... կվերադառնանք անտառի տունը և հարսանիք կկատա-րենք... Նս գուշակում եմ... պէտք է միայն չոյսն Աստուծո վերայ դը-նել... Այժմ չարչարում ենք մեր մեղքերի համար... Աստուած պրու-սացիներին ինչպէս զէնք դործ ածեց մեզ պատժելու համար: Բայց նոցա հերթն էլ կգալ, մենք նոյնպէս կարշաւենք նոցա վերայ... կտեսնեն, թէ ինչքան հաճելի բան է աւերուելը, կողոպտուելը, լափշտակուելը: Զգուշացէք, Ամենքին հերթ կհասնի...

Նա աչնպէս համոզուած էր խօսում, որ ինքս էլ սկսալ հաւատալ նորա ասածներին և մտածում էի.

«Ինչ որ սա պատմում է՝ բոլորն էլ հնարաւոր են... Այո՛, վաղ թէ ուշ, տրիտուրի ժամը կհասնի... Գուցէ չեմ էլ կը-ստանանք էլզասը... Այս բոլոր գերմանացիք միմեանց չեն սիրում... Պէտք է միմիայն մի մեծ ճակատամարտում չաղ-թուլթիւն տանել, աչնուհետև բաւարացիք, հէսսէնցիք, վիւր-տէմբերգցիք, սաքսոնացիք, հաննովէրցիք, — ամեն մէկն իւր կողմը կը քաշէ»...

Բայց մինչև որ աղ կհասնէր՝ մեր դրութիւնը շատ ողոր-մելի էր:

Մարդրէդէլն ասաց, որ նա աչնքան հաճար և գետնա-խնձոր ունի, որ բաւական է մինչև պատերազմի վերջը, և ե-թէ մի քանի սու ևս լինի աղի համար՝ էլ նոցա ուրիշ բան պէտք չէ:

Ուսուցիչ Դանիէլը շրթունքները սեղմած՝ նստած էր ընկղմած մտածմունքի մէջ:

Տեղեկանալով, թէ ինչ վիճակի մէջ են գործերը Ֆէլս-քերգում, ես հրաժեշտ տուի հին բարեկամների 11 ժամին մօտ, ամեն բարիք մաղթելով նոցա:

Ուղեցալ անտառի տնակիս մօտով անցնել, ուստի և ուղեւորուեցալ Գրաուֆտալի դառնվալով և գնացի եղէնու-տով, դժուար անցանքի տեղերում ձեռնափայտիս վերայ լինուած:

Ճանապարհի երկու երրորդ մասը անցնելուց չեմոյ՝ հանդիպեցի ծեր Ռուպպին, որ մի անուղղալ գող էր, գունա-թափ խալաթ հագին, կտակէ փողպատով, որ լախտի պէս ո-լորուած էր նորա նիհար վզի շուրջ, և կացինը ձեռքին:

Նա աջ ու ձախ կտրտում էր ամեն բան ինչ որ հանդի-պում էր, մեծ ճիւղերն էլ, մանր եղէններն էլ, և ամենը դի-ղում էր ճանապարհի վերայ: Երբ ես գոռացի նորան:

— Միթէ գերմանացիներից չէք վախենում. Ռուպպ:

Նա ծիծաղեց և իւր հին գլխարկը չեմ քաշելով դէպի ծոծրակը, թեով քիթը սրբեց:

— Ա՛յ, անտառապետ, — ասաց նա ուրախաղէմ. գերմանա-ցիք մենակ չեն դալիս անտառ... Նոքա միայն խմբերով են ման գալիս, առջևից թնդանօթներ, շրջապատուած հեծելա-զօրով, միշտ մեծ ճանապարհներով, և աչն էլ երբ մէկի դէմ տասն են լինում... Աղ քաջերը իրանց կաշուից խիստ են զգուշանում... հէ... հէ... հէ...

Ես ինքս էլ ծիծաղեցի, որովհետև ճշմարիտ էր ասում: Երբ անտառից դուրս եկալ և լեռան ստորոտում երեւա-ցին լարդէ տանիքներ, ամենից առաջ աչքիս ընկան փայլուն սաղաւարտներ ծերունի Իկէլի պանդոկի առաջ. անթարթ նայելով՝ ես տեսալ որ նոցա շրջապատել են կանանց և տղա-մարդկանց բաղմուլով: Ծործոր հաղած: Իկէլը կանգնած էր տան չէմքում և խօսում էր. Վարդ-Մարին կանգնած էր ախո-ռի դռներում, իսկ տատը — իւր փոքր լուսամտի մօտ ձեռքե-րը սարսափից վեր ամբարձած:

ԻԸ.

Ես սկսեցի վաղել ամենաչն ոլթով, գուշակելով, որ մի լուրջ բան է պատահել. ճանապարհը կարճելու համար նեղ փողոցից վաղելով՝ ներս փախալ ախոռից աչն բոպէին, երբ մի մարդ դռներից դուրս էր քաշում մեր երկու կովը, եղ-ջիւրներից կապած:

Դա Բօկբէրգցի մի պահապան էր, Տուբակ անունով, կար-ճահասակ, լախաթիկունք, սև մօրուքով. նորա գեղեցիկ դուս-տրները սպասուհու պաշտօն էին վարում պրուսական կապի-տանի մօտ, որ ապրում էր նոցա մօտ նոյն իսկ պատերազմի առաջին օրերից:

Տեսնելով, որ աղ անպիտանը կովերս տանում է, աղա-ղակեցի.

— Ի՞նչ ես անում, գող: Իսկոյն կովերս թող, թէ չէ վի-ղըդ կոլորեմ:

իմ աղաղակի վերայ մօա վաղեցին մի լիսնապետ, իւր զինուորները, իկէլը և Վարդ-Մարին. տառն անդամ, պատէ-պատ հասել էր Բաղր-Մարին գոչեց.

— Հարկի, մեր կովերն ուզում են տանել:

Իսկ տատը ողբալի ձայնով ասաց.

— Աստուած իմ, ինչո՞վ պիտի ապրենք: Կովերը որ կորց-նենք, ապրուստի վերջին միջոցից կզրկուենք:

Իկէլը ցոյց տուեց ինձ վերայ և ասաց.

— Տէրը սա է: Սորա կովերն են:

Յիսնապետը, բարձրահասակ, նիհար, պինդ հուպ տուած համազգեստով, գլուխը չէտ դարձրեց կարծես առանցքի վե-րայ լինէր և ուսի վերայից նայեց ինձ. նորա ստղաւարտի տակից երևում էին ակնոցներ, չէկ ընչացքներն ու կեռ քի-թը. նա բուր նման էր գլուխը չուռ տալիս, առանց իրանը շարժելու. զգուշիւ կերպարանք:

Եւ զփողոցում ժողովուրդ խմբուեց, և յիսնապետը գո-չեց.

— Հեռացէ՛ք: Տասնապետ, քչեցէ՛ք դոցա. իսկ եթէ մէկը ընդդիմանայ, հրացանով զարկեցէ՛ք...

Յեխի մէջ խռնուած ամբոխը, և լացող տատի աղաղա-կը դարհուրելի կերպարանք էին տալիս այդ տեսարանին:

— Այս կովերն ինձ դուր են գալիս և տաճում եմ, — ասաց Տուրակ պահապանը յիսնապետին. — կարող ենք ճանա-պարհ ընկնել:

— Կովերը միթէ ձերն են, — հարցրի նորան, զայրուից փայտս սղմելով.

— Այդ իմ գործը չէ, — պատասխանեց նա կատարեալ ա-ւազակի եղանակով, որ ոչ սիրտ ունի, ոչ խիղճ: — Ինձ իրա-ւունք է տուած չրջակայքի բոլոր կովերից ընտրել և իմերի փոխարէն տանել, որ անպիտան ֆալցբուրգցիները տարան... Ես այս ընտրեցի... չվէցարական կովեր են... ես միշտ սիրել եմ այս տեսակը:

— Բայց ո՞վ իրաւունք տուաւ այդ ընտրութիւնն անել, — գոչեցի ես: — Ո՞վ կարող է ուրիշի սեպականութիւնը նուիրել:

— Կապիտանը, իմ բարեկամը, — պատասխանեց նա լըր-բարբար խոնարհելով:

Ամբոխի մէջ լսուեցան ծիծաղի և խօսակցութեան ձայ-ներ:

— Կապիտանը մեծահոգի մարդ է, նա լաւ է վարձա-տրում իրան բաւականութիւն պատճառող մարդոց:

Բարկութիւնս բռնեց. երբ յիսնապետը հրամայեց զի-նուորներին, և պահապանը կավերս եղջիւրներից բռնեց, ա-ղաղակեց «դէ՛հ, դէ՛հ» — ես գաղանի պէս չարձակուեցի նորա վերայ, բայց Վարդ-Մարին ձեռքիցս բռնեց և երկիւղով թա-խանձում էր ինձ.

— Հնարիկ, թո՛ղ տուր. կսպանեն քեզ... տատի մասին մտածիր:

Շրթունքներս դողողաց և աչքերս մթնեց, բայց մտա-ծելով, որ դուստրս որք կմնալ մի ալսպիսի զարհուրելի ժամա-նակ, իսկ տատս սովից կմեռնի, — այս մտածմունքն ինձ ոյժ ներշնչեց բարկութիւնս զսպելու, և ես ալսքանը միայն ձայ-նեցի.

— Գնա՛, փռէ՛... տան գողացածդ կովերը, բայց զգուշա-ցիր աչքիս երեւալուց:

Յիսնապետն ու զինուորները չլսելու տուին իմ խօսքե-րը, իսկ տաղակ Տուրակը ծիծաղելով ասաց.

— Մեր խուզարկութիւնը ի դուր չանցաւ, յիսնապետ, — աջնամանաչնիւ պատուական կովեր գտանք:

Երևաց, որ նոքա բոլոր շէնքերն ու գիւղերը ման էին ե-կել, տակն ու վրայ էին արեւ բոլոր Բաղր-Մարին, և այս ան-բաղդութիւնը մեզ էր բաժին ընկել:

Վարդ-Մարին, տեսնելով խեղճ անասուններին դուրս տանելը, որոնք մեզ հետ սնուել էին անտառի տանը, չկարո-ղացաւ արտասուքը զսպել, իսկ տատը, ձեռները բարձրացնե-լով ալեղարդ գլխից վեր, գոչեց.

— Այժմ կորած ենք... կորանք բոլորովին... Սա վերջին հարուածն է... Ո՞վ Աստուած, ինչ մեղքի համար է այս բո-լոր անբաղդութիւնները գալիս մեզ վերայ:

Ես ձեռքով պահած ունէի նորան, խնդրելով որ վեր կե-նայ, բայց նա ասում էր.

— Յրէդերիկ, թո՛ղ տուր գոնէ մի բոպէ ևս նայեմ այդ քարի անասուններին... Ո՛հ, խեղճ Բէլլօտ... խեղճ Բլանչէտ. ձեզ ալ ևս չեմ տեսնի:

Մի հոգեքաղ տեսարան էր, և ամբոխը ցրում էր, զը-լուխները լիտ դարձնելով և ոյժ չունենալով ալ ևս նայել զորա վերայ:

Այնուամենայնիւ պէտք էր մեր խղճուկ սեռակները բարձրանալինք և մտածելինք մեր ցաւալի դրութեան մասին. այժմ, երբ մեզ պէտք է հոգալ ապրուստի միջոցների մասին, վերջին միջոցն էլ խլեցին մեզանից:

— Գիտես, Ժօրժ, թէ ինչ նշանակութիւն ունի կովը գիւղական կեանքում. ով կով ունի, նա և կաթ, իւղ, խաճող ունի—և ամեն անհրաժեշտ բաները. մի կովը բաւական է մարդուն. երկուսը՝ գրեթէ հարստութիւն է: Մինչև ալը ժամանակ կարող էինք կաթնալին բոլոր արտադրութիւնները վաճառել և մի քանի սու ձեռք բերել, այժմ մենք ամեն բան պէտք է գնէինք մի աշնայիսի սովալից ժամանակ, երբ թըշնամին պարարտանում էր ի հաշիւ մեր չքաւորութեան:

Ջարհուրելի ժամանակ... Մեր որդիքն ու թոռները երեւակայել չեն կարող, թէ ինչ օրեր ենք քաշել:

ԻԹ

Մեզ մնում էր միայն հինգ թէ վեց հազար քիլօ խոտ և գետնախնձոր:

Իկէլը, որ մեր բոլոր դժբաղտութիւններին կարեկցութեամբ էր վերաբերում, ս.սաց ինձ միևնույն օրը.

— Լսեցէք, անտառապետ, ինչ որ ես գուշակեցի՝ կատարուեց: Այդ գերմանացիք չափազանց կատաղած են ձեր դէմ նորա համար, որ մերժեցիք ծառայել նոցա, իսկ ձեր փեսան միացել է հասարակապետականների հետ... Եթէ նոքա ուղենալին ձեզ արտաքսել կամ սպանել, վաղուց արդէն կանէին, բայց նոքա ցանկանում են արդարադատ և մեծահոգի երևալ. ուստի և կողոպտում են ձեզ մինչև վերջին շապիկը, որպէս զի ստիպեն հեռանալու ձեր բարին կամքով, ինչպէս ասում են իրանք: Եթէ ինձ լսէք, կծախէք ձեր կերը, ապա թէ ոչ այս օրերս կդան և աչն էլ կխլեն ձեզանից. նոցա տրամաբանութեամբ, ով որ կով չունի, խոտ էլ պէտք չէ նորան: Բայց խնդրում եմ ոչ ոքին չասէք, որ ես եմ խորհուրդ տուել:

Ես հասկացայ, որ նա իրաւ էր ասում. միւս օրն և եթ սրահն մաքրեցի, Գասպարը, Գիւլէրիկը, Խիւլօտը, Ժան—Աղամը, Շտարկը, ամեն հարևաներ եկան և մաս մաս վերցրին իմ պաշարը, այսպիսով կարողացայ մի քանի ֆրանկ ապատել: Շտարկը մինչև իսկ զիջաւ ինձ իւր ալձերից մէկը, որ մեղ

չատ պէտք էր. զոնէ տատը առաւօտ երեկոյ մի քիչ կաթ էր խմում, որ քիչ շատ պահպանում էր նորան. բայց վերջին ցնցումները աշնակս ազդեցին խեղճ պառաւի վերալ, որ նա տերևի պէս դողում էր և անկողնից չէր վեր կենում, ալը աղօթք էր մըմնջում և չիշում իւր ամուսին Բրուատին, իւր պապ Գիւլէնին և ալ ինչ ազգականներին: Վարդ-Մարին թել էր մանում նորա կողքին, երկար ժամանակ մինչև կէս գիշեր նստած և լսելով նորա ողբն ու ծանր ախ քաշելը:

Ես մենակ նստած էի հարևան սենեկում ձիւնով լի լուծամուտի առաջ, ոտս ոտի վերալ դրած, հանգած ծխամորչը ատամներումս, մտածելով այն ճնշումների, լափշտակութիւնների և բոլոր սարսափների մասին, որոնք պատահում էին մեզ վերջին ժամանակներս, և սկսեցի մինչև իսկ հաւատս կորցնել Աստուծո վերալ: Այո, տխուր է այսպէս մտածել, բայց իմ կրած կորուստներից այն համոզմունքի եկալ, որ շատ մարդիկ ստիպւում են ոչխար, սագ և հնդուհաւ ձեռնալ որպէս կերակուր գալլերին, ազուէսներին ու բազէներին, որպէս զի սքա պարարտանան նոցա հաշուով: Զայրոյթս մինչև անդամ մտածել տուեց ինձ, որ մեր սուրբ կրօնը կեղծաւորների կողմից հնարուած էր միայն թարեւաւ այն լիմարներին, որոնք իբրև որս են ծառայում ուրիշներին:

Բայց ամենից վատն այն էր, որ Ծրանտիպից սկսել էին անմխիթար լուրեր հասնել մեզ:

Գերմանական գունդը, որ Վէհէմից եկել էր իմ խոտը տանելու, սրահը դատարկ գտաւ. պրուսացիները սարսափելի կերպով դաւրացան և հարցրին թէ ինչ է եղել իմ կերը. պատասխանեցի, թէ Տուբակ պահապանի կովերը բոլորը կերան: Բարեբաղտաբար, այժմ Շտարկի մօտ էր,—ալըպէս այս աւազակները անշուշտ այն էլ կտանէին:

Անամօթները մտան պանդոկ և պատմեցին, թէ հասարակապետականները լաղթուած են և հազար զոհ են տուել պատերազմի դաշտում. թէ նոքա դուրս են քշուած Օրլէանից և գերմանացիք հալածել են նոցա. այս ամենը նոքա ծաղրելով ու սնապարծութեամբ են պատմել: Մենք չէինք հաւատում նոցա ասածների նոյն իսկ մի չորրորդ մասին, բայց նոցա ուրախ տրամադրութիւնը և արհամարհանքը, որով վերաբերում էին դէպի մեր զօրապետները խօսակցութեան մէջ,

մտածել էին տալիս, որ նոցա խօսքերում ճշմարտութեան նը-
շուկ կար:

Ժանից մենք ոչ նամակ ունէինք և ոչ որ և է համբաւ...
Ի՞նչ էր եղել նա: Ես վախուստ էի տալիս նորա մասին Վարդ-
Մարիի հետ խօսելուց, նորա զօգույն ղէմքից տեսնելով, որ
անորոշութիւնը նորան աւելի էր տանջում քան ինձ:

Գեկտեմբերին էր այս: Մի քանի ժամանակից հրացանա-
ձգութիւնը դադարել էր Ֆալցբուրգում: Լուր էր պտտում, թէ
գիշերները երբեմն բոց էր ժալթքում ամբութիւններից: Կ-
մենքը հետաքրքրուում էին, թէ ինչ բան էր այն: Ապա իմա-
ցանք, որ վառօդ էին ալրում, հեծելազօրի զործիքները ոչնչա-
ցնում, վասն զի կենսական պիտուքներն սպառուել էին, և
քաղաքը ստիպուած էր եղել շուտով անձնատուր լինել:

Այս դէպքը տեղի ունեցաւ գեկտեմբերի 13-ին, վեց ում-
բակոնդութիւնից ու հարիւր քսան օրուալ պաշարումից լետով:
Ֆալցբուրգի կէսը փլատակների տակ էր. մի ումբակոնդութեան
ժամանակ, օգոստոսի 14-ին, ութը հազար հինգ հարիւր ուումբ
ընկաւ քաղաք. և խեղճերը, չրջականներից հապճէպով ժողո-
վուած ամենաշող ժամանակ, սոսկ խալաթներով և մաշիկնե-
րով, ամբողջ ձմեռը ամբութիւնների վերալ կոնկուռնած, ի
լրումն այս ամենի, ամենախիստ առնամանիքի ժամանակ
զինուորական զերիններ էին տարուած—ոմանք Ռաշտադ. միւս-
ները Պրուսիա:

Այս նորութիւնը որ իմացանք՝ ամենքս լուսահատուե-
ցանք: Քանի դեռ ումբաձգութիւնը չէր դադարել Ֆալցբուր-
գում՝ դեռ լոյսներս չէինք կորցրել. ժամանակ առ ժամանակ
մեզ սիրտ էինք տալիս և ասում.

«Ֆրանսիան տակաւին պաշտպանում է իրան»...: Բայց
երբ ամեն ինչ հանդարտեց, հասկացանք, որ գերմանացիք
տէր դարձան մեզ, և մենք ստիպուած ենք խիստ զգուշ լինել,
որպէս զի նոցա բարկութիւնը հրաւիրենք մեզ վերալ:

Այդ օրից, ժօրժ, մեր վիշտը սահման չունէր:

Ի լրումն անբաղադրութիւններին՝ տատի հիւանդութիւնը
զօրացաւ... Մի առաւօտ, երբ ես նորա սենեակը մտայ, Վարդ-
Մարին ցած ձախով ասաց ինձ.

—Հայրիկ, տատին շատ հիւանդ է... բոլորովին շնչասպառ
է լինում... լաւ կլինէր բժիշկ կանչէիր:

— Իսկույն կերթամ. գուցէ արդէն շատ ուշ ենք մտածել

ալդ մասին: Լա չնայելով, որ ինձ համար շատ վիրաւորական
էր տեսնել մեր ամրոցի հին պատերը թշնամու ձեռքին, վըճ-
ռեցի դնալ Ֆալցբուրգ բժշկի ետեից:

Աստիկ ցեխ էր և ամպերը ծածկել էին երկինքը: Նը-
ժուարութեամբ բարձրացաւ ճանապարհի եղերքով. անտառից
դուրս գալիս երեք քիլօմետր ինձանից հեռու փոքրիկ քաղա-
քը տեսալ: Սարսափելի տեսարան. փաղաքը կարծես մռայլ
երկնքի տակ ճիւղաւած լինէր. գրեթէ բոլոր տներն ալրուած
էին, եկեղեցին քանդուած, ամրոցները քակուած մինչև նոյն
խակ գետինը. եսկանգ առալ և լեռնութիւն ձեռնափախիս վերալ՝
սկսեցի մտաբերել նախկին երջանիկ օրերը:

Փանի անգամ, 25 տարուալ ընթացքում, եկել էի ալդ-
տեղ կլւրակի և տօն օրերը իմ ամուսին Կատէրինի և դստերս
հետ պատարագին, կամ տօնախմբաւ, կամ թէ հին բարեկա-
միս տեսնելու. այն ժամանակ մենք երջանիկ էինք, խնդում
էինք և մտածում, որ ամեն ինչ նոյնպէս լաւ կընթանալ մին-
չև կեանքներիս վերջը: Լա ալդ ամեն ուրախութիւնները ան-
ցան: Ինձ թուում էր, որ տեսնում էի հին բարեկամներս, ո-
րոնք հրաւիրում էին մեզ իրանց պարտէզները հաղարձ կամ
ծաղիկներ քաղելու: Փանի քանի լիշտականներ անցան իմ
ոտքով...

Աչքերս մթնեցին, բայց ուշքի եկալ և շարունակեցի ձա-
նապարհս, ալսպէս մխիթարելով ինքս ինձ.

«Կեանքը կարճ է... Շուտով, Ֆրեդերիկ, ամեն ինչ կմո-
ռացուի... Մի լուսահատուիր. երկար չես տանջուելու»:

Ինձ թուում էր, թէ լսում եմ մեր ուրախ փողհարների
ձայնը. բայց բակի դռանը գերմանական պահապանն և հեր-
թապահը, սաղաւարտով և հրացանն ուսին, ստիպեց ինձ
սթափուել:

Իմ հին բարեկամ Թոմը, որ քաղաքի կողմից նշանա-
կուած էր մաքսալին տուրք ժողովող, ներս հրաւիրեց ինձ: Խօ-
սեցինք մեր զօրադրութեանց մասին. տեսնելով, որ ես նա-
չում էի, թէ ինչպէս են պրուսացիները կամուրջից անցնում,
նա ասաց.

—Մի նայէ՛ք նոցա, Ֆրեդերիկ,—նոքա հպարտանում են,
երբ նայում էք իրանց վերալ, երևակայելով, որ բերկրում էք
նոցանով:

Ես չուռ եկալ և մի քանի բոպէ հանգստանալուց լետոյ մտալ քաղաք:

L.

Նկարագրեմ քեզ խղճուկ Ֆալցբուրգի լքեալ տեսքը, որ երբեմն մաքուր էր, գեղեցիկ տներով ու մեծամեծ հրապարակներով զարդարուն, որոնք աջն քան կենդանի էին զօրախաղերի ժամանակ: Խօսեմ ալդ տների մասին, որոնք ծռուած երևում էին մէկմէկու վերայ, խողովակներով, դուրս ցցուած աւերակների մէջ, գերմանացիներով լի, որոնք ուտում էին, խմում և ուրախանում, մինչդեռ մենք նիհարած կերպարանքներով և չփոթուած տեսքով, պատառտուած, վերջին անգամ ջողութիւնների շնորհիւ, նալում էինք, թէ ինչպէս անամթները քէֆ էին անում մեր փողերով: Սոսկ մտածմունքն ալդ մասին սիրտս արիւնով լցւում էր:

Մտենալով հանդիսի-հրապարակի անկիւնին, եկեղեցու հանդէպ, լսեցի մի կոպիտ ձայն, որ գոռում էր քաղաքային տնից.

—Hérousse!

Օրապահ լիսնապետն էր հրաման արձակում զինուորներին որ դուրս գան: Դուրս եկաւ հերթապահ սպան, նորա ետեւից դուրս եկան ուրիշները պահականոցից և հերթով շարուեցան. տասներկու ժամն էր:

Ես սրտաբեկ կանգ առալ Վաշերօն սրճատան դռանը-թշուառների բազմութիւնը, առանց ապաստանի, աշխատանքի և հացի, թափառում էր փողոցում, ջանալով ձեռքը ձեռքի հետ գրպանը կոխել որքան կարելի է խորը, տաքանալու համար. իսկ ես, թովմի պատմածից լսած լինելով, որ զինուորական հիւանդանոցը և դպրոցը հիւանդներով լիքն են, հարց ու փորձ արի թէ չէ կարող արդեօք ով և իցէ ցոյց տալ ինձ մի բժիշկ, որ համաձայն էր Գրաուֆտալ գալ խեղճ մեռնող պառաւիս սօտ:

Վիշտն ու երկիւղը տիրել էին ինձ. չգիտէի ում զիմեմ և ինչ անեմ, երբ ետեւից մի ծանօթ ձայն լսեցի՝ իմ հին բարեկամ Յակոբ Բաուերի, որ առաջին ձկնորսն էր ամբողջ հովտի մէջ:

—Ա՛, դուք էք, Յրէդերիկ հալրիկ. Դուք դեռ կենդանի էք:

Նա ձեռքը մեկնեց ինձ և երևում էր՝ անքան էր ուրախացել ինձ տեսնելու վերայ, որ ես չուղեցայ:

—Ա՛, —պատասխանեցի ես. —ողջ մնացինք Աստուծով... Այժմ երբ մէկին հանդէպում ես, մտածում ես, որ մեռելներից չարութիւն արածին ես տեսնում: Գծադղաբար, տատը շատ հիւանդ է, և չգիտեմ այս աւերածուքի մէջ ուր գտնեմ բժիշկ: Բաուրը խորհուրդ տուեց բժիշկ Սէմպերլէնին գիմել, որ բնակում էր Վաշերօն սրճատան առաջին չարկում, լանձնաբարելով որպէս հմուտ և ժարգասէր անձի, որ չէր մերժի ինձ հետ դալ, շնայելով տեղի հեռաւորութեան և շտապ գործին, որով նա պաշարուած էր քաղաքում:

Ես բարձրացալ. բժիշկ Սէմպերլէնը ճաշի էր նստում և խոստացաւ ճաշից լետ անմիջապէս գալ:

Փոքր ինչ հանգստացած՝ ներս մտալ սրճատան մեծ դահլիճը, մի կտոր հաց ուտելու և մի գաւաթ զինի խմելու մինչև որ ուղեկիցս կգար:

Դահլիճը ամբողջով լիքն էր. դռքա էին համազգեստ հագած հաստափոր բուրժուաներ, գարնջրարարներ, ճարտարապետներ, ագարակատէրեր, դրամատան տէրեր, հիւրանոց պահողներ, սեղանապետներ, որոնք եկել էին երկիրը բռնելու, պրուսական կառավարիչների ղեկավարութեան ներքոյ, որոնք խաղում էին նոցա հետ ինչպէս խաղալիքների հետ:

Բոլորի գրպանները փողով լիքն էր, և խիստ կարգապահութեան անախորժութիւնը մոռանալու համար՝ աջն քան ապխտեղէն էին սպառում, ինչքան որ կարող էին տեղաւորել ստամոքսներում: Ոմանք շամպայն էին խմում, միւսները՝ գարնջուր, ալք՝ բուրգօնեան գինի, իւրաքանչիւրն իւր միջոցների համեմատ, բայց ոչ մէկը ընկերին չէր հիւրասիրում, —ալկոլիսի սովորութիւնն նոքա չուէին. ուտում էին երկու ձեռքով, բերանը մինչև ականջները բանալով և քիթը ափսէի մէջ կոխած. որովհետեւ անձրեւ օր էր և ցեխոտ և լուսամուտներս բանալու հնար չկար, ուստի երբեմն ստիպուած էին փողոց դուրս գալ մաքուր օդ շնչելու, վասն զի դահլիճում անտանելի խեղդող օդ էր:

Ես նստալ անկիւնում իմ գինու գաւաթով և նալում էի դէպի առաստաղ բարձրացող ծխի քուլաներին, և այցելուններին սպաւաւորող սպասուհիներին: Մտածում էի հիւանդ տատիս և աւերակների մասին. ականջ գնելով գերմանացիների

խօսակցութեան, որոնք էլ զասցինքն իր անհամեմատ լաւ բարբառով էին խօսում, եւ բան չէի հասկանում զանչի՞ն միւս ծաղրին մի քանի ֆալցրուրդցիներ քննում էին ալն լանձնաժողովի խնդիրը, որ միտք կար կազմակերպել քաղաքային վարչութեան կից չբաւորներին արժան կերակուր մատակարարելու, նոյնպէս և պրոսագիներ խոստման մասին պաշարումից բոլոր վնասուածներ Վարձատրութեան վերաբերմամբ, որին սակալն ոչ ոք չէր հաւատում:

Ժամանակը զանդաղ էր անցնում: Խորատու լինելով ձախորդութիւններէս մասին մտածումներէն մէջ՝ չլսեցի, թէ ինչպէս լանկարծ մի բարձր և կոպիտ ձալն խոհերիցս հանեց ինձ. գլուխս վեր քաշեցի և տեսալ Բօկրէրդցի պահապան Տուբակին, որ խառնուել էր ֆալցրուրդցիներին խօսակցութեան մէջ և խոշոր բռունցքով զարկելով սեղանին՝ լըրբար գոռում էր.

— Ձեզ, քաղաքի բնակիչներդ համար լաւ է պատերազմի բերած դժբաղդութիւնների մասին մտածելը: Դուք ձեր ամբողջութիւնների ետեւն էիք պահում և բոմբի առաջին սուլոցը լսելիս փախչում էիք ստորերկրեալ տեղեր թաքցելու: Ձեզանից ոչ ոք բան չունէր կորցնելու: Նոքա, որոնց տներն ալրուած են, իրանց կալքի արժէքից վեր վարձատրութիւն կտանան. հին, որդնակեր կարասի փոխաբէն նորը կտուրի, և շատերը, որոնք մինչև պատերազմը ոչինչ չունէին, ձեռները կշիփեն բաւականութիւնից և փորերը կհաստացնեն ու կասեն «պատերազմն ինձ օգնեց կատարեալ բուրժուա դռնալու. ես պարտքս հատուցի և դեռ լաւ մարդիկ ես համարուեցալ, միայն նորա համար, որ գնդակը պատահաբար իմ նկուղն ընկաւ: Այս մինչև վերջ նուիրում կլինիմ իմ երկրին, կմնամ ալտեղ և ալտեղից զաղթել ցանկացողներից կալում կգնեմ, որովհետեւ նոքա ստիպում կլինին ամեն ինչ գրեթէ ձրի տալ: Նոյն կվճարեմ ալն փողից, որ կտանամ կորցրածիս փոխարէն»: Այն, ալս կողմից պատերազմը առանձին անախորժութիւններ չէ պատճառում և ամբողջ հաստ պատերի ետե կարելի է լինում հանգիստ նստել... Այն ինչ մենք, խեղճ գիւղացիքս ստիպում էինք թշնամիներին կերակրել, նոցա մեզ մօտ տեղաւորել, խոտ, դարման, գարի, վարսակ, ցորեն տալ նոցա և ամեն ինչ մինչև վերջին կովը—մեր ապրուստի միակ միջոցը: Նոյն իսկ ինձանից երկու կով տարան—նվա-

րող է ինձ վարձատրել: Ո՞ւմ դիմեմ ես իմ գանդատներով...

Այս արդէն չափազանց աներեսութիւն էր: Այդ անպիտանի աներեսութիւնը ալն աստիճան վրդովեց ինձ, որ էլ չկարողացալ ինձ զսպել և ձալն սուլի նորան.

— Դեռ համարձակում էլ ես, անպիտան, պարծենալ քո վարմունքով մեր դժբաղդութիւններից չետոյ... Աւելի լաւ է որ պատմես, թէ չետոյ ինչ արիւր և ինչպիսի օրինակ տուիր աղջկադ... Պատմիր բոլոր ներկալ եղողներին, թէ ինչպէս վազվզեցիր ամբողջ երկիրը գերմանական պահապան զօրքի հետ, որով իրաւունք էիր համարում ամբողջ երկրի անասուններից լաւագոյն կովերն ընտրել, քո թշուառ կովերի փոխարէն. պատմիր, թէ ինչպէս գողացար իմ չվէլցարական կովերը... Եւ դեռ համարձակում ես գանդատուել և ալնպիսի արժանաւոր մարդկանց ստորացնել, որոնք աղնութեամբ կատարում են իրանց պարտքը:

Քանի խօսքս առաջ էի տանում, կատարեալպէս հաւատացած, որ ալդ մարդն էր պատճառ տատիս հիւանդութեան, ալնքան աւելի խիստ էր բռնում բարկութիւնս. աշխատում ինձ զսպել, բայց ուժիցս վեր էր, և լանկարծ ձեռնափախտ երկու ձեռքով բռնելով՝ մօտ վաղեցի նորան որ խփեմ:

Բարեբաղդաբար, հացթուխ Գիկսարին, որ նստած էր ալն անպիտանի մօտ, աթոռը դէմ դրեց իմ հարուածին ու ասաց.

— Պրեզերիկ հալրիկ, ուշքի եկէք:

Մեր ընդհարումը սարսափելի տպաւորութիւն գործեց: Բոլոր ներկալ գտնուողները խոնուեցան որ մեզ բաժանեն, իսկ աւաղակը, ամենքի ետեւ կանգնած և բռունցքը վեր քաշած՝ գոչում էր.

— Ա՛յ, անպիտան ձեռ, կտուժես սորա համար... Գերմանացիք չկամեցան քեզ իրանց մօտ վերցնել... պարոն Փօրստմէլտրը արտաքսեց քեզ... երբ դու պաշտօն խնդրեցիր... ալժամ վիրաւորում գրպարում ես աղնիւ մարդկանց. բայց սուտ ես խօսում, էլի կը հանդիպես ինձ:

Այսպիսի ստոր ստախօսութիւնը կատաղութեան հասցրեց ինձ. հինգ թէ վեց մարդ ինձ բռնեցին, որ չարձակուեմ նորա վերալ:

Ամեն բան ջարդ ու փշուր կանէի, եթէ պահնորդները

օգնութիւն չկանչէին պահապան զօրքին, որ ալդ միջոցին շրջագալում էր ալդտեղ:

Երբ դրան մօտ հրացանները շաչուն լսեցի և լուսամուտներում տեսալ սաղաւարտներ, սթափուեցալ, տեղս նստեցի—և ամեն ինչ հանդարտուեց: Տասնապետը ներս մտաւ. տիկին վաշէրօնը, որ նստած էր սեղանի ետև, մի բաժակ գինի առաջարկեց նորան. և հէնց որ աղմուկը դադարեց, նա գինին խմեց, բեղերը սրբեց, գլուխ տուեց և դուրս գնաց: Տուբալին ու ես, հեռուից զայրագին նալում էինք միմեանց: Նա հասկանում էր, որ ալդ ղէպքի լուրը կտարածուի ողջ քաղաքում, և ալս բանից նա տրաքւում էր:

Նս ես մտածում էի. «Թէ մի կպատահես ինձ Բիգէլբէր. գի ճանապարհին—ես քեզ հետ հաշիւս կտեսնեմ և տափս վրէժն էլ լուծած կլինեմ»:

Նորա գլխով էլ կարծես նոյնպիսի մտքեր էին անցնում, վասն զի նա շարունակ նալում էր ինձ աչքի տակից դարչելի ժպիտով: Ալդ ժամանակ զոներում երևաց բժիշկ Սէմպէրլէնը և ինձ կանչեց: Նս իսկույն դուրս գնացի, դաւաթ գինուս փողը վճարեցի և ուղի ընկանք ղէպի Գրաուֆտալ:

ԼԱ.

Ինքդ գիտես, Ժօրթ, թէ ինչպէս վատ եղանակը աւելացնում է մարդուս վատ տրամադրութիւնը: Անձրեւը բարակ մաղում էր: Մենք անխօս գնում էինք բժիշկ Սէմպէրլէնի հետ, պտտելով տղմուտը, որի մէջ կարելի էր մինչև ծնկները թաթախուել:

Բիգէլբէրգի միւս երեսից անտառ էր սկսւում, և ճանապարհն աւելի լաւ էր. բժիշկին պատմեցի օրէրֆէլստրի արած առաջարկութեան և այն մասին, որ անտառային բոլոր պահապանները, բացի Յակոբ Խէպպից, հրաժարուեցան. որ մենք արդէն տեղափոխուեցանք անտառի տնից պանդոկապետ Իկէլի մօտ և ընակւում ենք մի ցուրտ ու մութ անկիւնում, ուր տատը վեց ամսից ի վեր սկսել է ծանր հազով խեղդուել: Նա գլուխը կախ լսում էր, և երբ խօսքս վերջացրի՝ պատասխանեց, թէ ի հարկէ ծանր է որ մարդ բաժանուի իւր տնից, հողից, մարդից և իւր ձեռքով տնկած ծառերից. բայց հարկ չկալ նահանջել ալդ ամենի առաջ. և որ ինքն էլ ստիպուած

է տեղափոխուել ալժմ իւր կնոջ ու որդւոց հետ և թողնել իւր բժշկական գործը, երկարամեալ աշխատութեանց պտուղը, բայց պրոստացիների խմբի մէջ ինքն այնուամենայնիւ չի մտնի ծառայելու:

Երեք ժամին մօտ հասանք Գրաուֆտալի պանդոկին և բարձրացանք նեղ սանդուխքով:

Բժիշկը նայեց տանիքի սեացած կոճղերին, մանրիկ լուսամուտներին, փոքր վառարանին և ասաց.

—Այստեղ շատ նեղուածք է և մռայլ՝ ազատ օդում ապրելու սովոր մարդկանց համար:

Նա լիչեց մեր սիրուն տունը հովտում, լուսաւոր պատահանները և սպիտակ պատերը: Ո՛հ, ինչպէս ամեն ինչ փոխուել էր:

Մի փոքր հանդստանալուց լստո՛՛ նա ասաց.

—Գնանք տեսնենք հիւանդին:

Ամենքս մտանք կողքի սենեակը: Արդէն մթնում էր, լապտեր վառեցինք, և բժիշկը, թեքուելով մահճակալի վերայ, նայեց խեղճ պառաւին ու ասաց.

—Բարև, Աննա տատ, Գրաուֆտալ գալով անցալ ձեր մօտից ու մտալ ձեզ տեսնելու. ֆրեզերիկ հայրիկն ասաց, որ տկար էք և եկալ տեսնելու:

Տատը ուշքի եկաւ, ճանաչեց նորան ու պատասխանեց.

—Ա՛խ, Գուք էք, Սէմպէրլէն... Այ՛ն... ալ՛ն... հիւանդ եմ, շատ հիւանդ... գոնէ Աստուած խղճար իմ տանջանքներին ու մահ տար:

Նա այնպէս դեղնած էր ու նիհար, որ նալելով վրան՝ մտածում էիր.—Ինչպէս է մեր խեղճ մարմնակազմը տակաւին զիմանում ալսպիսի ողորմելի վիճակի մէջ:

Նորա երբեմն ալեղարդ մաղերը, ալժմ դեղնել էին վաշի նման. այտերը խորն էին ընկել և աչքերը փալում խորշոմած ճակատի տակից մի տեսակ տարօրինակ փալով:

—Յուսահառուել պէտք չէ, տատի... Ձեր հիւանդութիւնը երբէք այնքան վտանգաւոր չէ... հազը կանցնի մինչև ձմեռուալ վերջը. պէտք է տաք մնալ միայն և տխուր մտածմունքները հեռու մղել... շուտով լետ կը դառնաք անտառի տունը և ձեր բոլոր զբաղաւթիւններին վերջ կլինի:

—Այ՛ն, ալ՛ն,—պատասխանեց նա, մեղ նայելով—լոյս ու-

նիմ, որ ամեն բան նախկին դրութեան մէջ կընկնի, միայն ես արդէն շատ եմ ծերացել:

—Այնքան էլ ծեր չէք, ինչպէս ասում էք: Ձեր հիւանդութիւնը մըսելուց է: Պէտք է քամու աղղեցութիւնից պահպանել, օրիորդ Վարդ-Մարի: Յետեւութիւն, տատի, շուտով առողջացէք:

Այսպէս սիրտ տուեց բժիշկը Աննա տատին, որ կարծես փոքր ինչ հանգստացաւ:

Սենեկից դուրս եկանք. ես սկսալ հարց ու փորձ անել բժիշկին, և որովհետեւ Վարդ-Մարին ես աղտեղ էր, նա հարցրեց ինձ.

—Կարող եմ օրիորդ Վարդ Մարիի ներկայութեամբ խօսել:

—Կարող էք, պատասխանեցի ես. —խեղճ դուստրս պարտաւոր է հիւանդին խնամել և նա ամեն բան պէտք է լիմանայ. ուղղակի ասացէք, եթէ հիւանդութիւնը ծանր է և եթէ մենք պիտի կոբցենք վերջին էակը, որ սիրում է մեզ և սիրում մեզանից:

—Դէհ, ասաց նա, —խեղճ կինը հիւանդ է ոչ այնքան ծերութիւնից, որքան վշտից, որ մաշել է նորան: Ձգուչացէք որ չվշտացնէք իրան, ծածկեցէք նորանից ձեր զօրաղղութիւնները... Ուրախ ցոյց տուէք ձեզ... Յուսադրեցէք նորան... Եթէ սկսի անհանգստանալ-հանդարտեցրէք... Կողմակի ոչ ոքի չթողնէք մօտը, որ վատ լուրեր չհաղորդեն. ամենալաւ դեղը, որ լանձնարարում եմ ձեզ, այս է:

Երբ նա այս ասում էր, Վարդ-Մարին սաստիկ գունատուեց և դէմքը ծածկելով ձեռքերի մէջ՝ մի տեսակ չոր հաղ սկսեց. նա իւր խօսքն ընդհատեց, նայեց նորան ու հարցրեց.

—Վաղձեց է հաղում էք, օրիորդ Վարդ-Մարի:

—Շատ ժամանակ չէ, —պատասխանեց նա կարմրելով:

Բժիշկը բռնեց նորա ձեռքը, զարկը շօշափեց ու ասաց.

—Դուք էլ պէտք է զգուշանաք. այս բնակարանը վնասակար է առողջութեան համար: Երեկոները ջերմ չէք ունենում:

—Ո՛չ, բժիշկ:

—Աւելի լաւ. բայց կրինում եմ. պէտք է զգուշանալ և աշխատել, որ դու ևս հեռացնես քեզանից տխուր մտածմունքները:

Նա գլխարկը ու ձեռնափալտը վերցրեց, և վազը իջնելով՝ ասաց ինձ

—Վաղը քաղաք մտէք և Ռէբի դեղատնից դեղ վերցրէք ու առաւօտ երեկոյ տատին տուէք երեք-երեք կաթիլ ջրի մէջ. աղ կաթիլներից շնչարդեւութիւնը կանցնի՝ աշխատեցէք նոյնպէս զգուշանալ ձեր դստեր. նա շատ է փոխուել. վեց ամիս առաջ շատ առողջ էր ու թարմ: Պահպանեցէք:

—Աստուած իմ, —հեծեցի ես լուսահատուած. —դստերս պահպանեմ: Պահպանեմ նորան... Ես ուրախութեամբ սեպհական կեանքս կտալի, միայն թէ ինձ համար այս թանկագին էակների կեանքն ազատէի ամեն զօրաղղութիւնից, վշտից ու տանջանքներից:

Ես պատրաստ էի հեկեկալ երեխայի պէս: Պարոն Այմ պէրլէնն այս նկատեց և դռանը, ձեռքս սեղմելով՝ զգացուած ասաց.

—Ես ու դու ևս հիւանդ եմք, աղպէս չէ, Ֆրեդէրիկ հայրիկ: Մինչև անգամ լուրջ հիւանդ եմք: Մեր սրտերը տրաքւում են վշտից, տխուր մտածմունքները սպանում են մեզ. բայց մենք տղամարդ եմք, մենք պէտք է սրտոտ լինինք ամենքի փոխարէն:

Յանկացալ գոնէ հովտի մինչև պտոյտը ուղեկցել, վասն զի մթնում էր. բայց նա մերժեց:

—Ճանապարհը ծանօթ է ինձ: Տուն գնացէք, Ֆրեդէրիկ հայրիկ: Աշխատեցէք հանդարտ երեալ ձեր մօրն ու աղջկան, այս անհրաժեշտ է նոցա:

Եւ ճանապարհ ընկաւ, իսկ ես դարձալ տուն:

ԼԲ.

Անցաւ երկու թէ երեք օր:

Քաղաք գնացի և Ռէբիի դեղատնից բերի բժիշկ Այմ պէրլէնի զրաժ դեղը: Տատը հանգստացաւ. հաղը պակասեց, նորան ասացինք, որ շուտով խաղաղութեան դաշն կկապեն, ամեն ինչ նախկին դրութիւնը կստանայ և ժան Մէրլէնը չեա կդառնալ: Խեղճ պառաւը կարծես թէ սկսեց քիչ քիչ կաղզուրուել, եւր լանկարժ մի առաւօտ պրուսական երկու զաւոտնի ոստիկաններ կանգնեցին պանդոկի մօտ: Նոքա առ-

վորաբար անցնում էին առանց կանգ առնելու, ուստի և ես շատ զարմացալ ալս բանի վրայ, մի քիչ լեռնոյ, ծեր Իկելի աղջիկը եկաւ ասաց, թէ ինձ ներքե կանչում են:

Ես իջալ և տեսալ, որ դահլիճի մէջ տեղ կանգնած էին երկու չափահաս գաղտնի ոստիկաններ՝ բարձր վզով կոշիկներ հագին. նոցա սաղաւարտները գրեթէ առաստաղին էր հասնում: Նոքա հարցրին թէ Ես եմ Գրեգէրիկը, նախկին անտառապետը: Պատասխանեցի՝ այո՛. ապա նոցանից մէկը ձեռքի մէկից հանելով անագին ձեռնոցը և ճանապարհի պարկը քրքրելով՝ մի թուղթ հանեց և տուեց ինձ. ես խսկոյն կարդացի:

Դա հրաման էր Ֆալցբուրգի հրամանատարից, որ 24 ժամուայ ընթացքում հեռանամ ալդ երկրից: Հասկանում ես, ժօրթ, թէ ինչ տղաւորութիւն կգործէր ինձ վերայ ալդ. ես գունաթափ եղալ և հարցրի, ինչ եմ արել որ այսպէս զարհուրելի կերպով հալածում են ինձ:

—Ալդ մեզ չէ վերաբերում,—պատասխանեց նոցանից մէկը:—Այնտեղէք պատուէրը կատարել, ապա թէ ոչ ուրիշ միջոցներ գործ կդրուին:

Ասացին և ձի նստեցին. էլ խելքս զլխիս չէր. ծերունի Իկելը, մենակ մնալով ինձ հետ և տեսնելով իմ սոսկալի վիճակը, չգիտէր ինչ մտածէ, և ասաց.

—Ի սէր Աստծու, Գրեգէրիկ, ասացէք, ինչ էք արել: Դուք այնպիսի մի նշանաւոր մարդ չէք, և այս խուլ անկիւնում կարելի էր ձեզ հանգիստ թողնել:

Ոչինչ չպատասխանեցի և ոչինչ էլ չէի կարողանում մտածել ու լիչել. մտածում էի դատերս և պառաւ տատիս լուսաւորութեան մասին, երբ կլսէին այս նոր դժբաղտութեան լուրը: Ալդ ժամանակ միայն մտաբերեցի իմ անդգուշ խօսակցութիւնը Վաչէթօն սրճատանը, Տուբակի հետ ունեցածս կռուի օրը: Ծերունի Իկելը համաձայնեց իմ ենթադրութեան հետ, որ Տուբակը մատնել էր ինձ: Ինձ մի միջոց էր մնում. վաղել հրամանատարի մօտ, որ մի քանի օր ժամանակ խնդրեմ, ի լարգանս տատիս հիւանդութեան, որ անշուշտ կմեռնէր ճանապարհին: Իկելը կանչեց զպրոցական վարժապետին, և ամենքս մէկտեղ դատաւորից պաշտօնական վկայական ձեռք բերինք, լաւ ցուցումներով իմ մասին և ընտանիքիս թշուառ կացութեան վերաբերմամբ. մէջը լիչուեցաւ ամեն բան, ինչ որ կա-

րող էր միայն ազդել այսպիսի դէպքում: Իկելը առանձնապէս խորհուրդ տուեց դիմել բժիշկ Սէմպէրլէնի օգնութեան, որ նա վկայական տալ տատի հիւանդութեան մասին. նա կարծում էր, որ այս ամենը կարող են շարժել բերդապետի գութը և կկտաձգէ իմ աքսորը, մինչև որ խեղճ պառաւը կարող կլինի ճանապարհորդութիւնը տանել:

Ես աչնպէս աղմկուած էի, որ այլ ևս անդօր էի բան մտածել և ուղևորուեցալ դէպի հրամանատարը:

Վարդ-Մարին ոչինչ չգիտէր այս մասին. տատը նոյնպէս, վրաս ոյժ չէր մնացել այն նոր հարուածի մասին հաղորդել նոցա, որ սպառնում էր մեզ: Միայնակ գնալ, ալդ բաբբարոսներից վախչել, որոնք աչնպէս սառնասրտութեամբ ամեն թշուառութեան ենթարկում էին մեզ, դեռ էլ ոչինչ էր. բայց տատս և Վարդ-Մարին... ևս վախենում էի մտածել անգամ նոցա մասին...

Տասներկու ժամին մօտ եկալ Ֆալցբուրգ սաստիկ ալեկոծուած. մեզ հանդիպած բոլոր դժբաղտութիւնները պատկերացան աչքիս առաջ:

Ամենից առաջ բժշկին դնացի, որ մի վկայական տուեց, թէ իմ հիւանդ աատն աչնքան թոյլ է, որ անկէրող է նոյն խակ երկու ժամուայ ճանապարհորդութեան դիմանալ:

—Ահաւասիկ,—ասաց նա թուղթը տալով,—ես միայն զուտ ճշմարտութիւնը գրեցի: Դեռ կարող էի աւելացնել, որ ձեր գնալը կարող է մահաբեր լինել նորա համար, բայց բերդապետը ուշք չի դարձնի ալդ բանի վրայ. եթէ այս վկայականը չհամոզէ նորան, մնացեալ ամեն ինչ անօգուտ կլինի:

Գնացի բերդապետի վարչութեան բնակարանը, որ զետեղուած էր նախկին կառավարութեան մէջ Կօլլէթ փողոցում: Բան խնդրել այս անպիտաններին, որոնց ես աչնքան արհամարհում էի, շատ ծանր էր ինձ համար. ես—Ֆրանսիական հին անտառապետս, հայրենիքի հին ծառաս, մաղերս ծառայութեան մէջ ձերմակած—պէտք է ստորանալի և ամենաչար թշնամիների խնդրէի, որոնք հպարտանում էին իրանց՝ լուկ միայն բազմաթիւ զօրքերի շնորհիւ կատարուած չաղթանակներով: Բայց տատիս, ծեր Բրուատի ալրու համար պատրաստ էի ամեն ինչ տանել...

Համազգեստ հագած և չէկ այտաժօրութով մի բարձրահասակ պրուսացի երկար սպասել տուեց ինձ նախասեն-

կում. բերդապետի բնակարանում նախաճաշում էին, և ամբողջ ժամ անցնելուց լետու միայն պատուէր ստացաւ վերև բարձրանալ: Վերևը մի ուրիշ օրապահ նորից սպասել տուեց. վերջապէս ինձ թող տուին ներս մտնել մի բաւական մեծ սենեակ որ նախում էր դէպի զօրանցի պարտէզը. բաղնիցի բերդապետի սենեկի դուռը, որ ձայն տուեց թէ ներս արիւ իմ առաջ մի առողջակազմ մարդ տեսալ, խիստ կարմիր դէմքով, որ անցուղարձ անելով սենեկում, համազգեստը ուղղում էր իւր վերայ և շատ վատ էր տրամադրուած: Ես համեստութեամբ պարզեցի նորան իմ դուրթիւնը և մատուցի վկայականը, որ նա առանց նոյն խակ աչքի անցնելու՝ չպրտեց սեղանի վերայ:

—Այդ բոլորը ոչ մի նշանակութիւն չունի,—ասաց նա կոպիտ կերպով: Դուք լալտնի էք որպէս մի վտանգաւոր մարդ և գերմանացիներին լալտնի թշնամի: Դուք համոզեցիք ձեր ստորադրեալներին որ մեզ մօտ չծառայեն. ձեր փեսան միացել է Գամբելտալի աւազակների հետ: Դուք պարծեցել էք մի սրճատանը, թէ մերժել էք Յօրնշտադի օբէրֆէրստէրի առաջարկը. սոցանից աւելի նուազ պատճառ բաւական կ'լինի՝ երկրից մարդ աքսորելու համար:

Ես կրկնեցի, որ տատս մերձ ի մահ հիւանդ է:

—Դէհ, ուրեմն թողէք տանը մեռնի,—ասաց նա.—աքսորի հրամանը միայն ձեզ համար է:

Այլ ևս չլսելով ինձ, նա ներս մտաւ դրացի սենեակը, ծառային կանչեց իւր մօտ և դուռը փակեց ետևից:

Ուստիստ վար իջալ սանդուխքից, վերջին լոյսս էլ խորտակուած. ինձ ոչ մի ելք չէր մնում. ստիպուած էի գնալ, ստիպուած էի ալս ամենը լալտնել աղջկաս և տատին: Ես գիտէի, թէ ալս ամենը ինչով կ'վերջանար. զլուխս կախարած, անցալ բակի դռնով և հասալ գերմանական պահապանին, առանց նկատելու որ և է բան: Ամբողջ ճանապարհը, հովիտն ու անտառն անցնելիս ես ուշքի չեկալ և կարծես թէ ցնորուած էի լուսահատութիւնից. խօսում էի ինքս ինձ և դէպի ծառերը դառնալով՝ բարձրացնում ձեռներս:

—Անթիմալները ճնշում են մեզ... Մարդասիրութիւնը, անցանքի ամօթը, խղճի խալթը—ամենն էլ ոտնակոխ են արած: Մնացել է միայն ոլթը: Գոնէ միանգամից սպանած լինէին մեզ ամենիս: Գոնէ ալս չարագործները անկողնի մէջ խեղդէին մահամերձ պառաւին և դստերս զուանը կախէին:

և ինձ էլ կտոր կտոր անէին... Այս աւելի լաւ կ'լինէր մեզ համար, Սա աւելի պակաս խիստ կ'լինէր, քան մեզ միմեանց գրկից խլելը, որդուն ստիպելը, որ թողնէ իւր մեռնող մօրը...

Ես գնում էի դեղեկելով: Ինձ թուում էր, թէ անտառները, խոռաները, ժայռերը աւազակներով լիքն էին, որոնց մասին շատ էի լսել մանկութեանս ժամանակ. թուում էր, թէ լսում էի նոցա երգերի ձայնը խարուկի շուրջը, լափշտակած աւարը բաժանելիս մեր մեծ լեղափոխութիւնից առաջ տեղի ունեցած բոլոր սարսափները նորոգուեցան աչքիս առաջ: Ժայռերի արձագանքը կրկնում էր վայրենի նուագի ձայնը, որ ճշում էր պրուսական փողը Ֆալցբուրգում և կարծես թէ դուրս էր կանչում ալս չարագործների ստուերները, որոնք մոխիր էին դառել տասնեակ տարիներ առաջ:

Գրառֆտալի տները տեսնելով՝ ուշքի եկալ. ստակացի, երբ միտս եկաւ, որ հնչել էր Վարդ-Մարիին և տատին՝ տարագիր լինելու լուրը լալտնելու ժամը: Ինձ համար դա համազօր էր մահուան դատաւճռի, որ պէտք է արտասանէի նոցա առաջ, որոնց ամենից շատ էի սիրում աշխարհում: Ես դանդաղեցրի քալելիս, որպէս զի ուշացնեմ ալդ րոպէս. բայց անցնելով մի երկու տուն, տեսալ Վարդ-Մարիին, որ սպասում էր ինձ դէպ իկէլի պանդոկը տանող ծառաստանում. նորան նախելով՝ գուշակեցի, որ ամեն ինչ լալտնի պիտի լինէր իրան:

—Հ'ը, ինչ կալ, հայրիկ,—հարցրեց նա ինձ հանդարտ, երբ տանը մօտեցանք:

—Ես պէտք է հեռանամ,—պատասխանեցի կարեւորէն չափ հանդարտութեամբ, բայց դուք կ'մնաք... ձեզ թող է տըրուած մնալ:

Միևնուց ժամանակ ես վերեկից տատի հեծեծանքը լսեցի: Հէնց որ ես գորս գնացի, կատելը վերև վազեց և մեր նոր դժբաղտութիւնը հաղորդեց Վարդ-Մարիին. խեղճ պառաւը լըսեց ամենը: Այս նորութիւնը տարածուեց ամբողջ գիւղում: ամբողջ խոռուեց մեր շուրջը, և տեսնելով, որ հնար չկալ այս դժբաղտութիւնը վերացնել, ամենքին պատմեցի, թէ ինչպէս կոպիտ ընդունեց ինձ պրուսական բերդապետը: Հարեաններն ուշադրութեամբ ականջ էին դնում ինձ, բայց ոչ ոք չէր վստահանում ձայն հանել, վախենալով որ նոյն վիճակի չենթարկուին:

Տատն իմ ձայնը ճանաչեց և կանչեց:

—Ֆրեդերիկ... Ֆրեդերիկ...

Այդ ձայնի լուր միայն հնչելն ճակատին վերաջ խոշոր կաթիլներ արտադրեցին։ Ես պատասխանեցի, վեր ելնելով։

—Գալիս եմ, տատիկ, գալիս եմ... Ինչո՞ւ ես այդպէս լուսահատու՞մ։ Երկար ժամանակով չեմք բաժանուելու... Ես չեմ կղաւնամ... Այժմ ինձնից քաջու՞մ եմ... Նոքա սխալու՞մ եմ, տատիկ... Բայց նոքա ուժեղ եմ մեղմից...

—Ախ, — գոչեց նա. դուք գնում էք, Ֆրեդերիկ, դուք գնում էք, ինչպէս խեղճ ժանդ... Ես գիտէի, որ նա կուռելու է գնում... ամենը գիտէի... Ես ձեզ ալ ես չեմ տեսնի — ոչ մէկիդ և ոչ միւսիդ։

—Ինչո՞ւ, տատիկ, ինչո՞ւ։ Մի քանի շաբաթից լեռով ինձ թուլ կտրուի չեմ դառնալ... և ժանն էլ չեմ կղաւնալ երբ պատերազմը վերջանալ...

—Ես ալ ես չեմ տեսնի ձեզ, — աղաղակեց նա, հեկեկալով։

Մարդիկ հետաքրքրուող են լինում մինչև խստութիւն, այդպէս էր և այս անգամ. բոլոր շրջապատողները մէկը միւսի ետեւից բարձրացան իմ ետեւից և մեր երեք փոքր սենեակները լցուեցան ամբոխով. ամենքը աշխատում էին աղմուկ չանել և, որ ձայն չհանեն, մաշիկները հանեցին սանդուխի ներքեւում. նոքա ուղում էին ամենը տեսնել, ամեն բան լսել. բայց մեծ դորձադոյն վարացուրի ետեւից տեսնելով թշուառ պառաւին, որ հեկեկալով ձեռները տարածել էր դէպի ինձ, գրեթէ ամենքն իսկոյն հեռացան։ Մնաց Շտարկը, ծեր Իկէլը և նորա գուտոր կատէլը։

—Աննա տատ, — ասաց Իկէլը, — չպէտք է այդպէս լուսահատուել, Ֆրեդերիկն արդար է. . Պէտք է խոհեմ լինել... Հէնց որ խաղաղութիւնը կտրի, ամեն ինչ նախկին դրութիւնը կստանալ։ Դուք 83 տարեկան էք, իսկ ես մօտ 70... Ես լուր ունիմ տեսնել ժանին, Ֆրեդերիկ պապին և այստեղից գնացող ամենքին...

—Ախ, — պատասխանեց նա. ես խիստ շատ եմ զրկանք կրել և էլ տանել չեմ կարող։

Եւ մինչև ուշ գիշեր նա հեծում էր։

Վարդ-Մարին, որ երբէք անվահերութիւնը չէր կորցնում, պահարանը բաց արաւ, միջից հանեց իմ իրերը, որովհետեւ ժամանակ կորցնել չէի կարող. միւս առաւօտ հարկ կար ու-

ղևորուել։ Նա սեղանի վերայ դարսեց իմ լաւ շորերն ու փոխ-նորդը և հանդարտ հարցրեց նոյն միջոցին, երբ տատը լաւիս էր.

— Այս կվերցնես, հայրիկ։ Իսկ անց։

Ես պատասխանեցի նորան.

—Դարսիր ինչպէս խելքդ կտրում է, որդիս։ Ես մտածել անկարող եմ Չմոռանաս միայն պաշտօնագրեստս դնել. դա ամենից կարևորն է։

Իկէլը, գիտենալով, որ ազատ վայրկեան չունէինք, առաջարկեց, որ մենք երեկոյի համար ոչինչ չպատրաստենք և նորա հետ ընթերնք ներքեւ. համաձայնեցանք։

Այդ երեկոյ, ժ-օրժ, ընթերնիս քիչ լսուեցինք. կատէլը մնաց վերև տատի անկողնի մօտ։ Գիշերը հասաւ, իրերս դարսած էր, և ամենքս վաղ քնեցինք։ Կհաւատաս, որ ես գրեթէ չքնեցի։ Տատի հեծեծանքը և իմ խոհերը թէ ուր պիտի գնամ, փողի պակասութեան մասին ճանապարհի համար, — որովհետեւ պէտք էր տանն էլ թողնել ծախսի համար, — այս ամենը չուզում էր ինձ, և չնախելով լողնածութեանս՝ աչք չփակեցի։ Ամբողջ գիշեր ինքս ինձ հարցնում էի ուր գնամ, ո՞ւմ դիմեմ, ինչո՞ւ հաց վատտակեմ. այս ամեն հարցերը հարկւրաւոր անգամ պտույտ եկաւ զլխումս, և վերջապէս լիչեցի պ. Արանսին, մի լաւ տղամարդու, որ ինձ միշտ սիրում էր և որի իշխանութեան ներքոյ, շատ տարիներ առաջ, ծառայել էի իբրև հասարակ անտառալին պահապան։ Ինձ ասացին որ նա կենում է Սէնտ-Գիէում, և ես լուր ունէի որ եթէ նորան ողջ գտնեմ, նա ինձ կընդունէր և կօգնէր թշուառութեանս մէջ։ Այս միտքը ծագեց իմ մէջ առաւօտեան դէմ. ես հանգստացալ և մէկ թէ երկու ժամ քնեցի։

Հազիւ լուսացած արդէն ոտի վերայ էի։ Զարհուրելի բոպէն մօտենում էր, տատը ոտնաձայնս լսելով՝ կանչեց ինձ.

Վարդ-Մարին ևս վեր կացաւ. նա նախաձաշ պատրաստեց, իսկ Իկէլը վերև բերեց մի շիշ գինի։

Հագնուելով՝ մտալ տատի սենեակը, աշխատելով անվահեր երեւալ, բայց զգում էի, որ ալ ես տեսնելու չէի նորան։

Տեսքով հանդարտ էր նա, ինձ պատուիրեց մօտ գնալ և երկու ձեռքով փաթաթուեց վզին ու ասաց.

— Զուճիս։ Դու ինձ համար եղել ես միշտ իսկական, բարի զաւակ։ Որդի Ֆրեդերիկ, օրհնում եմ քեզ... մաղթում

եմ քեզ կատարեալ երջանկութիւն, որին արժանի ես... Բայց... Խեղճերի բարի ցանկութիւններն ու օրհնութիւնները մի բանի չեն հասցնում... Այլապէս, սիրելի Ֆրեդէրիկ, այդպէս դժբաղաւ չէիր լինի...

Նա լաց էր լինում, ես չկարողացայ արտասուքս դադել։ Վարդ-Մարին, անկողնի մօտ կանգնած հանգարտ հեկեկում էր։ Գրկելով տատիս՝ ասացի։

— Ձեր օրհնութիւններն ու բարի խօսքերը աշխարհիս բոլոր գանձերից աւելի են ինձ համար։ մխիթարում եմ, որ չուտով կտեսնեմ ձեզ։

— Գուցէ մենք միւս կեանքում կտեսնուինք, — պատասխանեց նա. բայց այստեղ, աշխարհումս, անշատուում եմ քեզ. նից... Մնաս բարեաւ — Ֆրեդէրիկ, մնաս բարեաւ...

Եւ գրկելով՝ նա համբուրեց ինձ դողողով շրթունքներով, լետով, շուռ գալով՝ ձեռքիցս բռնեց և նորից հեկեկաւով՝ հանդարտ շնչաց։

— Մնաս բարեաւ։

Ես դուրս գնացի. ուժաթափ էի եղած։

Դրացի սենեկում մի բաժակ զինի խմեցի և մի կտոր հաց դրի զրպանս։

Վարդ-Մարին ինձնից չէր հեռանում, ես նշան արի նորան և պատուիրեցի վաղ իջնել, որ տատը մեր հրաժեշտի հեկեկանքը չլսէ։

Մենք լուռ մտանք դահլիճ, ուր ծեր Իկէլը ուրիշ բարեկամների հետ սպասում էին մեզ. այստեղ էր Շտարկը, որ մեզ օգնել էր անտառի տնից տեղափոխուելիս, Գլալօտը, և մի քանի էլ բարի ծանօթներ։

Մենք հրաժեշտ տուինք միմեանց. դուրս գալով, ես գրկեցի Վարդ-Մարին, ինչպէս կարող էր միայն գրկել մի դժբաղտ հայր իւր զաւակին, համբուրեցի, ցանկալով դորանով աչն ամենը, ինչ որ կարող է մարդ ցանկալ աչն էակին, որ իր կեանքից աւելի թանկ է և որին նա չարգում է բարեբաւութեան, բարութեան և քաջութեան համար։ Կապողը ուսիս ձգելով՝ գնացի առանց լետ նայելու։

ԼԳ.

Աքսորի ճանապարհը երկար է, ժօրժ, և նորա առաջին քաղերը ծանր են։ Ով որ ասել է, թէ հայրենիքը հետներս

տանել չենք կարող, լաւ է հասկացել մարդկային տանջանքները։ Դեռ հայրենիքի հետ ալժամ զաւակն էլ պէտք էր թողնել, իսկ ականջումս հնչում էին տատի հրաժեշտի ձայները։ Սարը բարձրանալով՝ նախ քան ցած իջնելը՝ մի վերջին հաշեացք ձգեցի տնակիս և ալգուս վերայ ու մտածեցի. «էլ չես տեսնի այս ամենը»։ Այսպիսի վաղկենին, ժօրժ, թւում է թէ երկիրը լետ է պահում քեզ, ծառերը տարածում են դէպի քեզ իրանց ճիւղերը։

Այս ամենն զգացի Բէրլինգէնի. գագաթին. դեռ էլի սարսափում եմ այս ամենը լիջելիս։

Երբ մտածում ես, որ այսպիսի չնչին արարածներ կարող են ալդ տեսակ տանջանքների պատճառել իրանց միւրձաւորներին... Թող Ամենակարողը ներէ նոցա, արդարութեան ժամը կհնչէ մի օր։

Դուրս խլուելով ալդ տեղից, առաջ գնացի։ Ցած իջալ լեռնից, և հարազատ երկիրը կամաց կամաց հեռացաւ ինձանից։ Ո՛հ, ինչպէս տանջուեցի և ինչպէս շատ բան էի մտաբերում։ Անտառներ, եղևնուտ, դարեջրի հին գործարաններն անլալտացան...

Մօտեցալ Դէնբուրգին և սկսալ իջնել երկրորդ բարձր գագաթից, ընկղմուած մտածմունքներս մէջ, երբ լանկարծ մի լիսուն քալլ հեռու ինձանից ծառերի միջից երևեցաւ մի մարդ հրացանն ուսին։ Երբ նորան տեսալ՝ բոլոր մտածմունքներս գրուեցին. ճանաչեցի Խէպպին, նախկին անտառապետին, որին զրաւեցին պրուսացիներն և որը միայնակ մեր ամենիս մէջ մտաւ նոցա ծառալուծին։

— Դո՛ւք էք, Ֆրեդէրիկ հայրիկ, — հարցրեց նա զարմացած։

— Այո՛, ես եմ։

— Ի՞նչ էք գնում այսպէս վաղ կապոցն ուսիդ։

— Ուր որ Աստուած կառաջնորդէ... գեյմանացիք հալածում են ինձ... Ուզում եմ հաց վաստակել մի ալ տեղ։

Նա ամբողջապէս գունատուեց։ Աս կանգ առալ, որ շունչ քաշեմ։

— Ի՛նչ, ասաց նա, — ալդ տարիքում ձեզ աքսորում են. ձեզ, ծեր անտառապետիդ, աղնիւ մարդուն, որ ոչ ոքին վատութիւն չէ արել։

— Այո՛, չեն ցանկանում ինձ իմ երկրում թողնել։ 24

ժամ է միայն ժամանակ տուած ինձ, որ Էլզասից դուրս գնամ. և անն գնում եմ...

— Իսկ Վարդ-Մարին, հայա տատը:

— Նոքա Գրառաֆտալ են ծեր Իկէլի մօտ: Տատը մեռնում է... մէկը հալած լը թաղէ:

— Խէպսը, գլուխը կախելով՝ գետնին նայեց և ասաց.

Ի՛նչ դժբաղտութիւն... Ի՛նչ դժբաղտութիւն...

— Նա ոչինչ չպատասխանեցի և քրտինքս սրբեցի երեսիցս: Մի բոպէից, առանց ինձ նայելու, նա հաղաց և հանդարտ ասաց.

— Ա՛խ, եթէ մենակ ես ու կինս լինէինք, Բալց վեց էլ որդի ունիմ... Նոցա հայրն էլ եմ... Չեմ կարող թողնել որ սովից մեռնեն... Գուք մի քիչ փող ունէիք հաւաքած... ես մի սանտիմ էլ չունէի:

Տեանելով, որ այս մարդը, որ անտառապետի պաշտօն էր ստացել գերմանացիների մօտ, ներումն է խնդրում ինձանից, դժբաղտ աքսորականից, և չիմանալով ինչ պատասխանեմ՝ ասացի.

— Աստուած իմ, ամեն մէկն էլ ունի իր մեծ ցաւը: Յտե՛սութիւն... ցտեսութիւն:

Նա ուղեց ձեռքս սեղմել, բայց ես առանց լիտ նայելու գնացի, մտածելով.

«Այս մարդը, Ֆրեդէրիկ, քեզանից աւելի դժբաղտ է, սորա վիշտն աւելի մեծ է. նա ծախեց իւր խիղճը պրուսացիներին մի կտոր սև հացի համար: Գու գէթ կարող ես ամենքի աչքերին նայել. դու կարող ես, չնայելով աղքատ վիճակիդ, ասել. ես աղին. մարդ եմ... Բալց նա չի կարող նայել իւր հին ընկերոջ երեսին. կարմրում է և գլուխը կախում: Գերմանացիք, օգտուելով այն հանգամանքից, որ նա վեց որդի ունի, գնեցին նորան»:

Չնայելով դժուար զրութեանս՝ զգում էի, որ լաւ վարուեցի. Խէպսի տեղ որ լինէի, վաղուց արդէն մի տեղ ինձ կախել էի անտառում: Մարդս միշտ գոհ է, եթէ նորան չաջողում է երկու շաբաթից փոքրագոյն ընտրել:

Այս մտքերին չուտով ուրիշները փոխարինեցին:

Պէտք է ասեմ քեզ, որ ամեն գիւղերում, մինչև անգամ ամենախեղճ շէնքերում, որոնց միջով անցաւ, խեղճ մարդիկ, տեսնելով որ այս տարիքում գնում եմ կապոյն ուսիս, ամեն

կողմից ուրախութեամբ էին ընդունում ինձ. նոքա հասկանում էին, որ ես մէկն էի նոցանից, որոնց աքսորում էին Ֆրանսիան սիրելու համար. կանաչք, դռներին երեսաների ձեռքերից բռնած, ուղևորում էին ինձ այս խօսքերով.

— Թող Աստուած օգնէ Ձեզ...

Լիւտցէլբուրգի, Դօբօի և ուրիշ տեղերի մանր հիւրանոցներում, ուր ես ժամանակ առ ժամանակ հանգիստ էի առնում որ ոլժերս նորոգեմ, ոչ ոք չէր ուղում փող վերցնել ինձանից, երբ ես տուում էի. «Հին անտառապետ եմ. գերմանացիք քշում են ինձ, որովհետև մերժեցի ծառայել նոցա»... Ամենքը չարգութեամբ էին վարում հետս:

Ի հարկէ, ես չօգտուեցի այս մարդոց բարութիւնից և ամեն բանի համար վճարում էի. այս խիստ հարկահանութեան ժամանակ ամեն ոք դրամի կարիք ունէր:

Այս բոլոր երկիրը լեզափոխութեան կողմնակից էր. որքան աւելի էի մօտենում Վօլգամին, այնքան լաճախ էին լսում Գարիբալդու, Գամբետայի, Շանդի, Ֆէդէրէի անունները. բայց այնքան էլ աւելի նկատելի էր դառնում ծանր հարկահանութեան հետևանքներն ու լաճախ էին պատահում զօրքից աւերուած գիւղերը:

Նոյն օրը երեկոյեան 8 ժամին հասանք Շիրմէկ: Հիւրանոց մտնելով՝ տեսալ Փէլզֆէլէին, հարկահանին և կօմիսարին, որոնք սեղանի շուրջ նստած՝ խմում էին և ծխում իրանց հալրենակիցների հետ: Ամենքը լիտ նայեցին և աչք չէին հեռացնում ինձնից, երբ ես խնդրեցի մի գիշերուայ համար օթոց:

Կօմիսարը պատուիրեց որ թղթերս ցոյց աամ: Ուշագրութեամբ աչքի անցնելով բոլոր ստորագրութիւններն ու կնիքները, նա ինձ ասաց.

Մինչև ալժմ ամեն բան կարգին է, բայց վաղը արեւ չծագած ճանապարհին պէտք է լինես:

Այս խօսքից լետոյ միայն հիւրանոցի տէրը վստահացաւ թուլ տալ ինձ ուտել և խմել. հիւրանոցը լիքն էր պրուսացի աստիճանաւորներով, և ինձ տարան քնելու կալում, ուր քնեցի լադի վերա: Դուրսը խիստ ցուրտ էր, բայց կալը գոմի մօտ էր, ուստի և տաք էր այնտեղ. ես խորը քնեցի, որովհետև խիստ լողնած էի: Քունը, Ժօրժ, մխիթարութիւն է

գոթադաճների համար, եթէ որ ես խօսէի Աստուծոյ բարութեան մասին, ապա կասէի, որ նա ամեն օր մի քանի ժամով կանչում է մեզ իւր մօտ որպէս զի կարողանանք մեր թշուառութիւնները մոռանալ:

Միւս օրը լուսահատութեանս փոխարինեց աւելի առուգ տրամադրութիւն. ես ուղեորուեցի դէպի Ռօտաու: Յիւնցի ժան Մէրլէնին: Գուցէ նա էլ այս ճանապարհով էր գնացել, ինչպէս ամենից կարճ ճանապարհը: Որքան բաղտաւոր կլինէի, եթէ նորա շաւղում ընկնէի, իմանալի որն է բան նորա մասին և հաղորդէի Վարդ-Մարին:—Ինչ միտքարութիւն կլինէր այս մեր անբաղդ վիճակում: Գոթար էր լուսալ ալս բանի վերայ—այնքան շատ ժողովուրդ էր անցել վերջին երեք ամսուան ընթացքում Ռօտաուից Պրովանշէր, Ֆրանսիացիներ, գերմանացիներ, օտարականներ, որոնց ոչ ոք էլ չէր լիւում:

Բայց ես այնուամենայնիւ չէի կարող ժան-Մէրլէնի մասին չմտածել...

Ճանապարհս շարունակելով, հիանում էի այս լեռնային երկրի գեղեցիկ անտառներով. ճանապարհը պատող խիտ եղեինները լիչեցնում էին ինձ Ֆալթերգի եղեինները՝ Սալթերնի մօտ. նոցա տեսքը լուզում էր ինձ. թուում էր, թէ հին ընկերներն են ուղեկցում ինձ, որ մի քանի ժամ միասին անցնենք, վերջին միաս բարեն ասելուց առաջ: Շարժողութիւնը, լեռնային պարզ օդը, բարի մարդկանց սիրալիւր ընդունելութիւնը, իմ հին իշխանաւոր Արանսին գտնելու լոյսս, և մանաւանդ իմ ցանկութիւնը որ լուսահատութեան անձնատուր չլինեմ մինչդեռ խեղճ դուստրս և պառաւ տատը դեռ այնքան խիտ կարիք ունէին իմ օգնութեան, այս ամենը ուժ էր տալիս ինձ և շարունակ խրախուսում էի ինձ:

Փրեղերիկ, մի վհատուիր... դեռ բոլոր Ֆրանսիացիք չեն կորել... վերջապէս կվերադառնայ նախկին լաւ ժամանակը... Ով լուսահատում է՝ կորչում է. խեղճ թուչնիկները, որոնց ձմեռը ստիպում է իրանց բոցնը ձիւլ, հեռու տեղ են թռչում որոնելու տաքութիւն, միջատներ և հատիկներ. նոքա ես չարչարում են, բայց գարնան նորից լետ են դառնում... Սա օրինակ պէտք է լինի քեզ... քեզ համար էլ լաւ օր կգա... Մի փոքր ուժ էլ, և կհասնես Սէնտ-Վիէ և կտեսնես պ. Արանսին, որ քեզ կպաշտպանէ: Այսպիսով սիրտ

տալով ինձ՝ դեռ լոյս էր որ տեղ հասայ, բայց խիտ լոգնած: Մտալ առաջին հանդիպած հիւրանոցը, մի գաւաթ զինիով ամրացրի ինձ և պ. Արանսի մասին իմացայ, որ նա դեռ էլի Սէնտ-Վիէումն է և վարում է իւր նախկին՝ վերատեսչի պաշտօնը: Դա ինձ շատ ուրախացրեց. բայց ես այնպէս լոգնած էի, որ հաղիւ էի ոտի կանգնում. բարեբաղտաբար ինձ լաջողուեց անկողին գտնել, ուր ես աւելի լաւ քնեցի քան Շիրմէկի կալում:

Բայց առաւօտը վաղ ինձ դարթեցրեց պրոսական փողհարը, պրոսական գնդերից մէկը բռնել էր ալդ քաղաքը. գնդապետը տեղաւորուել էր եպիսկոպոսի տանը, իսկ սպաները և զինուորները՝ քաղաքի բնակիչների մօտ. խոտի, չարդի, մսի, ալիւրի, ջրի, ծխախոտի և այլ հարկահանութիւնը նոյնքան խիտ էր Սէնտ-Վիէում, ինչպէս և ուրիշ տեղերում:

Ես կապոցիցս հանեցի մաքուր շապիկս և պաշտօնագրեւոր հագայ, լիչելով, որ պ. Արանսը միշտ մեծ ուշադրութիւն էր դարձնում, որ ծառայողները վախելու չլինին հագնուած: Այնուհետեւ իջայ հիւրանոցի դահլիճը, իմանալով թէ ուր է կենում նա: Բարի պառաւ Օրին, հիւրանոցի տիրուհին, ինձ հաղորդեց որ նա բնակւում է կալարանի մօտ և ես անյապաղ ուղի ընկայ: Եղանակը պարզ էր, ցուրտ, տաճարից դէպի կալարանը տանող փողոցը ձիւնից բոլորովին սպիտակած էր, նոյնպէս և շրջակայ բարձունքը:

Գերմանացի զինուորները, երկար մօդգ վերարկուներով և տափակ գլխարկները գլխներին մէրիի համար սալով ու տեստի պաշար էին տանում. երկու թէ երեք սպասուհիներ գոյլերը լցնում էին գեղեցիկ աղբիւրի մօտ: Ուրիշ մարդ չէր երևում,—ամենքը փակուել էին տներում: Պ. վերատեսչի դերանը երկու բոպէ կանգնած մտածելով, տեսայ որ առաջս իջաւ վերևից մի գեղեցիկ տղամարդ կանաչ, արծաթէ շերտերով զարդարուած գլխարկը գլխին որ մի փոքր քաշած էր ականջներին:

Դա պ. Արանսն էր, դարձեալ նոյն լաղթանդամ մարդը, մուգ միրուքով և դէմքի այնպիսի թարմ դոյնով, որ կարծես երեսուն տարեկան լինէր. ես նորան իսկոյն ճանաչեցի: Միայն գլխիւր մի փոքր ճերմակել էր, ապա թէ ոչ բոլորովին չէր փոխուել. բայց նա ինձ սկզբում չճանաչեց, և երբ միայն

մտաբերեցի նորան իւր նախկին անտառալին պահապան Ֆրեդերիկին, նա գոչեց:

—Դուք էք, իմ խեղճ Ֆրեդերիկ: Երևի գործդ երիտասարդութեանդ պէս չէ գնում:

Նա արդէն երիտասարդ չէի, և վերջին ամիսները չափազանց ծերացրել էին ինձ, խոտով անուամ եմ:

Վերատեսուչն ուրախ էր որ ինձ տեսնում էր:

—Գնանք վերև, —ասաց նա, —աչնտեղ աւելի լարմար է խօսելու համար:

Եւ բարձրացանք:

Անցանք մեծ, մուժ գրասենեկով, որի փեղկերը ծածկուած էին, ապա վերատեսչի առանձնարանը, ուր վառարանը թէժ վառուում էր. նա ինձ աթոռ հրամցրեց, և մենք երկար խօսեցինք մեր դժբաղդ երկրի մասին: Նա նորան պատմեցի մեր ամեն ձախորդութիւնները գերմանացիների արշաւանքից սկսած. նա ինձ լսում էր, շրթունքները սեղմելով, գրասենդանի վերայ թեք ընկած, և վերջապէս չհամբերելով՝ աղաղակեց:

—Այո, զարհուրելի է... իրքան ազնիւ մարդիկ են զոհուել մի քանի անպիտանների եսականութեան... Մենք խիստ կերպով տուժում ենք մեր սխալների համար. բայց դերմանացիների հերթն էլ կգա: Բանը դրանում չէ. դուք երևի ամենը ծախսել էք... պէտք ունիք:

Ի հարկէ, ես նորան ասացի ճշմարտը. ասացի, որ ստիպուած եղաւ տանը թողնել բոլորը ինչ որ ունէի և գործ եմ պտուում:

Նա, հանդարտ բանալով սեղանի դարակը ասաց, որ ես իրաւունք ունիմ, ինչպէս և Էլզասի միւս բոլոր անտառապետները, ստանալ իմ վերջին քառամսեկի ռոճիկը, որ տալիս է ինձ կանխօրօք, իսկ ժամանակին կհաշուենք:

Նա շատ ուրախ եղաւ որ աչպիսի նեղ օրիս դրամ ստացաւ. տեսչի ուշադրութիւնը արցունք քամեց աչքերիցս, և չգիտէի թէ ինչպէս լալտեմ շնորհակալիքս:

Պ. Արանսը տեսաւ թէ որ աստիճան խորը կերպով զգացուած էի և երբ փորձ փորձեցի շնորհակալութիւն լալտելու, ասաց.

—Լաւ... լաւ, Ֆրեդերիկ... էլ չխօսենք այդ մասին... Դուք փառաւոր մարդ էք... անկեղծութեամբ նուիրուած Ֆրան-

սիակին, և ես շատ ուրախ եմ, որ կարողանում եմ ծագել Ձեզ:

Երբ հրաժեշտ տուինք միմեանց, պ. տեսուչը հարցրեց, թէ մեր անտառալին պահապաններից շատերն են միացել զօրքին:

Նա Լէրնի և Դօնատիւնի անուանները տուի, ապա արդէն ժան-Մէրլէնի, աւելացնելով, որ սա ամենից վերջը գնաց և հաւանօրէն գնաց նոյն ուղիով, որով և ես, Խերմէկի և Ռօտաուի վրայով:

—Բարձրահասակ երիտասարդ, —հարցրեց նա, սև բեղերով, չէ:

—Այո, պ. տեսուչ, —պատասխանեցի, խիստ լուզուած, — իմ փեսաս է:

—Փառաւոր ջահիլ է, —ասաց նա, —այս կողմով անցաւ: Նա տուի նորան անհրաժեշտ ցուցումներն և միջոց մինչև Տուր հասնելու: Եթէ անհանդիստ էք նորա մասին՝ ապահով եղէք. միացաւ զօրքի, արդէն իւր տեղումն է:

Իջանք սանդուխտներից. մնաց բարեկին պ. Արանսը ձեռքս սեղմեց, լետոյ գնաց դէպի կամուրջը, իսկ ես գնացի երկաթուղու կայարանը, շատ լաւ տրամադրուած:

Նա վաղօրօք նախազգացի Վարդ-Մարիի ուրախութիւնը. ինձ թուում էր արդէն, որ լսում եմ, թէ ինչպէս տատը գոհանում է Աստուծոյ, լսելով այս աւետիքը. թուում էր, թէ մեր թշուառութեանց վերջն եկել է, խաւարը ցրուում էր և արեգակը նորից լուսաւորում է մեզ: Նա գնում էի լի պայծառ լուսերով և ուրախական մտածմունքներով. և հէնց որ մտայ «Ոսկէ Առիւծ» հիւրանոցը, պառաւ Օրին, նայելով ինձ՝ աղաղակեց.

—Ա՛յ, ի՛նչ որ մի շատ լաւ բան է պատահել քեզ...

—Այո, —պատասխանեցի ժպտալով, —եւ այլ ես աչն չեմ, ինչ որ երեկ երեկոյ, մեծ անբաղդութիւնները միշտ միևնույն մարդկանց չեն ջախջախում: —Եւ պատմեցի ինչ որ անցել էր: Նա ուրախ սկանջ էր դնում. բայց երբ թուղթ խնդրեցի, որ աչ բոլորը գրիմ Գլաուֆտալ, նա սկսեց լեռ համոզել:

—Լաւ մտածել էք ձեր ղիտաւորութեան մասին: Ուղու՞մ էք գրել, որ ձեր փեսան միացել է զօրքին, որ ճանապարհին փող է տուել նորան պ. Արանսը: Բայց պ. տեսչին վաղնեկի կձերբակալին, և ձեզ էլ, ձեր քրոջն էլ: Մի՞թէ ձեզ լալտնի չէ,

որ գերմանացիք բաց են անում բոլոր նամակները, սա ամենալաւ եղանակն է մեզ լրտեսելու. նոքա շարունակ առիթներ են որոնում քաղաքի վերայ տուգանք դնելու: Այդպիսի մի նամակ բաւական է, որ նոր տուգանք խլէ մեղանից: Զգուշացէ՛ք այդ տեսակ մեծ անդգուշութիւնից:

Զգացի, որ պառաւ Օրին ճիշտ է ասում, և վարկենաբար ուրախ տրամադրութիւնս կորսու. ահա քան ոչո՞հ հաղիւ մնաց վրաս որ գրէի Վարդ-Մարին, թէ տեղ հասալ, լաւ եմ և փոքրիկ նպաստ ստացալ նախկին իշխանաւորիցս: Ամեն բան աւելորդ էր թւում ինձ. վախում էի աւելորդ կէտ, ստորակէտ դնելուց, որ պատճառ չդառնար անպիտաններին նամակիս պոչից բռնել և ինձ աւելի հեռու քշել:

Ի՞նչքան դժուար բան է, երբ մարդ հնար չէ ունենում չուսող և մխիթարութեան մի խօսք դրել նոցա, որոնց սիրում ես, մանաւանդ այդպիսի սոսկալի ժամանակ: Եւ ինչքան խիստ պիտի լինին մարդիկ, որ լանցանք համարեն հօր համար մխիթարութեան խօսքերը, որ ուղղում է իւր զաւակին, բարի լուրը, որ ուղարկում է որդին իւր մեռնող մօրը, թէ պէտ սա հաւանական էլ չէ, սակայն և ախպէս մենք մեզ վերայ կրեցինք այս խստութիւնները:

Մերձաւոր մարդկանց մահը և երկրի նոր անլաջողութիւնները գուժող նամակները տեղ էին հասնում. դեռ կեղծ նամակներ էլ էին հասնում գերմանացիների չաղթութեան և Քրանսլացիների կրած նոր պարտութեանց մասին:

ԼԳ

Զվատահանալով գրել իմացածներու մասին և ոչինչ լուր չստանալով տանից՝ ես տխրեցի:

Երեակալիւր, Ժօրթ, իմ հասակի մի մարդ, մատնուած միայնակ կեանքի օտար մարդկանց մէջ հիւրանոցի փոքրիկ սենեկում, գործից կտրուած, որ ամբողջ ժամերով ստիպուած էր նախել միայն թէ ինչպէս է ձիւն գալիս, կամ ականջ դնում փողոցի աղմուկին, անցնող սալակի անիւների ճրճուցին, անցորդների աղմուկին, չների հաչոցին կամ պրուսական զօրախմբի շրջադալու թեան—առանց ամենեւին զուարճութեան, բացի իւր խոհերից ու չիշողութիւններից:

«Ինչ-որ կատարում է Գրառութաւում: Տատը դեռ կենդանի է: Ի՞նչ եղան Վարդ Մարին... Ժանը... և ուրիշ ամենքը»:

Եւ շարունակ նույն հոգսերը, նույն ծանրութիւնը սրտի վերայ:

«Նամակ չկալ, աւելի լաւ. որն է դժբաղտութեան դէպքում Վարդ-Մարին կգրէր ինձ, կամ գուցէ նա էլ հիւանդացել է»:

Եւ այսպէս ես անդադար տանջում էի առաւօտից մինչև երեկոյ:

Երբեմն, երբ հիւրանոցի սեղանատնից աղմկալի զրոյց էի լսում, իջնում էի ներքեւ պատերազմի մասին որ և բան լիմանալու: Յոյսը—մեր կեանքի այս ամենամեծ կեղծիքը—այն աստիճան արմատացած է մեր հոգում, որ մենք չզթաւում ենք նորա հետ մինչև վերջին շունչներս:

Սեղանատանը ամեն տեսակ մարդու հանդիպում էի. վաճառական, գիւղացի, կառապան. ամենքը աղմուկով խօսում էին Հիւսիսում, Արեւելքում կատարուած ճակատամարտերի, կողոպտումների, հրացանաձգութեան, հրդեհների, խիստ հարկահանութեան և նման իրերի մասին:

Պարիզը շարունակ պաշտպանում էր. բայց Լուարի մօտ մեր նոր կաղմակերպուած զօրքերը ստիպուած էին նահանջել. գերմանացիների մեծ մասը խիստ ճնշող էին: Նոքա ամեն կողմից հաւաքուել էին բոլոր երկաթուղիներով. բացի սուրանից մեզ պակասում էր հրացան և պատերազմական պաշար: Մեր ձեռաց հաւաքած երիտասարդ բանակը, պարտուոր էր օգնութիւն հասնել աշխարհիս ամենախիստ պատերազմին և վերջիվերջոյ ընկնել նորա չափազանց ծանրութեան տակ:

Այս ամենքը մենք կարդացինք բեղիկական և չվէցարական լրագիրներում, որ «Ասկէ առիւծ» հիւրանոց երթեկեղդները պատահամբ մոռացել էին ալստեղ:

Բէլֆօրի ռաբակոծութիւնը շարունակում էր: Նղանակը զարհուրելի էր. ձիւնի հետ սաստիկ ցրտեր էր անում: Կարծես Նախախնամութիւնն էլ զինուել էր մեր դէմ:

Իսկ ես, Ժօրթ, խոստովանում եմ, որ այսքան դժբաղտութիւններից լետով լուսահատուեցալ, չամենաչնչին աղմուկը չուղում էր ինձ. ինձ շարունակ թւում էր, որ դարձեալ մի նոր անբաղտութիւն էր աւելացել մեզ. ժամանակ առ ժամա-

նակ համբերութիւնից դուրս էի գալիս և պատրաստ էի ուղ-
ղակի դէպի մահը գնալ, թող ինձ սպանէին, միայն թէ վերջ
դրուէր կեանքիս այս կամ այն կերպ: Չանձրոյթիս, վնասու-
թիւնս վերին աստիճանի էին հասել, երբ վերջապէս նամակ
ստացաւ աղջկանիցս:

Տատը մեռել էր:

Վարդ-Մարին պէտք է դար ինձ մօտ Սէնտ-Գիէ: Նա
խնդրում էր մի փոքրիկ տուն վարձել, ուղեւոր մի քանի
բան փոխադրել կարասիքից, չորերից, անկողնից և մնացածը
վաճառել Գրառփտալից մեկնելուց առաջ: Գրում էր, որ ու-
ղեղնացութիւնը կտեւէ երեք օր և շաբաթուայ վերջին կտե-
սուինք:

Այսպէս ուրեմն, խեղճ տատի տանջանքները սպառուե-
ցան. նա հանգստանում էր իւր դստեր Ատտերինէի և իւր ա-
մուսին Բրուատի կողքին, որոնց ես այնքան սիրում էի: Նա
մտածեցի, որ նոքա ամենքն էլ բաղտաւոր են ինձանից,
երբ հանգստանում են իրանց հարազատների մէջ իրանց
հայրենիքում:

Ինձ մխթարեց՝ դստերս տեսնելու յօսը: Նա արդէն ե-
րեակալում էի, որ միասին պիտի ապրէինք համեստ կերպով
մինչև պատերազմի վերջանալը. իսկ երբ ծանր լիտ կգաւնար
և տեղ կստանար, դարձեալ մի բուն կշինէինք խաղաղ անտա-
ռում. ես պաշտօնս կթողնէի և չնայելով բոլոր կրածս դժբաղ-
տութիւններին, օրերս կկնքէի հանդարտութեան և խաղաղու-
թեան մէջ, թոռներովս շրջապատուած:

Այս ամենը ինձ բոլորովին բնական էր թւում: Աստուած
արդարադատ է, և շուտով ամեն ինչ նախկին դրութիւնը
կառնէ: Վարդ-Մարին եկաւ 1871 թուի լուսնուարի 3-ին:

Ամսական 12 Ֆրանկով երկու սենեակ վարձեցի իւր
խոհանոցով դրացի «Ոսկէ խարխալ» տան երկրորդ լարկում,
պ. Միշէլ պարտիզպանից, որ մի պատուական մարդ էր և ա-
պագայում մեծ ծառայութիւններ արեց մեզ:

Յունուարի 3-ին սաստիկ ցուրտ էր: Վարդ-Մարին նշա-
նակել էր թէ որ օրը պիտի գալ, բայց չէր գրել առաւօտ թէ
երեկոյ. ես անհամբեր սպասում էի:

12 ժամին մօտ Շտարկի սալակը երեաց փողոցի ծալ-
րից, ամբողջովին բեռնաւորուած կարասիներով և անկողնով
Վարդ-Մարին նստած էր սալակի վերայ, իւր հանգ. մօր մուշ-

տակում փաթթուած. բարձրահասակ ածխավաճառ Շտարկը
սանձից քաշում էր ձիերը:

Նա ընդ առաջ վաղեցի: Համբուրելով Շտարկին, որ սալ-
ը կանգնացրեց, համբուրեցի և դստերս և չչնչացի:

— Ժանից լուր ունիմ... Նա անցել է Սէնտ-Գիէի վերա-
յով... Պ. Արանսը միջոց է տուել նորան պրոսական գիծն
անցնելու և Լուարի գնդի հետ միանալու:

Նա պատասխան չտուեց, բայց երբ հաղորդեցի նորան
այս՝ ծանր այս քաշեց և նորա ձեռները առանձին ուժով փա-
րուեցան վզովս:

Շարունակեցինք ճանապարհը. մի քիտուն քալից լետոյ
հասանք տուն: Շտարկը ձիերը ներս տարաւ «Ոսկէ առիւծի»
ախոռը, Վարդ-Մարին մտաւ հիւրատան ճաշարանը, և բարի
պառաւ Սրին, որ ընդառաջել էր մեզ, ստիպեց նորան մի
թաս արգանակ խմել տաքանալու համար, որովհետեւ նա խիստ
սառել էր: Այդ խի օրը ես ու Շտարկը կարասին ներս տա-
րանք ու դասաւորեցինք: Երբ 4 ժամը խիեց, ամեն ինչ տեղն
էր: Վառարանը վառեցինք: Վարդ-Մարին այնպէս էր լոգնել,
որ հարկ եղաւ օգնել նորան երկրորդ լարկը բարձրանալու:

Յանկարծ աչքովս ընկաւ, որ նա գունատ էր և աչքերը
վառոււմ էին—սա ինձ զարմացրեց. բայց այս փոփոխութիւ-
նը ես վերագրեցի տատին հսկելու ժամանակ անցրած անքուն
գիշերներին, վշտին, լուրմունքին և ամենից աւելի երեք օրուայ
ճանապարհորդութեան բաց սալակով ալդպիսի խիստ ցրտին:
Աստուած իմ Բնական չէ՛ այդ փոփոխութիւնը այդքան նե-
ղութիւններից լետոյ: Նա գիտէի, որ նա առողջ է. երեխայ
հասակից նա երբեք չէր հիւանդացել, ես ինձ հանգստացրի,
որ կառողջանալ. փոքրիկ խնամքից ու հանգստութիւնից լիտ
նա դարձեալ այնպէս թաքմ կլինի, ինչպէս առաջ էր: Վա-
ռարանում կրակը թէ՛ վառում էր. սենեակը մաքուր էր. մեր
հին պահարանը, պատից կախ հին պատկերները և պատի ժա-
մացուցի սլաքի չի չխկոցը—մեր անտառի տան բոլոր նախկին
սարքը լաւ տպաւորութիւն գործեցին Վարդ-Մարին վերայ.
նա գոհ մնաց և սասաց

— Լաւ կապրենք այստեղ, հանգ. կապրենք հանգիստ և
գերմանացիք էլ հեռու չեն քշի մեզ: Միայն թէ ծանր չու-
տով զար. սպա ամեն ինչ լաւ կլինի:

Նա խօսում էր խապոտ ձայնով:

Նա ցանկացաւ խոհանոցը տեսնել և չնայելով, որ մութն էր Էն, աչնուամենայնիւ հաւանեց:

Որովհետեւ ուտեստի պաշար չունէինք, ևս ճաշ ապսպրեցի հիւրանոցից և երկու շիշ էլ գինի: Շտարկը չուղեց դրամ վերցնել ինձանից: Նա ասաց, որ անտառում գործ չկայ, Էնորա համար մինչև անդամ աւելի լաւ էր, որ ձիերը բերեց, քան թէ ախոռում պարապ թողնէր նոցա. բայց ճաշից չհրաժարուեց և լանձն առաւ մի երկրորդ բաժակ գինի ևս խմել:

Ճաշի ժամանակ Վարդ-Մարին ինձ պատմեց խեղճ տատի մահուան վանքամասնութիւնները, թէ ինչպէս էր նա վախճանուել, երեք օր զառանցանքի մէջ աղաղակելով. «Բրուտա, Ծրեղերիկ... գերմանացիք... Ծրեղերիկ, մի թողնէք ինձ, հետներդ տարէք...» վերջապէս Աստուած խղճաց նորան և կանչեց իւր մօտ. Գրաուֆտալի բնակիչների կէս մասը ուղեկցեց նորան, չնայելով որ ձիւն էր, մինչև Դօղէնհայմ, որպէս զի թաղին իւր հարազատների կողքին: Վարդ-Մարին այս տխուր օրերի նկարագիրն անելով, չկարողացաւ արտասուքը զսպել, և ժամանակ առ ժամանակ նորա խօսքը ընդհատուած էր հագից, այնպէս որ ևս խնդրեցի ալ ևս չպատմել այդ:

Մենք ճաշեցինք և շնորհակալութիւն արեցինք Մարտիկին իւր արած ծառայութեան համար:

Նա նորան ասացի, որ դժբաղտութեան մէջ միայն մարդ ճանաչում է իւր իսկական բարեկամներին: 6 ժամին նա գնաց, չնայելով, որ ևս համոզում էի գիշերել մեզ մօտ:

Նա ուղեկցեցի նորան մինչև փողոցի վերջը և խնդրեցի շնորհակալութիւնս հաղորդել ձեր Նիկէին և նորա դստեր աչնամենի համար, ինչ որ նոքա արին մեզ համար. և եթէ կպատահի Ֆէլքսբերգի մօտ՝ լալտնել պառաւ Մարգրէդէլին մեր դրութիւնը և թախանձագին խնդրել, որ հաղորդէ մեզ ինչ որ գիտէ իւր որդի ժան Մէրլէնի մասին: Խոստացաւ և մենք բաժանուեցանք: Նա տուն դարձաւ, խիստ գոհ դստերս գալու վերաւ, բայց փոքր ինչ լուզուած նորա մրսելու համար: Լուրջ երկիւղ նորա առողջութեան մասին ևս չունէի, ինչպէս արդէն ասացի, Ժօրժ: Նրա մարդուն տեսնում ևս միշտ առողջ, աղի պիսի միսնունն նշանակութիւն չես տալիս:

Դարձեալ երկու ամիս էր մնում մինչև ձմեռուալ վերջը: Մարտի սկզբից արեն արդէն պալծառ լուսաւորում է, սկսում է գարունը. ապրիլին մարդէն ու ալգինները արդէն սկսում

են կանաչել: մեր լուսամուտների տակ երկու մեծ արկղ կար դալարուն բոյսերով, որոնք բարձրանում էին մինչև լուսամուտները, և այս կանաչը թերևս փոքր ինչ լիչեցնում էր մեր լքած անտառի տնակը:

Ինձ ամեն ինչ լաւ դոյնով էր ներկայանում և Վարդ-Մարին տեսնելով զգացուած՝ ապագան էլ պալծառ էր երեւում ինձ: Մինչև ժանի վերադարձը ևս մտածում էի ապրել միայն Վարդ-Մարիի համար, որքան կարելի է քիչ մտածել պատերազմի մասին, թէպէտ և այս շատ դժուար էր, երբ հարկնիքը այդպիսի ծանր դրութեան մէջ էր, այն, շատ դժուար էր հանդիստ ապրել: Նա ինձ խօսք տուի միայն հաճելի նորութիւններ հաղորդել դստերս, — օրինակ լալթութիւնները, եթէ մենք բաղդ կունենալինք ունենալ, — և զգուշութեամբ ծածկել նորանից երկիւղս ժանի մասին, որի տնական լուծութիւնը տխուր մտածումներ էր ազդում ինձ: Այսպէս մտածելով՝ տուն եկաւ: Մթնում էր: Վարդ-Մարին սպասում էր ինձ վառ լամպարի առաջ նստած. նա գրկաբաց ընկաւ ինձ վերայ և շշնջաց. — Այն, հայր, ինչքան բաղտաւոր եմ, որ դարձեալ միասին ենք:

— Այն, այն, զաւակս, — պատասխանեցի ևս. — նոքա էլ որոնք հեռու են մեզանից, նույնպէս կվերադառնան: Դարձեալ պէտք է փոքր ինչ համբերել... Մենք այնքան շատ անարդարութեան զիմացանք, որ բաւական պէտք է համարել: Այժմ, դու մի փոքր անառողջ ես... ճանապարհորդութիւնը լողնեցրել է քեզ... բայց շուտով ամենը կանցնի: Գնա՛ քնիր, զաւակս, հանգստացիր:

Նա գնաց իւր սենեակը և պարկելով՝ գոհութիւն տուի Աստծուն, որ աղջիկս ինձ դարձրեց:

ԼԵ.

Եւ այսպէս, Ժօրժ, կորցրի տեղս էլ, բոլոր ունեցածս էլ, որ ձեռք էի բերել երեսնամեալ աշխատանքով, խնայողութեամբ և բարեխիղճ ծառայութեամբ. կորցրի հայրենիքս, հարազատներիս, բարեկամներիս, և մնաց ինձ մի միսթարութիւն. զուստրս, բարի, անդրդուելի Վարդ-Մարիս, որ տեսնե-

լով լուսահատութիւնն՝ ժպտում էր ինձ, չնայելով իւր վշտին և տանջանքներին:

Երբէք չեմ ների ինձ, որ չկարողացայ ծածկել նորանից լուսահատութիւնս, ոչ էլ բարկանալս այն մարդոց վերայ, որոնք այս վիճակի հասցրին մեզ:

Ախ, հեշտ է ժպտում նա, ում գործերը լաւ են գնում: Բայց ով ստիպուած է լինում թափառել օտար երկրում, կարօտել ամեն բանի, — նա ծիծաղելու ոչինչ չունի:

Մենք խիստ տնտեսաբար էինք ապրում: Վարդ-Մարին ջանասիրութեամբ աշխատում էր մեր փոքրիկ տնտեսութեամբ, իսկ ես լաճախ ամբողջ ժամեր նստում էի լուսամուտի մօտ, մտածելով վերջին պատահարների, իմ սարսափելի քսորի մասին հայրենիքից: Այսպիսի րոպէներին արժամարհանքը տիրում էր ինձ լանկարծ, և վայրենի աղաղակով ձեռքերս բարձրացնում էի դէպի երկինք:

Վարդ-Մարին թուի թէ ինձանից հանդարտ էր. ստորանալը, դժբաղտութիւնը, թէ մեր անձնական, և թէ բոլոր փրանսիայի, այս ամենը դուցէ ինձանից ոչ պակաս տանջում էր նորան, բայց նա ծածկում էր այս: Մի բան միայն չէր կարողանում նա ծածկել — դա իւր հաղն էր, որ ինձ խիստ անհանգիստ էր անում: Փոխանակ պակասելու, ինչպէս ես յոյս ունէի, օրէցօր աւելանում էր, մանաւանդ գիշերները, երբ ամեն ինչ լուռ էր և լուռում էր այս չոր, սուր հաղը, ինձ թւում էր որ նորա կուրծքը պատառում է, և սարսափած վեր էի թռչում անկողնիցս:

Ժամանակ առ ժամանակ այս զարհուրելի հաղը դադարում էր. Վարդ-Մարին գիշերը քնում էր հանդիստ, և ես իսկոյն սիրտ էի առնում, մտածելով ֆրանսիանի աւերող դժբաղտութիւնների, Պարիզի զարհուրելի սովի, սպանուածներիով ծածկուած պատերազմական դաշտերի, վիրաւորներով լի հիւանդանոցների, հրդեհների, հարկահանութեան, կողոպուտի մասին. ես ասում էի, որ մենք դեռ դո՛հ պէտք է լինինք, որ մի կտոր հաց ունինք և տաք վառարան...:

Բայց պատերազմի ժամանակ անհաւատալի բաներ են լինում: Մենք չէ՞ղթեցինք ամբողջ Եւրոպային: Բայց այս չարգելեց մեզ այժմ իւր հերթին լաղթուած լինել... միթէ գերմանացիք չեն կարող նույն վիճակի հասնել: Բոլոր թղթախաղները վերջ ի վերջոյ լաղթում են:

Այս ամենը խռնում էր գլխումս. Վարդ-Մարին ես ասում էր.

— Դեռ ամեն բան կորած չէ, հայր, ամենը կորած չէ... գիշերս երազ տեսայ... Տեսայ ժան Մէրլէնին անտառապետի պաշտօնազգեստով. շուտով լաւ լուրեր կիմանանք:

Աւաղ. բարի լուրեր... Խեղճ երեխան... Այո, այո... Իրաւունք ունէ՞ր գեղեցիկ երազներ տեսնելու. կարող էիր երազել, որ ժանը, անտառապետի հաղուստով, ժպտալով, ձեռքիցդ լոնա՞ծ տանում է քեզ սպիտակ հագուստով սպիտակ պալլը գլխիդ. մտնում էք Գրաուֆտալի փոքրիկ մատուռը, շուրջը քահանան սպասում էր ձեզ պսակելու... Այս ամենը պէտք է իրականանար. բայց որ այս լինէր, պէտք է երկրիս վերայ անելի քիչ լինէր անպիտանների թիւը, որոնք խանգարում են սահմանուած կարգերը:

Ամեն անգամ, որ ես լիչում եմ այս, Ժօրժ, ինձ թւում է, որ մի ձեռք սիրտս հանում է տեղից: Ուզում եմ պատմութիւնս ընդհատել, բայց որ խօսք եմ տուել քեզ — կպատմեմ մինչև վերջ:

Մի անգամ նստած էինք կրակի մօտ. Վարդ-Մարին, առտիկ նիհարած, մտածմունքի մէջ, մանում էր, ես էլ բոլորովին խորասուսուեցայ մեր անտառի տան, կանաչող դարունան, հանդարտ մեղմաղձական աշնան լիչողութիւնների մէջ. իմ առաջ պատկերացան թռչունների երգը, գետի շառաչը եղեգնոտի մէջ, լսում էի ծեր տատի ձայնը, կալաս հովուի կանչը, Ուազօի ուրախ հաչոցը և մեր կովերի խուլ բառանչիւնը. ես այս ամենի մասին մտածում էի ճախարակի ներգաշնակ ձայնի և մեր հին ժամացուցի սլաքի չխչխկոցի հետ, երբ հեռուից կանչելու և երգի ձայն լսո եց:

Վարդ-Մարին վախեցաւ. ես զողացի, քնից անակնկալ զարթեցրած մարդու պէս: Գերմանացիք ուրախանում էին. . . նոր դժբաղտութիւն էր հասել մեզ: Այսպէս մտածեցի ես և չսխալուեցի:

Շուտով փողոցում երևացին զինուորային, որոնք անցնում էին ձեռք ձեռքի տուած և բարձրաձայն աղաղակում.

— Պարիզն անձնատուր եղաւ. կեցցէ Գերմանիան:

Նախեցի Վարդ-Մարին. նա տժգոյն էր, ինչպէս մեռած և փալլող աչքերով նա էլ ինձ էր նայում: Մենք երեսներս

դարձրինք մէկմէկուց, որպէս զի մեր վշտերը ծածկենք: Նա գնաց խոհանոց, և ես լսում էի նորա հեծկլտանքը:

Վերջին հարուածը տուած էր, Ժօրժ, վերջին լոյսերից էլ զրկուեցինք:

Մինչև կէս գիշեր աղմուկը չզաղարեց փողոցում. գլուխս կախ արած՝ լուսահատութեամբ լսում էի թէ ինչպէս խոհանոցի միջնորմի ետեւը հազից խեղտում էր Վարդ-Մարին:

Եօթ ժամի մօտերքը Վարդ Մարին ներս մտաւ լամպարը ձեռնին: Նա ուղից սեղան պատրաստել:

— Ինձ համար աման մի դնի, ասացի ես, — չեմ ուզում ուտել:

— Ես ևս, — պատասխանեց նա:

— Է՛հ, ուրեմն քնենք. աշխատենք մոռանալ մեր դժբաղդ տուրքները, աշխատենք քնել:

Ես վերկացայ. արտասուածքով գրկեցինք իրար: Այս գիշերը զարհուրելի էր մեզ համար, Ժօրժ:

Վարդ-Մարին չնայելով որ ամեն ջանք գործ էր դնում, որ հազը պահէ, շարունակ մինչև առաւօտ հաղում էր, աչնայեա որ աչքս չվակեցի: Ես վճռեցի բժիշկ հրաւիրել, բայց, չուզե- նալով աղջկան վախեցնել, մտածեցի մի կերպ նախապատ- րաստել նորան: Հազիւ լուսադէմին մի քիչ քնեցի:

Տ ժամն էր արդէն, որ զարթեցի և կանգնելով՝ կանչե- ցի Վարդ-Մարին: Նա չպատասխանեց, Մտալ նորա սենեա- կը և բարձի վերայ կարմիր բծեր նշմարեցի. թաշկինակը որ մոռացել էր գիշերուալ սեղանի վերայ նույնպէս արկնոտ էր:

Սարսափած քաշուեցայ իմ անկիւնը, կալծակնահար ե- ղած այս նոր վշտի վերայ:

12

Մի անգամ, առուտուրի օրը, Վարդ-Մարին դուրս գնաց պաշար առնելու. 10 ժամին մօտ լեռ եկաւ աչնայէս, լօգնած, որ հազիւ էր կսողվր ձեռքին բռնել:

Նայելով նորան՝ իշեցի աչն մատաղ աղջկանց դժգոյն դէմքերը, որոնց մասին խեղճ մարդիկ ասում են, թէ Աս- տուած նոցա կանչում է իւր մօտ, և այդպիսիները հանդարտ քնում են առաջին ձեռն հետ: Այս միտքը երկիւղ ազդեց

ինձ. բայց աչնուհետեւ ես նորան ասացի, ըստ կարելւոյն հան- դարտ:

— Լսիր, Վարդ-Մարի. գիշերս լսեցի քո հազի ձայնը. մտաւ առջևում եմ դորա վերայ:

— Է՛հ, ոչինչ չկայ, հազը, — պատասխանեց նա, մի քիչ կարմրելով. գարունը որ գալ հազս կանցնի:

— Ես չեմ կարող հանգիստ լինել, մինչև բժիշկը չպարզէ թէ դա ինչ բան է: Պէտք է անպատճառ բժիշկ կանչել:

Նա նայեց ինձ, ձեռները դարսելով կողովի վերայ, որ դրեց սեղանին. գուցէ իմ լուզմունքից գուշակելով, որ նորա արիւնոտ թաշկինակը տեսել եմ, չչնչաց:

— Ինչպէս կամիս, հազը, եթէ այդ բանը կհանդստացնէ քեզ...

— Այո, հիւանդութեան առաջը ժամանակին պէտք է առնել. սկզբում աննշան հիւանդութիւնը եթէ անուշադիր թողնենք, ապագայում կարող է վտանգաւոր դառնալ:

Ասացի ու դուրս ելայ:

Ներքեւ պ. Միշէլը խորհուրդ տուեց ինձ դիմել բշկ. կարիերին, Գնացի նորա մօտ:

Նա 60 տարեկան, չոր-չոր, սև կենդանի աչքերով և ճեր- մակ գլխով մարդ էլ. նա ուշադրութեամբ լսեց ինձ և հարց- րեց՝ Ես եմ աչն անտառապետը, որի սասին խօսել է իւր հետ իւր բարեկամ պ. Արանսը: Պատասխանեցի՝ այո և իս- կոյն եկաւ հետս:

20 բոպէից լեռնոյ մեր տանն էինք:

Վարդ-Մարին կանչեցի. բժիշկը երկար հարց ու փորձ արաւ նորան, թէ երբ է հազն սկսուել, ինչ է զգում այժմ, գիշերը ջերմ կամ շնչարգելութիւն չէ ունենում:

Աչնպէս վարպետութեամբ էր հարցնում, որ նա ստիպուեց պատասխանել, և ձեր բժշկին չուտով լաջողեց իմանալ, որ Վարդ-Մարին արիւնախառն հաղում էր մի ամսից աւելի. խոստովանուեց, սաստիկ գունատուելով և ինձ նայելով, կար- ծեա ներուժն խնդրելով, որ ծածկել է ինձանից այդ հիւան- դութիւնը:

Այն Ես ներեցի նորան բոլոր սրտից, բայց սոքանով լուսահատութիւնս չպակասեց:

Պ. կարիերը, լսելով նորան ասաց, թէ հիւանդութիւնը առանձին վտանգ չէ սպառնում, և գնաց զեղատոմս գրելու:

Ես այլ ևս հայրենիքի դրոթեան մասին չէի մտածում, — ուզում էի միայն դուտերս կեանքը փրկել. Բօրգոսի ազգա-
զին ժողովի ընտրութիւններին միանգամայն անտարբեր վե-
րաբերուեցի:

«Միայն թէ Վարդ-Մարիս ողջ մնայ...»

Այսպէս անցաւ ժամանակը մինչև լուսնուարի վերջ, երբ
դաշը կնքուեց:

Օր չէր անցնում, որ դրացիներից մէկն ու մէկը լուր
չստանար որդեկերանցից, եղբայրներից, հարեաններից, որոն-
ցից ոմանք գերի էին տարուել Գերմանիա, ուրիշները տեղա-
ւորուած էին Ֆրանսիայի խորքում իրանց տները. բայց մենք
— ոչ մի խօսք:

Ամեն առաւօտ ես փոստ էի գնում իմանալու, նամակ
կան թէ ոչ: Մի անգամ փոստի ծառայողն ինձ ասաց.

— Ախ, դժււ էք. ցրուիչն իսկոյն դուրս գնաց... նամակ
բերեց ձեզ:

Հիացած այս լուրից, տուն վազեցի. դրան չէմքում դի-
պալ ցրուիչին, որ ուրախ ուրախ ասաց ինձ.

— Շուտ գնացէք, Ֆրեդերիկ հայրիկ. վերջապէս նպատա-
կի հասաք, Լուարի դնդից նամակ ունիք:

Սանդիտով վեր վազեցի լուզմունքից բաբախող սրտով:
Մի բան կ'իմանանք, ի՞նչ է պատահել: Զք գալիս արդեօք:
Գուցէ վաղը կգա... գուցէ երեք, չորս օրից:

Խիստ լուզմունքից չկարողացալ դրան բանալին գտնել.
բայց վերջապէս դուռը ուժով բաց արի — սենեակում մարդ
չկար:

Զայն տուի. — Վարդ-Մարի, Վարդ-Մարի:

Պատասխան չկար:

Ներս մտալ միւս սենեակը — աղջիկս, գետնի վերայ փը-
ռուած, պառկած էր ինչպէս մեղրամոմ. նորա մեծ աչքերը
կիսաբաց էին, նամակը ձեռքում սղմած և շրթունքներից ա-
րիւն կաթելիս:

Կարծեցի թէ մեռել է, և հեկեկալով՝ զգուշութեամբ ան-
կողնի վերայ դրի նորան:

Ապա, սարսափից գլուխս կորցրած՝ սկսալ զոռալ, կան-
չել և նամակը վերցնելով, մի վալրկենում կարդացի:

Ահա. կարդա, Ժօրժ, բարձր ձայնով կարդա. ես անգիր
գիտեմ, բայց միենոյն է, ինձ հաճելի է վերքը գրգռել իմ
սրտում. երբ արիւն է գալիս՝ ցաւը հանգստանում է:

«Թանկագին Վարդ-Մարի

«Մնաս բարեաւ... էլ երբէք չեմ տեսնի քեզ... ռումբի
կտորը աջ ոտս ջարդեց... վիրաբույժները անդամահատեցին.
չեմ կարող ստանել. խիստ շատ արիւն եմ կորցրել... Ամեն
բաւ վերջացաւ... մեռնելու եմ... Օհ, Վարդ-Մարի, իմ թան-
կագին, ինչքան կուզէի քեզ տեսնել գէթ մի բոպէ, մի վալր-
կեան. ինչպէս կթեթեացնէր այդ իմ տանջանքները. ինչքան
ժամանակ որ վիրաւոր պարկած եմ եղել ձիւնի մէջ, շարու-
նակ մտածում էի քո մասին... Մի մոռանար ինձ... լիշիւր եր-
բեմն Ժան Մէրլէնին... Խեղճ Մարգրէդէլ մայրս. խեղճ Ֆրեդե-
րիկ հայրիկ. խեղճ Դանիէլ քեռի: Յալտնիւր նոցա իմ վիճա-
կը... Ախ, ինչպէս ամենքս երջանիկ կլինէինք, եթէ աչս պա-
տերազմը չլինէր»:

Այստեղ ընդհատուած էր նամակը: Ներքերը, ինչպէս տես-
նում ես, ուրիշ ձեռքով է աւելացրած.

«Ժան Մէրլէն, Լիզասցի:

«21 գնդի զօրաբաժին, 26 լուսնուար 1870»:

Ես միանգամից կարդացի և նորից սկսալ աղաղակել,
կանչել, վերջապէս՝ թուլանալով ընկալ բազկաթռուի մէջ, խոս-
տովանելով, որ ամեն ինչ կորցրել էի. դուստրս, փեսաս, հա-
րենիքս... ամենք... Մնում էր որ ես էլ մեռնեմ:

Իմ ձայնի վերայ վազեց եկաւ Միշէլը կնոջ հետ: Բժիշկ
կանչեցին: Ես ցնորուածի պէս էի, մտածելու անընդունակ.
ականջս խշշում էր, և ինձ թւում էր, որ քնած՝ զարհուրելի
երազ եմ տեսնում:

Բժ. Կարիերի ձայնի վերայ մի փոքր ուշքի եկալ:

— Դուրս տարէք դորան, — ասաց բժիշկը. — որ չտեսնի
աչս, շուտով դուրս տարէք:

Ինձ վերցրին. արհամարհանքը տիրեց ինձ և դռնեցի.

— Չեմ ուզում, որ ինձ դուրս տանեն... ուզում եմ աչս-
տեղ մնալ... Սա իմ դուստրն է... Դուք որդիք չունիք, որ
հրամայում էք ինձ դուրս տանել: Ուզում եմ փրկել աղջկաս:
Ուզում եմ պաշտպանել նորան:

— Թողէք, — տխրութեամբ ասաց բժիշկը, — թողէք խեղճ

Բայց հարևան սենեկում, երբ մենակ մնացինք, նա ինձ հայցրեց՝ թե մեր ընտանիքում ոչ ոք հիւանդ չէ եղել կըրժ-քացաւով։ հաւատացրի, որ ոչ իմ, ոչ կնոջս կողմից ոչ ոք չէ եղել։ ասա նա ասաց։

— Հաւատում եմ, դուստրդ շատ առողջ կաղմուածք ու-նի, դա շատ գեղեցիկ մարմնակաղմ է, — բայց որևէ դէպք, ընկնելը կամ ակզպիսի մի բան հասցրել է այս դրութեան։ Գուցէ նա ուղղւած է ծածկել մեզնից, բայց անհրաժեշտ է իմանալ։

Ես նորից կանչեցի Վարդ-Մարին, և բժիշկը հարցրեց նորան, թե չէ վաղը ընկել կամ սաստիկ վիրաւորուել մի քա-նի շարժաթ առաջ։ նա աւելացրեց, թե հիւանդութեան պատ-ճառն իմանալով՝ ըստ աչնմ դեղ կը գրէ և թէ սորանից դու-ցէ կախուած կլինի նորա կեանքը։

Վարդ-Մարին խոստովանեցաւ, որ աչն օրը, երբ գերմա-նացիք դուրս էին տանում մեր կովերը, ինքը ուղեցել է պա-րանից բռնել որ չթողնի, բայց պրոսագիներէ մէկը խփել է իր ուսին գէնքի կոթով։ դորանից վաղը է ընկել կուրծքի վերայ և վեր է կացել բերանը արիւնով լիքը։ բայց աչն ժա-մանակ երկիւղից ինձ ոչինչ չէ ասել, որովհետեւ ես այդ գա-զանութիւնից զարթոյած՝ ընդունակ էի ամեն բան անել։

Ամեն ինչ պարզ էր։

Արտասուքս չկարողացաւ զսպել, նախելով գծգոյն դստերս — այդ զարհուրելի գծադրութեան դոհի վերայ։

Նա դուրս գնաց։

Բժիշկը դեղը գրեց, և երբ մենք վաղը իջանք՝ նա ինձ ասաց։

— Շատ ծանր բան է... Միայն մի աղջիկ ունիք։

— Միմիս ին դա է, — պատասխանեցի։

Նա ախուր էր և մտախոհ։

— Ամեն բան արինք, ինչ որ կարելի է, — ասաց նա, — ջահիլների մէջ միայն ուժ։ Սակայն աշխատեցէք խոյս տալ ամեն տեսակ լուգմունքից։

Փողոցով անցնելիս՝ նա նոյն խօսքերն ու խորհուրդները կրկնեց, ինչ որ բժ. Ամպէրլէնը տուել էր ինձ տառի նկատ-մամբ, ես ոչինչ չպատասխանեցի։ Ինձ թւում էր, որ վետինը պատռւում է իմ գլխին և միջից լսում։

— «Զոհեր... զոհեր... դեռ էլի զոհեր եմ ուղում...»։

Կուղենալի առաջինը պարկել, աչքերս փակել և պատաս-խանել։

«Ա՛ռ ինձ և կենդանի թող երիտասարդներին... թո՛ղ տուր նոցա դեռ շնչել։ Նոքա չը դիտեն, որ ասլրելը՝ տան-ջանք է նշանակում։ երբ փորձեն՝ անկարելից կմեռնեն... քո զոհերը կլինեն...»։

Այս ախուր խոհերով մտալ դեղատուն, մեծ կամուրջի մօտ, դեղը պատրաստուեց։

Տուն դարձաւ։

Ամեն առաւօտ իրիկուն Վարդ-Մարին երկու գդալ դեղ էր ընդունում, ինչպէս պատուիրել էր բժիշկը։ Առաջին օրից իսկ նկատեցի, որ սկսաւ առողջանալ։ ձայնը պարզուեց, ձեռ-ներն աչնպէս տաք չէին։ նա ժպտում էր, կարծես ասելով։

— Տեսնում ես, հայրիկ, պարզապէս մրսել էի... մի վեր-դո՞ւրի։

Անսահման հեղութեամբ էր փալլում նորա հալեացքը։ նա երջանիկ էր, որ թարմանում էր, ժանիւն չուտով՝ տեսնելու լոյսը աւելացնում էր նորա երջանկութիւնը։ Ի հարկէ, ես պահ-պանում էի նորա չոյսերն ու ասում։

— Այս օրերս լուր կստանանք — այս ինչ գրացին նոյնպէս նամակ է սպասում որդուց — այլ ևս արդելքի չի հանդիպի։ Պատերազմի ժամանակ փոստը արդելում էր, նամակները պարկում էին փոստի գրասենեակներում... Գերմանացիք ցան-կանում էին մեզ վհատեցնել... Այժմ, երբ դաշն է կնքուած, բոլոր նամակները ճշտութեամբ տեղ կհասնեն։

Վարդ-Մարին լարուած ականջ էր դնում ինձ և դէմքը փալլում էր ուրախութիւնից։

Ես այլ ևս թո՛ղ չէի տալիս նորան փողոց դուրս գալ։ ինքս վերցնում էի կողովը և դնում տուետուրի։ բարի առևտրա-կանները ճանաչում էին ինձ։

— Հին անտառապետը գալիս է, — ասում էին նոքա, — որի պատուական աղջիկը հիւանդ է։ Այժմ ինքն է փողոց դուրս գալիս։

Եւ երբէք ոչ ոք նոցանից թանգ չէր ծախում ինձ։

ԼԵ.

Ես այլ ևս հայրենիքի դրութեան մասին չէի մտածում, — ուզում էի միայն դուրս կեանքը փրկել. Բօրոջի ազգա-
զին ժողովի ընտրութիւններին միանգամայն անտարբեր վե-
րաբերուեցի:

«Միայն թէ Վարդ-Մարիս ողջ մնալ...»

Այսպէս անցաւ ժամանակը մինչև լուսնուարի վերջ, երբ
դաշը կնքուեց:

Օր չէր անցնում, որ դրացիներից մէկն ու մէկը լուր
չստանար որդիներանցից, եղբայրներից, հարեաններից, որոն-
ցից ոմանք գերի էին տարուել Գերմանիա, ուրիշները տեղա-
ւորուած էին Ֆրանսիայի խորքում իրանց տները. բոլոր մենք
— ոչ մի խօսք:

Ամեն առաւօտ ես փոստ էի գնում իմանալու, նամակ
կայ թէ ոչ: Մի անգամ փոստի ծառայողն ինձ ասաց.

— Ախ, դուք էք. ցրուիչն իսկոյն դուրս գնաց... նամակ
բերեց ձեզ:

Հիացած այս լուրից, տուն վազեցի. դրան չէմքում դի-
պալ ցրուիչին, որ ուրախ ուրախ ասաց ինձ.

— Շուտ գնացէք, Ֆրեդերիկ հայրիկ. վերջապէս նպատա-
կի հասաք, Լուարի գնդից նամակ ունիք:

Սանդիստով վեր վազեցի լուզմունքից բաբախող սրտով:
Մի բան կիմանանք, Ի՞նչ է պատահել: Չէ՞ գալիս արդեօք:
Գուցէ վաղը կգա՞ւ... գուցէ երեք, չորս օրից:

Խիստ լուզմունքից չկարողացալ դրան բանալին գտնել.
բաց վերջապէս դուռը ուժով բաց արի — սենեակում մարդ
չկար:

Ձայն տուի. — Վարդ-Մարի, Վարդ-Մարի:

Պատասխան չկար:

Ներս մտալ միւս սենեակը — աղջիկս, գետնի վերայ փը-
ռուած, պառկած էր ինչպէս մեղրամոմ. նորա մեծ աչքերը
կիսաբաց էին, նամակը ձեռքում սղմած և շրթունքներից ա-
բիւն կաթիլիս:

Կարծեցի թէ մեռել է, և հեկեկալով՝ զգուշութեամբ ան-
կողմնի վերայ դրի նորան:

Ապա, սարսափից գլուխս կորցրած՝ սկսալ գոռալ, կան-
չել և նամակը վերցնելով, մի վայրկեանում կարդացի:

Ահա. կարդա՛, Ժօրժ, բարձր ձայնով կարդա. ես անգիր
դիտեմ, բաց միենոյն է, ինձ հաճելի է վերքը գրգռել իմ
սրտում. երբ արիւն է գալիս՝ ցաւը հանգստանում է:

«Թանկագին Վարդ-Մարի

«Մնաս բարեալ... էլ երբէք չեմ տեսնի քեզ... ումբի
կտորը աջ ոտս ջարդեց... վիրաբույժները անդամահատեցին.
չեմ կարող տանել. խիստ շատ արիւն եմ կորցրել... Ամեն
բաւ վերջացաւ... մեռնելու եմ... Օ՛հ, Վարդ-Մարի, իմ թան-
կագին, ինչքան կուզէի քեզ տեսնել գէթ մի րոպէ, մի վաղ-
կեան. ինչպէս կթեթեացնէր ալդ իմ տանջանքները. ինչքան
ժամանակ որ վիրաւոր պարկած եմ եղել ձիւնի մէջ, շարու-
նակ մտածում էի քո մասին... Մի մոռանար ինձ... Ինչի՞ր եր-
բեմն Ժան Մէրլէնին... Խեղճ Մարգրէդէլ մայրս. խեղճ Ֆրեդե-
րիկ հայրիկ. խեղճ Դանիէլ քեռի: Յալտնիր նոցա իմ վիճա-
կը... Ախ, ինչպէս ամենքս երջանիկ կլինէինք, եթէ այս պա-
տերազմը չլինէր»:

Այսուեղ ընդհատուած էր նամակը. Ներքեւ, ինչպէս տես-
նում ես, ուրիշ ձեռքով է աւելացրած.

«Ժան Մէրլէն, Էլզասցի:

«21 գնդի զօրաբաժին, 26 լուսնուար 1870»:

Ես միանգամից կարդացի և նորից սկսալ աղաղակել
կանչել, վերջապէս՝ թուշանալով ընկալ բազկաթուռի մէջ, խոս-
տովանելով, որ ամեն ինչ կորցրել էի. դուստրս, փեսաս, հա-
րենիքս... ամենը... Մնում էր որ ես էլ մեռնեմ:

Իմ ձայնի վերայ վազեց եկաւ Միշէլը կնոջ հետ: Բժիշկ
կանչեցին: Ես ցնորուածի պէս էի, մտածելու անընդունակ.
ականջս խշշում էր, և ինձ թւում էր, որ քնած՝ զարնուրելի
երազ եմ տեսնում:

Բժ. Կարիերի ձայնի վերայ մի փոքր ուշքի եկալ:

— Դուրս տարէք դորան, — ասաց բժիշկը. — որ չտեսնի
այս, շուտով դուրս տարէք:

Ինձ վերցրին. արհամարհանքը տիրեց ինձ և գոչեցի.

— Չեմ ուզում, որ ինձ դուրս տանեն... ուզում եմ այս-
տեղ մնալ... Սա իմ դուստրն է... Դուք որդիք չունիք, որ
հրամաւում էք ինձ դուրս տանել: Ուզում եմ փրկել աղջկաս:
Ուզում եմ պաշտպանել նորան:

— Թողէք, — տխրութեամբ ասաց բժիշկը, — թողէք խեղճ

դժբաղտին: Բայց լուեցէք, — դարձաւ նա ինձ, — ձեր աղաղակը կարող է փութացնել սորա վախճանը:

Ես ընկալ բազկաթռուի վերայ, շշնջալով:

— Չեմ աղաղակի, ձա՛ն ծպտուն չեմ հանի: Միայն թողէք ինձ դորա մօտ, ալ. բժիշկ. հանգիստ կ'լինեմ:

Քանի մի րոպէ անց բժիշկը դուրս գնաց, ներկայ եղողներին նշան անելով, որ դուրս գնան:

Շատերը հետեցին նորան, մի քանիսը միայն մնացին: Ես տեսալ թէ ինչպէս անց ու դարձ էին անում նոքա, ուղղում էին անկողինը, բարձր վեր էին քաշում, հանդարտ խօսելով միմեանց հետ: Խորին լուռութիւն տիրեց... Ներս մտաւ քահանան դպրի հետ... սկսան լատիներէն լեզուով աղօթել...

Պառաւնեքը աղօթում էին ծնկաչոք:

Ամեն ինչ վերջացաւ:

Հինգ ժամի մօտ էր: Մթնում էր: Լամպարը վառեցին: Ես կամաց վեր կացալ և մօտեցալ մահճակալին:

Դուստրս, հրեշտակի պէս սիրուն, կիսաբաց աչքերով, տակաւին շնչում էր. հանդարտ հեկեկալով կանչեցի:

Վարդ-Մարի... Վարդ-Մարի...

Ամեն վարկեան ինձ թւում էր, թէ կնալէ ինձ ու կպատասխանէ:

— Հայրիկ:

Բայց միայն լամպարի լոյսն էր առկալծում նորա դէմքին: Նա պառկած էր անշարժ: Նւ ամեն վարկեան ես լսում էի, թէ ինչպէս նորա շնչառութիւնը թուլանում էր, և տեսնում էի ինչպէս աւտերն ու ճակատը ծածկւում էին մահուան դալիւթեամբ: Վերջապէս, ծանր հառաչելով, նա մի փոքր զլուխը վեր քաշեց, նորա գունատ կապոյտ աչքերը բացուեցան:

Կողքիս կանգնած մի կին սեղանից վերցրեց փոքրիկ հալելին և մօտեցրեց նորա շրթունքներին. սա բոլորովին չը խաւարեց, Վարդ-Մարին մեռաւ:

Չա՛ն չհանեցի, ոչ մի տրտունջ չցայտնեցի, և թող տուի, որ ինչպէս մի երեխայի տանն ինձ միւս սենեակ: Նստալ մի անկիւն, ձեռքերս կախած ծնկներին վերայ. ես բոլորովին նուազել էի: Վերջացրի, Ժօրժ — ամեն բան պատմեցի քեզ:

Հարկաւոր է ալ ևս խօսել մոմերի, դադաղի, գերեզմանատան մասին:

Թաղելուց լետոյ լետ դարձալ իմ փոքրիկ բնակարանը ուր կենում էինք Վարդ-Մարիի հետ, և զգացի իմ կատարեալ միայնութիւնս. չունէի ոչ արեւակիցներ, ոչ հալրենիք, ոչ լոյս և մտածում էի:

«Միշտ մենակ կ'լինես... միշտ... մինչև մեռնելդ...»:

Ոչ... էլ չեմ կարող շարունակել. շատ ծանր է. և պատմեցի ինչ որ կարողացալ:

Յնորոշածի պէս էի. վրէժխնդրութեան ցանկութիւն ծագեց իմ մէջ:

Իմ մէջ չէր, Ժօրժ, այս զգացումը, ալ ևս չէր թշուառ էակի, որ լքուած էր երկնքից ու երկրից, որից մաս առ մաս դուրս էին հանել նորա սիրտը և որ չգիտէր, որտեղ գլուխը լինէ:

Ես աննպատակ թափառում էի փողոցներում. բարի մարդիկ խղճում էին ինձ. պառաւ Օրին կերակրում էր ինձ: Այս ամենը ես լետոյ իմացալ: Այն ժամանակ ես ոչինչ չէի հասկանում. տխուր մտքերը չէին թողնում ինձ. խօսում էի ինքս ինձ, պանդոկի վառարանի մօտ նստած, ձերմակ գլուխս ձեռքերով բռնած և գետնին նալելով:

Աստուծոն չալտնի է, թէ ինչքան ուժգին էր աչն ատելութիւնը, որ եռում էր իմ մէջ ալը միջոցին:

Պառաւ Օրին լսում էր բոլոր խօսածը և այս բարի կ'ինը իմ մասին տեղեկութիւն տուեց ալ. Արանսին:

Մի առաւօտ, երբ ես մենակ նստած էի պանդոկի դահլիճում, եկաւ ալ. Արանսը և սկսաւ խօսել, որ միշտ ինքը աչն կարծիքի է եղել, որ ես աղնիւ, աշխատասէր և բարեխիղճ մարդ եմ եղել, որի վերայ կարելի է բոլորովին վստահել, և լոյս չալտնել որ ալդպէս էլ կ'մնամ մինչև վերջ. որ լաւ և հաստատուն բնաւորութիւն ունեցող մարդը մինչև անգամ ամենադարձուրեւի դժբաղտութիւնների մէջ չպէտք է ինքն իրան դաւաճանի. որ պարտքն ու պատիւը պէտք է ամեն բանից բարձր լինին. ամենալաւ միութարութիւնը կեանքում աչն է, որ մարդ կարող լինի ասել իրան. «չառ տանջուեցալ, ճշմարիտ է, բայց արիւթիւնը ձեռքից չթողի և մաքուր խիղճը օգնական է՛ ինձ. թշնամիներս անգամ պէտք է խոստովանուեն, որ բաղտը անարդար կերպով հալածում է ինձ»:

Նա երկար խօսեց ալս ոճով, անց ու դարձ անելով սե-

հեակում. և ահա ես, որ չկարողացալ լաց լինել աղջկաս թաղմանը, արտասուքով լցուեցի:

Ապա նա ասաց, որ ես պէտք է այդտեղից գնամ, որ պրուսացիներին տեսնելը ցնցել էր ինձ, որ նա ինձ լանձնարարական նամակ կտալ իւր պարիզեան բարեկամներից մէկի վրայ, և կստանամ գոնէ մի փոքր տեղ երկաթուղու վերայ, կամ որ և է ուրիշ մի տեղ. երբ ինձ պաշտօնից կազատեն, կապրեմ խաղաղ, հեռու ալն ամենից, ինչ որ շարունակ լիջեցնում է ինձ դժբաղտութիւններս:

Ես պատրաստ էի կատարել ամենը, ինչ որ նա ցանկանում էր, Ժօրթ. նա իմ լաւն էր ուզում միայն:

Գնացի Պարիզ. և ահա երեք տարի է, ինչ որ ծառայում եմ արևելեան երկաթուղում:

ԼԵ.

Իմ գալս եղաւ պաշարումից լեռ դարձուրելի խառնակութեան ժամանակ. ես վկայ եղալ նորանոր սարսափների, որոնց լիշողութիւնը առաւել ևս հզօրացնում են իմ տանջանքները. ֆրանսիացիք կռուում էին ֆրանսիացիներին դէմ... Ամբողջ քաղաքը բոցի մէջ էր և պրուսացիները վայրենի ու բախութեամբ հրճում էին այս տեսարանով:

—Պարիզն էլ չկալ,—ասում էին նոքա: Պարիզը գոյութիւն չունի:

Այո, ես վկայ էի այս բանին: Ես մտածում էի, որ ամեն բան վերջացած է և սարսափած ասում էի:

—Այսպէս ուրեմն, Նախախնամութեանը հաճելի էր Ֆրանսիան կործանել:

Սակայն դեռ այս չէր բոլորը: Այս թշուառութեանց իբրեւ հետևանք էլզասցիք ու լոտարինգացիք պէտք է գաղթէին: Պրովհետեւ ես ծառայում էի արևելեան երկաթուղում, տեսալ թէ ինչպէս տասնեակ հազար մարդիկ, կանաչք, երեխաներ, ծերեր ուղևորում էին հաց, վաստակելու հայրենիքից հեռու՝ Ալժիրիւ, Ամերիկա—ո՛վ ուր կհանգիպէր:

Խեղճ իմ երկրացիք ինձ ճանաչելով ասում էին.

—Սա մերն է:

Նոցա տեսնելով՝ կարծես փոքր ինչ թեթևանում էի,— Կարծես թէ փլում էր ինձ վերայ հայրենի շունչը: Մենք սղմում

էինք միմեանց ձեռքերը: Ես Նոցա ցոյց էի տալիս հիւրանոցները, զանազան մանր ծառայութիւններ էի անում, ինչ որ անում ենք պատահական բարեկամներին, որոնք բարի կասեն իրանց օգնողների մասին:

Իսկ երեկոյին, վերնադարկի սենեակս լեռ՝ գալով և մտածելով հայրենակիցների մասին, պատահում էր որ բազմաւոր էի, զգալով որ բոլորովին էլ անօգուտ չէի երկրիս վերայ. այս է ալժմեան միակ միսթարութիւնս, Ժօրթ. երբեմն դժուար չորհրհիւ հանդարտ քնում եմ:

Երբեմն, անձրևային, ցուրտ եղանակին, կամ երբ պատահամբ տեսնում եմ նորատի օրիորդի սպիտակ զազազ սպիտակ պսակով զարդարած, տխուր մտքերը նորից տիրում են ինձ... ծառայութիւնիցս դառնալով ձգում եմ վրաս հին վերարկուս և առանց նպատակի վազում եմ փողոցներով մարդկանց մէջ, որոնք զբաղուած են իրանց գործով և ոչ ոքի վերայ ուշք չեն դարձնում: Ես գնում եմ հեռու՝ մէկ Յաղթական դռների մօտ, մէկ Բուսաբանական պարտէզի, և լեռ եմ գալիս չափազանց լողնած: Քուէն մտնելով՝ աշխատում եմ չմտածել անցած պաշտառ օրերի մասին, որովհետեւ այս լիշողութիւնները, քնի մէջ անգամ, ուժգին բարախում են սիրտս, և զարթնում եմ ամբողջապէս քրտնած և գոչելով:

—Ամեն ինչ վերջացած է.— դուստրդ մեռաւ. մնացիր մենակ աշխարհում:

Ապա վեր եմ կենում անկողնից, վառում եմ լապտերը, և լուսամուտը բանում եմ, որ հանգստանամ և ուշքի գամ:

Երբեմն երազի մէջ տեսնում եմ, որ բնակում եմ անտառի տանա Ժանի ու Վարդ-Մարիի հետ: Տեսնում եմ նոցա... խօսում լոցա հետ... ամենքս երջանիկ... Զարթնելով... բաւական է սակաչն խօսել աչն մասին, ինչ որ անցած է և լեռ չէ գալու...

Եւր ես մեռնեմ, ինձ ոչ Ժանի մօտ կթաղեն, ոչ դստերս մօտ: Ամենքս ցրուած կլինինք: Այս բանը շատ ծանր է ինձ համար:

Պարիզցիք մեզ, էլզասցիներիս եղբօր պէս ընդունեցին, նոքա մեզ օգնեցին ինչով կարողացան: Բայց նոքա իրանք այնպէս խիստ տուժեցին, որ կարօտութիւնը ամենուրեք զգալի էր. Վիլլէտ, Շապէլ և ուրիշ արուարձաններում դեռ երկար ժամանակ տիրում էր սովն ու ցուրտը:

Ներկայումս դադարեցնելու անհաշիվ հոսանքն անցաւ գրեթէ ամեն մէկը գործ ունի. կանայք և ծերեր—պատասպարուած են. մանուկներն ուսանում են դպրոցներում:

Բայց դադարեցնելու անհաշիվ հոսանքն անցաւ գրեթէ ամեն մէկը գործ ունի. կանայք և ծերեր—պատասպարուած են. մանուկներն ուսանում են դպրոցներում:

ԼԹ.

Այս տխուր պատմութիւնից լեռն էս կպատմեմ քեզ, Ժօրժ, որ Աստուծոյ չեմ գանգատուում, Աստուած արդարադատ է, և մենք լիովին արժանի էինք այս պատժին: Ո՞վ է մեր թշուառութեանց մէջ մեղաւորը: Մարդս, որ երդուել է Աստուծոյ առաջ սահմանած օրէնքներով վարուել և ոտնակոխ արեց նոցա. որ սպանեց նոցա, ովքեր պաշտպանում էին այդ օրէնքները. և կղզիները աքսորեց հաղարաւոր մերձաւորներին, որոնք կարող էին իրանց խելքով և անդրդուելի բնաւորութեամբ վտանգաւոր լինել: Այս այս մարդուն ինքներս բնորեցինք, մենք քուէ ենք տուել ոչ մէկ, այլ քսան անգամ, ուստի և մենք էլ պարտաւոր ենք պատասխան տալ նորա խնայանքների համար. մենք մոռացանք արդարութիւնն ու պատիւը. մենք այսպէս էինք մտածում, «ամենից առաջ օգուտ. այս մարդուն չաջողում է, պէտք է պաշտպանենք...»:

Երբ ես լուի միայն լիշում եմ, որ քուէ եմ տուել այդ մարդու համար, զիտենալով, որ անարդար եմ վարում, բայց վախենում եմ որ տեղիցս կզրկուիմ, երբ լիշում եմ այս, ասում եմ ինքս ինձ. «Պիեռերիկ, թող Աստուած ներէ քեզ, Ամենը կորցրիր—բայեկամներին, հարազատներին, հայրենիքը, ամեն ինչ... խոստովանիր, որ արժանի էիր այս ամենին: Դու չամաչեցիր այն մարդու կողմը բռնել, որ հարիւր հազար ֆրանսիացիներին նոյնքան թշուառութեանց ենթարկեց, ինչքան և քեզ: Դու քուէ տուիր ուժին արդարութեան դէմ—խոնարհիր նորա առաջ, ինչ որ խոստովանեցար: Ինչպէս բիւր ուրիշներ, դու իրաւունք տուիր այդ մարդուն, որ պատերազմ ցայտնէ, և նա լայտնեց... նա ծաղրում էր քեզ, ընտանիքդ

և քո բոլոր հարեանակիցներդ, իւր արքայական ցեղի շահերի պատճառով, չմտածելով ուրիշ ոչնչի մասին, չընդունելով ոչինչ նախազգուշութիւն: Նա լաղթուեց... Համբերիր և լուր: Մի տրոնջն Նախախնամութեան վերայ քո սեպհական լիմարութեան և անարդարութեան համար:

Ահա թէ ինչ էի ես մտածում:

Թող ուրիշները օգուտ քաղեն իմ օրինակից. թող, ընտրելով իրանց ներկայացուցիչներին, քուէն տան աղնիւ մարդկանց. աղնուութիւն, անշահասիրութիւն, հայրենասիրութիւնը—ամենից վեր են. չափազանց ճարտար մարդիկ չաճախ անաղնիւ են դուրս գալիս, իսկ չափազանց լանդուգները, որոնք օրէնքի դէմ աղաղակելու չեն վախենում, ընդունակ են խնայարեւ այն և կամաւականութեամբ փոխարինել: Այս է իմ ամենալաւ խորհուրդը ֆրանսիացիներին. եթէ նոքա կօղտուեն—ամեն ինչ լաւ կանցնի, մենք լեռ կդարձնենք կորցրածը. եթէ չէ, այն ժամանակ էլզասի ու Լոտարինգի վիճակին կենթարկուին բոլոր նահանգները—մէկը միւսի ետեւից. կղզւանք, բայց ուշ կլինի:

Բայց զերմանացիք էլ կհնձեն այն, ինչ որ ցանեցին: Այժմ նոքա երջանկութեան և փառքի բարձրութեան վերայ են. նոքա դողացնում են ամբողջ Եւրոպան և ուրախանում են դորա վերայ: Մենք փորձով գիտենք, թէ դա ինչ վնասակար է,—նոքա էլ իրանց կարգին կհասկանան այս բանը:

Բիսմարկին չաջողեցին իր ձեռնարկութիւնները, և դերմանացիք պաշտում են նորան. նոքա չեն կամենում հասկանալ, որ այդ մարդը իր նպատակներին հասնելու համար գործ էր դնում նաև այնպիսի միջոցներ, ինչպիսի են խորամանկութիւն, խաբէութիւն, լրտեսութիւն և բռնութիւն... Այսպիսի հիմքի վերայ կառուցած շինութիւնը չէ կարող լինել և չէ լինում ամուր:

Բայց ինչ որ չես ասի զերմանացիներին,—միևնույն է անօգուտ կլինի: Նոքա արբած են իրանց լաղթութիւններով և խելքի չեն գալ մինչև որ Եւրոպան, զրդուած նոցա խնդգնութիւնից և պատուասիրութիւնից, չի վեր կենալ նոցա դէմ և չի ստիպի նոցա ուշքի գալ: Այն ժամանակ և միայն այն ժամանակ նոքա կհասկանան, ինչպէս մենք էլ ստիպուած եղանք հասկանալ, որ եթէ երբեմն ուժը դերակշռում է արդարութեան, այնուամենայնիւ այդ երկար չէ տևում, որովհետև արդարութեան թագաւորութիւնը անսահման է:

«ԱՌՈՒՄԱՅ»-ի խմբագրատանը վաճառուում են

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

աշխատությունները.

1	Աղօթատետր դ. տպ. 1898	— 10
2	Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (սպառուած)	— 15
3	« « ք. տ. դ. տպ. 1891	— 25
4	« « գ. տ. գ. տպ.	— 25
5	Տօմար և տօնացոյց Հայաստ. եկ. ք. տպ. 1894	— 50
6	Պարնոյ դաղթը. պատմական տեսութիւն, 1891	— 10
7	Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ա. Բ. 1780—1834 Սահակ Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893	2 —
8	Դիւան Հայոց պատմ. գիրք Գ. Սիմէօն կաթողիկոսի լիշատակարանը, կենսագրութեամբ, լատելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսրոպեան մրցանակին արժանացած, 1894	7 —
9	Դիւան Հայոց պատմ. գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800 (լուսանկար պատկերով և վիմատիպ կոնդակով) 1899	4 —
10	Դիւան Հայոց պատմ., գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808. (մի վիմատիպ կոնդակով)	4 —
11	Պարզ աստուածապաշտութեան Հայաստանեայց ա. եկեղեցոյ 35 նկարով, Դ. տպ. 1902	— 50
12	Հընից-նորից, հնախօս. ուղևոր. պրակ Ա. 1900	— 30
13	Պատի օրացոյց 1902 ամի, ժամանակ. ԺԴ տարի	— 50
14	Նամակագիրք, 1902	— 50
15	Ծոցի օրացոյց 1902 ամի և լատելուած.—Առողջ ջապահական խոհարարութիւն.	— 15

Բ. թարգմանությունները

16	Հատարմութիւնը ամեն արգելքների լաղթում է Ֆ. Հոֆմանի 1877	— 40
17	Խաւարից դէպի լոյս. Ֆ. Հոֆմ. 1878. (սպառ.)	— 40
18	Դօն Քիշօտ լամանշեցի, Մ. Սէլվի. 1878 (սպառ.)	— 70
19	Գէորդ Ռօլէստօն, 1879 (սպառուած)	— 60
20	Երրորդ ոսկի, առակ Նակիդէի ք. տպ. 1893	— 10
21	Ռօբինզօն (հրատ. Քիֆլ. տպագր. ընկերութ.)	— 60
22	Ձէստէրտօնի ժառանգը, պատկերազարդ, 1882.	1 —

23	Ակտէա. տ. Սիսօեւլալի. 1885 (սպառուած)	5
24	Եան Էրնստ Սմօլեար. Ն. Եանչուկի, 1885 (սպ.)	20
25	Արծուի մասնաժողովը, պրօֆ. Մ. Բողդան. 1892.	5
26	Գիւղի սուրբը, Սվեատոսլով Զէխի, 1892.	10
27	Կեանքի զարգացումը, Գիւկէնի, 1892.	1
28	Դէպի Աթէնք, Հ. Սենկելիշի բ. տպ. 1901.	15
29	Մի կտոր հաց, «Օտապէնկօի բ. տպ. 1901	10
30	Որսորդ, Օ. Շրայնէրի	10
31	Մատուռի աւերակներում, Օ. Շրայնէրի	10
32	Կարա	5
33	Անտառապետ Ֆրեդէրիկ. Էրկման Շատրխանի, 1903	40

Գ. հրատարակութիւնները

34	Ի. Յարութիւնեան, Հայոց զինը 1893.	1 50
35	Իշխ. Կ. Բեհրուդեան, Մուխ, 1893	15
36	Ռանգարէ, Էմաէ, վէպ թարգմ. Յ. Լալայեանի	25
37	Ալբէր Այնօ, Քրդի լեռուն, 1894	25
38	Ճաղարբէղեանց Յ., Հայոց լեզու ա. տ. 1894	30
39	Խրիմեան Հայրիկ, Ժամանակ 1895	15
40	Սպիրի, Այծարած Մօնի թ. Ի. Յարութիւն. 1895	15
41	Բակ. (Բաբգէն վ.) Կիլիկիա 1896.	15
42	Պէտտալոցցի, Լինհարդ և Գերտրուդ. 1896	1 50
43	Էրքիսեղեկ արքեպ. Մուրատեան, Պետրոս Շանչեան պատկերով, 1897	50
44	Թ. Ա. Խոհարարուհի, բ. տպ. ճոխացրած	50
45	Լումայ, զրական հանդէս 1896 Ա. զինը	2
46	Լումայ » » 1896 բ. զինը	2
47	Լումայ » » 1897 ա. զինը	2
48	Լումայ » » 1897 բ. զինը	2
49	Լումայ » » 1898 ա. զինը	2
50	Լումայ » » 1898 բ. զինը	2
51	Լումայ » » 1899 ա. զինը	2
52	Լումայ » » 1899 բ. զինը	2
53	Լումայ » » 1900 ա. զինը	2
54	Լումայ » » 1900 բ. զինը	2
55	Լումայ » » 1901 ա. զինը	2
56	Լումայ » » 1901 բ. զինը	2
57	Լումայ երկամեայ զրական հանդէս 1902—տարեկան	6
58	Յ. Պարոնեան, Միծաղ, պատկերով, 1899	1 25
59	» Արևել. ատամնաբույժ կատակ. 1901	50
60	» Քաղաքավար. ֆնասները, 1901	75
61	Ի. Յարութիւնեան, Ստեփաննոս Պալասեանեան.	25
62	Ն. Էր-Կարապետեան, Խաչատուր Աբովեան	60
63	Ի. Յարութիւնեան, Աշակերտի լուսատեարը	30

64	» Զգացմունքների աշխարհ.	30
65	Յարութիւն Թումանեան, Մելիք Էւսուփ	20
66	Մ. Եօկայի, Ուրացողը, թարգմ. Իս. Յարութ.	20
67	1901 Ա. Էջմիածնի ժձ դաբադարձը	25
68	Եր. Շահաղիդ, Մկրտիչ Էմին	60
69	Կարալէնկօ, Կոյրէրաթիշտը թարգմ. Մուշէ վարդ.	60
70	Զորքորդ դարու հայ եկեղեցին.	20
71	Եր. Շահաղիդ, Նոր-Նախիջևանի ա. Խաչ վանքը	40
72	Ի. Յարութիւնեան, Իմ օրագիրը.	20
73	Մեծ Ներսէս	25
74	Դ. Խաչկոնց, Հայոց կրօն. բանաստեղծութիւնը	65
75	Ի. Յարութիւնեան, Կին վիպագիր, Ե. Սպիրի	10
76	Օր. Ն. Աղանեանց, (թարգմ.) Սև հացեր.	5
77	Կարալէնկօ. Դատաստանի օրը. թարգմ. Մուշէ վարդապետ.	40
78	Կ. Կոստանեանց. Շարժի տարեգրութիւնը Հայոց մէջ. 1902	20
79	Գարեգին վ. Յովսէփեան Մանրանկարչութեան արուեստը Հայոց մէջ 1902	25
80	Ներսէս Մեծի լաջորդներ 1902	25
81	Մ. Գօյրկի. Զէլկաշ. թարգմ. Մուշէ վարդ.	
82	Քուշակ Նահապետի երգերը. Յով. Թաղէոսեան.	
83	Սահակ Պարթև.	
84	Ապուշը ժօրժ էսպալըրի. թարգմ. օր. Նուարդ Աղանեանց.	5
85	Վարժապետը.	
86	Հաղարան Բլբուլ.	
87	Պատմական պատկերներ.	

Մամուլի տակ

88	Դիւան Հայոց պատմութեան. Գիրք 2.	
89	Կանոնք ժողովոց	
90	Համով-Հոտով Գ. Ե. Սրուանձտեանի	
91	Եղիշէի պատմութեան բնագիրը.	
92	Հայ Գրչագիրներ.	
93	Աստուծոյ թէ մամոնային. Լ. Տօլստօյի	
94	Հայերի և զաւակներ. Ի. Տուրգենևի	
95	Յովսէփ կաթ. Հողոյմեցի.	





ՀՀ Ազգային գրադարան



NL0318042

